ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ

(78-րդ տարի) Թիվ-7 (1689) Հուլիս 2024

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhttps://www.droshak.am

Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Առաջնորդող

Մեջքը շտկող արժանապատիվ հայը (էջ 1-3)

2- Հայ դատ

Մարի Հովհաննիսյան
Նիկոլ Փաշինյանի 2024 թվականի ապրիլ-քսանչորսյան ուղերձի և թուրք ժխտողների հռետորաբանության նմանությունները (էջ 4-8)

3- Իրավաքաղաքական

Արփի Աբրահամյան
ՀՀ անկախության հռչակագիրը
ՀՀ Սահմանադրության հիմնաքարն է (էջ 9-11)
Հայաստանը և կոպենհագենյան չափանիշները (էջ 12-14)

4- Հասարակություն

Մանվել Մկրտչյան
Ինքնահարգանքը պետք է լինի հայի կենսափիլիսոփայությունը (էջ 15-17)

5- Տարածաշրջանային

Վահե Սարգսյան
Ռուս-վրացական հարաբերություններն այցագրային և հաղորդակցության ոլորտներում (էջ 18-25)
Արամ Շահնազարյան
Իրանի Հարավկովկասյան քաղաքականության հնարավոր տեղաշարժերը (էջ 26-28)

6- Երիտասարդական

Յովհաննէս Ղազարեան, Լատուշ Սիմոնեան, Լիլիթ Եկմալեան
Ազրպէյճանի նկատմամբ Վրաստանում առկայ ընկալումները (էջ 29-32)

Նարօտ Նորամանեան
Խաւիարային դիւանագիտութիւն. Ազրպէյճանի ազդեցութիւնը Եւրոպայի մէջ (էջ 33-35)

7- Տնտեսական

Թադևոս Ավետիսյան
Սոցիալական անարդարության և տնտեսական անվտանգության խորացող ռիսկերը (էջ 36-37)

8- Բնապահպանական

Արմեն Վարդանյան
Հայաստանի հոշոտված անտառները և պետության մարդկային կապիտալը (էջ 38-41)

9- Ընթերցումներ

Անի Բաբայեան
«Զաքար Եօլեան «ԱՆՑԵԱԼԻ ՅՈՒՇԵՐ»» ԳԻՐՔԸ (էջ 42-43)

10- Ընկերական զրույցներ

Վրէժ-Արմէն
Պատկանելութիւնը՝ հիմքը երջանկութեան (էջ 44)

Մեջքը շտկող արժանապատիվ հայը

Այսն թվականի հունիսի 22-ին Հանքավանում տեղի ունեցած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հավաքի ժամանակ Նիկոլ Փաշինյանն ասել է. «Մեր հազարամյա պատմության մեջ առաջին անգամ է, երբ մեր ժողովրդի գաղափարախոսությունը կարող է դառնալ պետական գաղափարախոսություն, մենք այսպիսի պատմական պահ երբեք չենք ունեցել: Սովորաբար մեկուսացած էլիտաներն իրենց ստեղծած կամ ուրիշների կողմից ստեղծված իրենց որդեգրած գաղափարախոսությունները փորձել են ներդնել ժողովրդի շրջանում, հաճախ պարտադրել են պետական, վարչական լծակներով, նույնիսկ՝ բռնի ուժով»: Այնուհետև նա շարունակում է. «Ժողովրդի ուղերձն իր էլիտարներին և կառավարող մեծամասնությանը հետևյալն է՝ կարո՞ղ եք ստեղծել պայմաններ, որ ուղղակի ապրենք, պարզապես լավ ապրենք: Այսինքն, ոչ թե ինչ-որ խաչ լինի մեր վզին դրած, որը մենք պետք է Գողգոթայի ճանապարհով քարշ տանք դեպի վերև կամ ներքև, կարո՞ղ եք ստեղծել միջավայր, որ պարզապես ապրենք, էրեխեք ունենանք, էրեխեքը երջանիկ լինեն, բարեկեցիկ լինեն ու մանավանդ որ դրա համար անհրաժեշտ առաջնային գործիքն ունենք՝ պետությունը»:

Ըստ Հայաստանի այսօրվա ղեկավարի՝ հայոց հազարամյակների պատմության ընթացքում սեփական քաղաքական էլիտաների և արտաքին ուժերի պարտադրանքով հայ ժողովուրդն անիմաստ պայքարել ու տառապել է, և առաջին անգամ այսօրվա «հայ էլիտայի» քաղաքական առաջնորդությամբ սխալը կարող է շտկվել: Առաջնորդող ուժի քաղաքական առաքելությունն է իր «Իրական Հայաստանի» գաղափարախոսությունը դարձնել պետական գաղափարախոսություն՝ դրանով իրականացնելով ժողովրդի ցանկությունը. չպայքարել, չմաքառել, պարզապես ապրել, ապրել լավ, բարեկեցիկ և երեխեքը լինեն երջանիկ:

Մեր պատմության մեջ նույնը տեղի է ունեցել 100 տարի առաջ, երբ բոլշևիկա-ադրբեջանական սրերի վրա Հայաստանում իշխանության բերված հեղկոմը սխալ համարեց և մերժեց հայ ժողովրդի ապրած ողջ պատմությունը, ցեղասպանված ժողովուրդը և նրան առաջնորդող ուժերը մեղադրվեցին պայքարելու և տառապելու համար և բարեկամ հռչակված երեկվա ցեղասպաններին, հայրենիքի մեծ տարածքներ զիջելու դիմաց ժողովրդին խոստացան խաղաղ կյանք ու եղբայրություն:

Մյուս կողմից ներկայացվում է, թե արտաքին ուժերի ցանկությունն էր, որ հայ ժողովուրդը տառապի, իսկ իրենք գան և փրկեն հայությանը: Հարյուր տարի առաջ բոլշևիկների հայ դրածոների ներկայացմամբ կեղծ փրկիչներն էին միջազգային իմպերիալիստները, իսկ ներկայիս արևմտյան դրածոների բնութագրմամբ այդ դերում Ռուսաստանն է:

Շատ նման չե՞ն իրար այս մտածողությունն ու հարյուրամյա հեռավորությամբ կրկնված քաղաքական գործընթացները:

Ժողովրդի ինքնապաշտպանության գիտակցությունն ու կամքը կոտրելու, հայրենի տարածքները հանձնելու, թշնամու ցանկացած այլ պահանջները կատարելու դիմաց այսօրվա իշխանությունը վաղը հոտի վերածվող զանգվածներին խոստանում է խաղաղ ուտելու և բազմանալու հնարավորությունը:

Այսօրվա խառնակ աշխարհում բոլորը պայքարի մեջ են իրենց ունեցածը պահպանելու, ուրիշների ունեցածը խլելու համար, իսկ Հայաստանի ղեկավարությունն հպարտ է ու գոհ իրենից, որ երկիրը տանում է դեպի նորանոր պարտությունների և ազգային ապագայի խորտակման:

Կասկած չի կարող լինել, որ նման ապազգային մտածողությունն ու գործունեությունը պայմանավորված է միայն արտաքին թելադրանքով: Արտաքին ուժերի նյութական, քարոզչա-քաղաքական աջակցությունը վճռորոշ եղավ 2018 թվականին Հայաստանում իրականացված գունավոր հեղափոխության ժամանակ և գնալով ավելի ակնհայտ է դառնում ներկայումս: Օտարերկրյա գործակալներն ու «խորհրդականները» այսօր վխտում են Հայաստանի իշխանական միջանցքներում, պաշտոնական զանազան հաստատություններում, երկրի վտանգված սահմաններին: Հաշվարկելով, թե իրեն անհրաժեշտ է հաղթահարել ռուսական ազդեցությունը, Հայաստանի իշխանությունը վերջինիս հակադրելու համար երկրի դռները լայնորեն բացեց Արևմուտքի և թուրք-ադրբեջանական տանդեմի առջև: Չկարողանալով հաղթահարել Ռուսաստանի առարկայական ազդեցությունը տնտեսական, էներգետիկ և այլ գործոնների պատճառով, մյուս կողմից խորացնելով կախվածությունը հակառակ բևեռից՝ Հայաստանի ղեկավարն ու նրա բախտախնդիր թիմը ոչ միայն դարձան այս երկուսի միջև մանևրող խամաճիկներ, այլև երկիրը վերածեցին անկայունության օջախի, որտեղ գնալով սրվելու է զանազան ուժերի մրցակցությունը:

Անհավասարակշիռ, քաղաքականապես կախյալ ու ազգային-պետական գործչին հատուկ պատասխանատվության զգացումից զուրկ ղեկավարը գիտակցաբար և անգիտակցաբար Հայաստանը վերածեց աշխարհակարգերի բախման գոտու: Ի դեպ, նույն թուրք-ադրբեջանական տանդեմը, հեռացնելով Հայաստանին դեպի հակառուսականության դաշտ, ինքը հավասարակշռում է իր քաղաքականությունը երկու հակադիր բևեռների միջև և հրաշալի օգտագործում է Ռուսաստանի և Արևմուտքի հետ հարաբերություններն ընդդեմ Հայաստանի:

Ռուսաստանի դեմ տարածքային և գաղափարախոսական հակամարտության մեջ Արևմուտքը նահանջելով Ուկրաինայում, ձախողվելով Ղազախստանում, այսօր բարենպաստ է համարում ռևանշի հասնելը Անդրկովկասում: Վրաստանի ինքնիշխանության մակարդակի բարձրացումը, ստիպել է, որ Անդրկովկասի համար պայքարը տեղափոխվի Հայաստանի տարածք: Արցախն ու հարակից տարածքները հանձնած, նորանոր զիջումների պատրաստ Հայաստանի կախյալ իշխանությունը թուրք-արևմտյան ճամբարի համար գտնված հնարավորություն է Հայաստանի կործանման հաշվին հասնելու Ռուսաստանը շրջանցող և Արևմուտքն Արևելքին կապող Զանգեզուրյան միջանցքի ձեռքբերման, տարածաշրջանում հակառուսական և հակաիրանյան կայուն ֆորպոստի ձևավորման համար: Բռնիշխանական վայրագ գործունեության վրա աչք փակելու և իշխանության պահպանումը երաշխավորելու դիմաց Հայաստանի ղեկավարներից պահանջվում է գործնական քայլերով և առանց ձգձգելու իրականացնել ռազմավարական տարածքների զիջման գործընթացը, Ռուսական և ՀԱՊԿ ռազմուժի դուրս բերումը երկրից ինչպես և հստակ քայլերով փաստելը, որ մնում է Արևմտյան ճամբարին հավատարիմ հակառուսական ուժ:

Նույն պահանջին հետևելով՝ Հայաստանի իշխանությունը փաստացի հրաժարվել կամ ձևական բնույթ է հաղորդել ավանդական դաշնակիցների և պոտենցիալ դաշնակիցների հետ հարաբերություններին: Փոխարենը թշնամի հարևանների ագրեսիվ հավակնություններին պատասխանում է լռությամբ, քծնանքով և կամակատարությամբ: Էրդողանի հեռախոսազանգը բավական եղավ, որպեսզի Հայաստանի իշխանությունը ճանաչեր Պաղեստինի անկախությունը, երբ վերջինս երբեք չի խոսել այն մասին, որ Իսրայելն Ադրբեջանի օգտին մեծ դեր խաղաց 2020 թվականի պատերազմի ժամանակ և այսօր էլ շարունակում է Հայաստանի դեմ զինել թշնամի հարևանին: Հայաստանի շահը չհաշվարկելով՝ արտաքին ուժերի թելադրանքով, հայ դրածոները հայտարարությամբ պաշտպանեցին Ուկրաինայի ամբողջականությունը, այն դեպքում, երբ այդ երկիրն անկախացման շրջանից սկսած Արցախի հարցում ունեցել է հստակ հակահայ դիրքորոշում, միջազգային հարթակներում մշտապես պաշտպանել է Ադրբեջանին, մատակարարել է վերջինիս զենք, 90-ականների սկզբից ուկրաինացի դիպուկահարները կռվել են Արցախի դեմ: Կարիք չկար, որ Հայաստանի իշխանությունը երբևէ հակաուկրաինական քայլեր աներ, բայց եթե նա անկախ լիներ, կկարողանար շարունակել պատերազմող կողմերի նկատմամբ չեզոքությունը: Արևմուտքի շահերի կույր կամակատարը լինելու և իր հակառուսականությունը փաստելու հաջորդ քայլը Վրաստանի տարածքային ամբողջականությունը ճանաչելն էր, այն դեպքում, երբ 2020 թվականին Ադրբեջան զենք տեղափոխող թուրքական ինքնաթիռներն ազատորեն թռչում էին Վրաստանի վրայով, իսկ Հայաստան զենք ներկրելու համար Վրաստանի ճանապարհները փակ էին: Ոչ խամաճիկ իշխանությունը այս հարցում ևս կշարունակեր պաշտպանել նախկին չեզոքությունը: Վտանգավոր արտաքին քաղաքականության կողքին Հայաստանի իշխանությունը գործնական ու կոնկրետ քայլեր է անում հենց Հայաստանի և հայ ժողովրդի դեմ:

Ի՞նչ կաներ ազգությամբ թուրք կամ ադրբեջանցի մի ղեկավար Հայաստանում, եթե իր ազգակիցների հետ իշխեր Նիկոլ Փաշինյանի փոխարեն. ա) Արցախը, ազատագրված տարածքների հետ կհանձներ

Ադրբեջանին, բ) Ադրբեջանին կհանձներ ռազմավարական դիրքեր և տարածքներ Հայաստանից, գ) կարգելեր Արցախի վտարանդի իշխանության, քաղաքական-հասարակական կազմակերպությունների գործունեությունը Հայաստանում, կձերբակալեր, կհալածեր Արցախի քաղաքական-ռազմական գործիչներին, դ) կխզեր կապերը երկրի թիկունքն ամրապնդող դաշնակիցների հետ, ե) Հայաստանից դուրս կբերեր ռուսական ուժերին և կփոխարիներ դրանք ՆԱՏՕ-յական երկրներին պատկանող զինվորականությամբ, զ) կժխտեր և կհրաժարվեր հայոց ցեղասպանության պահանջից, է) հակաթուրքական և հակաադրբեջանական բնույթի պատմական և քաղաքական բոլոր փաստերը, քննադատություններն ու պահանջները դուրս կբերեր Հայաստանի գիտական–կրթական, գեղարվեստական ու պետական պաշտոնական գրականությունից և փաստաթղթերից, ը) կհրաժարվեր և կխզեր կապերը Սփյուռքի հետ, թ) կհալածեր Հայ Առաքելական եկեղեցուն, ժ) կհալածեր ազգային օրակարգ ունեցող ներքին ուժերին, կպայքարեր հայկական ինքնությունը հաստատող և զարգացնող երևույթների և հաստատությունների դեմ, ի) կպառակտեր ազգային միասնականությունը, լ) կաղավաղեր ու կայլասերեր ազգի բարոյական նկարագիրն ու ներքին ամրությունը պայմանավորող արժեքները: Իսկ մի՞թե նույնը չի անում Նիկոլ Փաշինյանն իր «գունավոր» թիմի հետ:

Փաշինյանը հասկանում է, որ իր ազգադավ ծրագրերը ոչխարի հնազանդությամբ ընդունելու համար պետք է նախ մտային ու բարոյական առումով փոխի հայ ժողովրդին և դա համարում է իր թիմի առաքելությունը: Այդ իմաստով, իհարկե, նրա համար մեծ ցնցում էր Սրբազան շարժումը, որը փաստեց, որ հրապարակում կամ հրապարակից դուրս հայ ժողովուրդը մերժում է ազգին զոմբիացնելու իր նպատակները: Փաշինյանը հասկանում է, որ կարելի է ուժային կառույցների միջոցով և արտաքին ուժերի բարոյական ու այլ աջակցությամբ ձգել իր իշխանության ժամանակն ինչ-որ չափով, բայց մի ողջ ժողովրդի հավերժ պահել գետնին տապալած ու ծունկը կոկորդին դրած վիճակում անհնար է: Նա հաշվարկ է անում անորոշ ժամանակի վրա, և սարսափում է այն մտքից, որ փողով ու շանտաժով իր իշխանության տակ պահվող կամակատարների թիմը մի օր կփլուզվի, իսկ ուժայինները կհրաժարվեն անասնաբար վերաբերվել իրենց մայր ժողովրդի հետ:

2024 թ. հունիսի 22-ին Հանքավանում ունեցած իր ելույթում Փաշինյանը ազդարարում է. «Հերթական ընդդիմադիր շարժումը ձախողվեց»:

Նա նման հայտարարություն է անում, որպեսզի բարոյալքված թիմին և իրեն ծառայող ենիչերիներին խրախուսի: Իհարկե, Սրբազան շարժումը հրապարակային լայն գործունեությունը կվերսկսի գալիք սեպտեմբերից: Ո՞ւր կհասնի այս շարժումը, ի՞նչ զարգացումներ կունենա, դժվար է ասել: Ակնհայտն այն է, որ այսօր ժողովրդի բացարձակ մեծամասնությունը զզված է առկա վիճակից, նրա մի մասը պատրաստ է փողոց դուրս գալու, իսկ երիտասարդ ու ամուր կորիզը մինչև վերջ պայքարելը համարում է իր առաքելությունը: Փոխվում է երկիրը, և փոխվում է աշխարհը: Նիկոլ Փաշինյանը տեսնում է իր գաղափարական եղբայրների ֆիասկոն Վրաստանում ու Ուկրաինայում: Իհարկե, աթոռը պահելու համար նա վաղը կարող է դառնալ ռուսամետ, մյուս օրը՝ Եհովայի վկա, հաջորդ օրը՝ տրանսգենդեր: Բայց նրա դեմ հառնող իրական ճակատը դրսում չէ, այլ մեջքը շտկող արժանապատիվ հայն է, որը երբեք չի ներելու այն ավերը, որ գործել է Նիկոլը, նման նրան, ինչ իրենից առաջ արել էին Պետրոս Գետադարձը, Ավիսը կամ Թալեաթը:

Նիկոլ Փաշինյանի 2024 թվականի ապրիլքսանչորսյան ուղերձի և թուրք ժխտողների հռետորաբանության նմանությունները

Մարի Հովհաննիսյան
Քաղաքագիտության մագիստրոս

Հայոց ցեղասպանության ժխտումը մշտապես եղել է Թուրքիայի թե՛ արտաքին, թե՛ ներքին քաղաքականության հիմնական բաղկացուցիչներից մեկը: Թուրքիայի բոլոր ժամանակների իշխանությունները՝ սկսած դեռևս Աբդուլ Համիդ Երկրորդից[1], ջանք ու եռանդ չեն խնայել սեփական քաղաքացիների շրջանում հայերի նկատմամբ ատելություն սերմանելու, կատարված կամ ծրագրվող բռնությունները որպես հայերից եկող սպառնալիքները ոչնչացնելու անհրաժեշտ միջոցառումներ բնութագրելու, երբեմն նաև իրենք իրենց զոհ ներկայացնելու համար: Տարբեր երանգավորումներով, բայց հիմնականում նույն մտադրությամբ Թուրքիան ժխտողական քաղաքականություն է վարել նաև արտաքին աշխարհի հետ: Հայերը ներկայացվել են որպես թուրքական պետականությանը սպառնացող տարր, անջատողականներ, այլ երկրի շահերը սպասարկող դավաճաններ:

Թուրքիայի պատմությանը քիչ թե շատ ծանոթ ցանկացած գիտակ մարդ կվիաստի, որ Թուրքիան միշտ է ժխտել Հայոց ցեղասպանությունը, իսկ այն խորապես ուսումնասիրող մասնագետները բազմիցս խոսել են Թուրքիայի բացահայտ և ծպտյալ ժխտողականության մասին: Ոլորտի շատ մասնագետների գնահատմամբ՝ Հայոց ցեղասպանությունը, լինելով 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը, նախադեպային էր ոչ միայն իրագործման յուրահատկությամբ, հմտությամբ և դաժանությամբ, այլև պատասխանատուների կողմից այն ժխտելու արհեստավարժությամբ, շարունակականությամբ և ծավալային ու բովանդակային ընդգրկողունակությամբ: Թուրքական ժխտողական քաղաքականությունը շարունակականությամբ և տարածվածությամբ ժամանակի ընթացքում դարձել է անպատժելիության խորհրդանիշ և օրինակ այլոց համար: Պատմաբան, սոցիոլոգ, Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիայի համահիմնադիր և առաջին տնօրեն Հելեն Ֆայնի կարծիքով Հայոց ցեղասպանությունը ոչ միայն ոճրագործության իրագործման, այլև անպատժելիության օրինակ է եղել[2]: Հայոց ցեղասպանության ժխտումը ձևով ու կիրառելիությամբ հաճախ օրինակ է ծառայել հաջորդող այլ ցեղասպանությունների կազմակերպիչների համար՝ ժխտողական քաղաքականություն մշակելու և իրականացնելու առումով: Հայտնի ցեղասպանագետ, Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիայի համահիմնադիր և ցեղասպանությունների ժխտման ուսումնասիրությամբ զբաղվող առաջամարտիկներից երջանկահիշատակ Ռոջեր Սմիթի գնահատմամբ ցեղասպանության ժխտման պատմության մեջ ամենաամոթալի և ամբողջական օրինակը Հայոց ցեղասպանության ժխտումն է[3]:

Հայոց ցեղասպանության ժխտումն աննախադեպ է ոչ միայն Թուրքիայի բոլոր ժամանակների իշխանությունների մշակած և հաջողությամբ կիրառած թեզերի և մեխանիզմների առումով: Երբ ցեղասպանությունը ժխտում է այն իրագործած պետությունը, մարդկանց խումբը կամ դրանց իրավահաջորդ իշխանությունները, թեև անընդունելի, բայց ինչ-որ առումով հասկանալի է: Ոճրագործը չի ուզում իր մեղքն ընդունել, քանզի ակնհայտ է, որ մեղքն ընդունելուց հետո գալու է նաև պատասխանատվության անխուսափելիությունը: Բայց երբ արխիվային փաստաթղթերով ապացուցված և իր ժամանակին երրորդ կողմ հանդիսացող երկրների դիվանագիտական զեկույցներում արձանագրված ոճրագործությունը ժխտվում է ցեղասպանության զոհ դարձած ազգի պետության ղեկավարի կողմից, այն ոչ միայն անընդունելի է, այլև անհասկանալի, անըմբռնելի, աներևակայելի:

Հայոց ցեղասպանության իրագործումից ի վեր չի եղել որևէ հայ, ով բացահայտ կամ քողարկված ձևով կասկածի տակ դնի Հայոց ցեղասպանության իրողությունը: Երբ Հայոց ցեղասպանությունը ժխտում են ազգությամբ ոչ թուրքեր, ոլորտի մասնագետները անմիջապես փորձում են որևէ կապ գտնել ժխտողի և Թուրքիայի իշխանությունների, հատուկ կազմակերպությունների կամ պարզապես թուրք անհատների հետ, քանզի որևէ ողջամիտ ու արդարադատ մարդ, ով կուսումնասիրի Հայոց ցեղասպանությանը վերաբերող արխիվային փաստաթղթերը, ժամանակի դիվանագետների զեկույցները, և չի ունենա որևէ անձնական կամ ազգային շահ կամ վախ, պարզապես չի ժխտի Հայոց ցեղասպանությունը: Ցեղասպանությունից հետո, և հատկապես 1965 թվականից՝ Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցից ի վեր, երբ աշխարհասփյուռ հայկական համայնքներում, առաջին անգամ նաև Խորհրդային Հայաստանում կազմակերպվեցին Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակման զանգվածային միջոցառումներ, ակտիվացան նաև թուրքական շրջանակները, փորձեցին ժխտողական իրենց քաղաքականության մեջ ներգրավել նաև օտարազգիների՝ իրենց «փաստարկներն» արժանահավատ դարձնելու նպատակով: Օտարազգիների շուրթերով Հայոց ցեղասպանությունը ժխտելու քաղաքականությունն իրագործելու համար թուրքական իշխանություններն ահռելի ֆինանսական և մարդկային ռեսուրս ներդրեցին: Թուրքիայի ֆինանսավորմամբ աշխարհի տարբեր երկրներում բացվեցին կենտրոններ, որոնց նպատակն էր ստեղծել թուրքական թեզերը շրջանառող օտարալեզու գրականություն և, ինչն ամենակարևորն էր՝ այդ ամենը իրականացնել օտարների ձեռքով[4]:

Հայոց ցեղասպանության ժխտումն իր ծավալներով ու կիրառման մեթոդներով անգերազանցելի էր և աննախադեպ: Սակայն մինչև 2024 թվականի ապրիլը այն բացահայտ կամ քողարկված ժխտվել է գլխավորապես թուրքերի կամ նրանց հետ որևէ կերպ շաղկապված անձանց կողմից: Ցավալի է, բայց փաստ, որ 2024 թվականին Հայոց ցեղասպանությունը քողարկված ձևով ժխտվեց նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի պաշտոնը զբաղեցնող անձի՝ Նիկոլ Փաշինյանի կողմից: Այս իմաստով ևս Հայոց ցեղասպանության ժխտումը դարձավ աննախադեպ, քանզի ցեղասպանությունների պատմության մեջ չի եղել գեթ մի երկիր, մարդկանց մի խումբ, մի որևէ կազմակերպություն կամ անհատ, որ լինի ցեղասպանված ազգի ներկայացուցիչ, այն էլ բարձրաստիճան պաշտոնյա, այն էլ երկրի ղեկավար և թեկուզ անուղղակի ու քողարկված ձևով, բայց ժխտի վաղուց արդեն փաստագրված ոճրագործությունը:

2024 թվականի ապրիլքսանչորսյան իր ուղերձում Նիկոլ Փաշինյանն ուղղակիորեն կրկնում է թուրքական ժխտողական թեզերից մի քանիսը: Եթե Փաշինյանի ուղերձը պայմանական ձևով բաժանենք երեք մասի՝ մուտք կամ նախաբան, բովանդակություն և վերջաբան, ապա մուտքի խոսքից անմիջապես հետո, բովանդակային մասի հենց առաջին պարբերությամբ, առաջ է քաշվում թուրք ժխտողների այն թեզերից մեկը, համաձայն որի հայ ժողովուրդը ինքն է մեղավոր, որ իրեն ցեղասպանել են: Փաշինյանն ասում է,- «***Այս մասշտաբային ողբերգությունը տեղի ունեցավ Առաջին աշխարհամարտի տարիներին, և պետականություն չունեցող, պետականությունը հարյուրամյակներ առաջ կորցրած, պետականության ավանդույթն, ըստ էության, մոռացած հայ ժողովուրդն աշխարհաքաղաքական խարդավանքների ու սին խոստումների զոհ դարձավ՝ զուրկ լինելով առաջին հերթին աշխարհն ու նրանում գործող կանոններն իրեն հասկանալի դարձնելու ընդունակ քաղաքական մտքից***»:[5]

Մինչ Նիկոլ Փաշինյանի այս ուղերձը, այսօրինակ հայտարարություններ, մեղադրանքներ հնչեցրել են միայն ու միայն թուրք ժխտողները: Ահավասիկ, այս թեզի ակունքները պետք է փնտրել Աբդուլ Համիդ 2-րդի կառավարման ժամանակաշրջանում հայերի դեմ իրագործված բռնությունների ժխտման համար հորինված հերյուրանքներում: 1894-96 թթ. Գյումուշհանե, Էրզրում (Կարին), Բիթլիս (Բաղեշ) և Վան նահանգներում հայերի դեմ իրականացված կոտորածները հետաքննող հանձնաժողովի նախագահ նշանակված Սաղեդդին փաշան հայերին ուղղված իր խոսքում ասում է հետևյալը. ***«Դուք սխալ ուղով եք գնում՝ ձեզ սպասող մահվան վրանագով: Այստեղ (ես՝ որպես Օսմանյան պետության ներկայացուցիչ), տեղեկացնում եմ ձեզ: Հրաժարվեք, մի՛ շեղվեք այն ուղուց, որին հետևել եք վերջին չորս դարերի ընթացքում. հրաժեշտ մի՛ տվեք հավատարմությանը: Դուք կզոջաք դրա համար: Եվ փասպից հետո զոջումներն անօգուտ են: Այն, ինչ դուք ցանկանում եք և հույս ունեք [ստանալ], [հաջողության] [ամենաչնչին] հնարավորություն չունի, որովհետև այն չի համապատասխանում եվրոպական քաղաքական հավասարակշռությանը: Նրանց մեծամասնությունը, ում հետ դուք նույն ռասայից եք, մեր երկրում չէ, այլ բնակվում է Իրանում կամ Ռուսաստանում: Այս [փասպը] հաշվի առեք: Մի՛ ներքաշվեք հապճեպ գործողությունների մեջ: Եթե դուք այդպես անեք, մենակ կմնաք քրդերի հետ...»***[6]:

Քամուրան Գյուրուն

Եթե վերոբերյալ երկու հայտարարությունները զուգադրենք և չբացահայտենք դրանց հեղինակներին, ապա բովանդակային շարունակականությունն ու փոխլրացումը պարզապես ակներև է: Այն է՝ եղավ քաղաքական կողմնորոշման առումով **«զգուշացում և սին հույսերից հրաժարվելու սթափության կոչ»** (թուրք պաշտոնյա Սադեդդին փաշայի կողմից), որին ականջալուր չլինելու հետևանքով հայերը «**դարձան սին խոստումների զոհ**» (ՀՀ ներկայիս ղեկավար Նիկոլ Փաշինյան): Ավելին, այս թեզը լայնորեն կիրառվել է բոլոր ժամանակներում: Թուրք քաղաքական գործիչ Քամուրան Գյուրունը իր՝ «Հայկական թղթապանակ. անմեղության առասպելը բացահայտվել է» գրքում գրում է հետևյալը. ***«Հայերը ստիպված էին գաղթել, քանի որ համալրել էին թշնամու շարքերը...»***[7]: Այն «արդիական» է նաև այսօրվա Թուրքիայում: 2019 թվականին Թուրքիայի նախագահի տեղեկատվության վարչությունը անգլալեզու կայք է ստեղծել, որի՝ «1915 թվականի իրադարձությունները» բաժնում գրված է հետևյալը. ***«19-րդ դարի 2-րդ կեսից հայկական մի շարք ազդեցիկ կազմակերպություններ աջակցություն էին ցուցաբերում Ցարական Ռուսաստանին, որի նպատակը Օսմանյան կայսրության բաժանումն էր: Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում հայկական ռադիկալ խմբերն առանց վարանելու միացան ռուսական բանակին՝ էթնիկ միասեռ Հայաստան ստեղծելու համար»***[8]:

Թուրքական այս թեզի փաստազուրկ ու անհեթեթ լինելուն մանրամասն անդրադարձել է նաև Հայոց ցեղասպանության ուսումնասիրության ռահվիրա երջակահիշատակ Վահագն Դադրյանն իր՝ **«Հայոց ցեղասպանության թուրքական ժխտման հիմնական տարրերը. խեղաթյուրման և կեղծման դեպքի ուսումնասիրություն»** գրքում՝ հիշեցնելով, որ «հայկական խոշոր քաղաքական կուսակցությունը՝ Դաշնակցությունը, դեռևս 1914 թվականի օգոստոսին հրապարակայնորեն հայտարարել էր օսմանյան պետությանն իր հավատարմության մասին և, որպես այդ պետության քաղաքացիներ երդվել՝ պայքարել երկրի պաշտպանության համար, եթե կառավարությունը, հակառակ բոլոր խորհուրդների, որոշի միջամտել պատերազմին»[9]:

Թուրքիայի ազգային և պետական շահերը ներկայացնող անձինք, վստահաբար, ունեն իրենց համար հիմնավոր պատճառներ արխիվային փաստաթղթերով բացահայտվածը չընդունելու, իրենց կեղծ թեզերը առիթ-անառիթ շրջանառության մեջ դնելու համար: Սակայն, որո՞նք են հայ պաշտոնյայի, այն էլ երկրի առաջին դեմքը համարվող անձի պատճառները թուրքական այս սին թեզն առաջ մղելու համար:

Ցավալիորեն, վերոբերյալը միակ մտահոգիչ հատվածը չէ Փաշինյանի ուղերձում: Հաջորդիվ ՀՀ վարչապետի պաշտոնը զբաղեցնող անձը մեղադրում է ցեղասպանություն վերապրած հայությանը հոգեցնցման մեջ: Ուղերձում բառացիորեն ասվում է հետևյալը.

«Մեծ եղեռնը համազգային ողբերգություն և հոգեցնցում դարձավ մեզ համար, և առանց չափազանցության մեր սոցիալ-հոգեբանությունը կանխորոշող գործոն է: Մենք այսօր էլ աշխարհը, մեր միջավայրը, ինքներս մեզ ընկալում ենք Մեծ եղեռնի հոգեցնցման կրիրապեկրող ազդեցության ներքո և չենք հաղթահարել այդ հոգեցնցումը:

Սա նշանակում է, որ լինելով միջազգայնորեն ճանաչված պետություն՝ մենք հաճախ այլ երկրների, միջազգային հանրության հետ հարաբերվում ու մրցակցում ենք հոգեցնցման վիճակում, և այս պարճառով երբեմն չենք կարողանում ճիշտ գնահատել իրողություններն ու գործոնները, պարմական ընթացքներն ու կանխատեսվող հորիզոնները:

Գուցե նաև սա է պարճառը, որ մենք արանում ենք նորանոր ցնցումներ՝ Հայոց ցեղասպանության հոգեցնցումը վերապրելով արդեն որպես ժառանգություն և որպես ավանդույթ»[10]:

Սա ևս թուրքական ժխտողական քաղաքականության մի մաս է: Ըստ տեսաբան Սթենլի Կոհենի՝ գոյություն ունի ժխտման երեք հիմնական դրույթ. *բառացի, մեկնական և առնչակից-եզրակացության հանգող*[11]: Բառացի ժխտումն այն «պնդումն է կամ դրույթը, որ ոչինչ չի եղել կամ այն, ինչ ասում եք, ճիշտ չէ»: Ըստ Կոհենի՝ ժխտման այս տեսակը միտված է ժխտելու իրողությունը կամ իրողության իրազեկությունը: Հայտարարություններն, ինչպիսիք են՝ «այստեղ ոչինչ չի պատահել, ոչ մի կոտորած չի եղել, նրանք բոլորը ստում են, մենք ոչինչ չենք նկատել, դա չէր կարող տեղի ունենալ առանց մեր իմացության», բառացի ժխտողականության ցանկից են: Բառացի ժխտումը լայնորեն կիրառվել է համիդյան ժամանակաշրջանից, այնուհետ կիրառվել է երիտթուրք առաջնորդների կողմից և շարունակվել տասնամյակներ:

Կոհենի տեսության համաձայն՝ մեկնական ժխտողականությունը չի հերքում «հում փաստերը»՝ այն, որ ինչ-որ բան տեղի է ունեցել: Խուսափելով իրադարձությունները կոչել իրենց անուններով՝ մեկնական



ժխտողականություն կիրառողները հայտարարում են. «Սա բնակչության փոխանակում էր, այլ ոչ թե էթնիկ զտում», «Այն, ինչ տեղի ունեցավ, այն չէ, ինչ դո՛ւք եք կարծում, այն չէ, ինչ թվում է, այն չէ, ինչ դո՛ւք եք այն անվանում»[12]: Թուրքական ժխտողական մշակույթում մեկնական ժխտման օրինակները շատ են. «Դա քաղաքացիական պայքար էր», «Դա ցեղասպանություն չէր, այլ՝ վերաբնակեցում», «Ցեղասպանության մասին օրենքը չի կարող հետադարձ ուժ ունենալ» և այլն:

Հաջորդ տեսակը՝ առնչակից-եզրակացության հանգող ժխտումը, որպես Սթենլի Կոհենի կողմից հորինված նոր եզրույթ, ներառում է մի քանի գաղափարներ: Դրանցից մեկը վերաբերում է մյուսների տառապանքների հանդեպ մարդկային անտարբերությանը, անցյալն անցյալին թողնելու մոռացության կոչերը[13]: Հայտնի ցեղասպանագետ Իսրայել Չարնին, խոսելով Հայոց ցեղասպանության՝ թուրքական ժխտման մասին, նշում է, որ որոշ թուրքեր փորձում են ոչ թե ժխտել իրականությունը, այլ քիչ կարևորություն տալ տեղի ունեցածին՝ կոչ անելով նայել ապագային, քանզի ատելությունը ավելի մեծ արհավիրքների կհանգեցնի[14]:

Քննելով Փաշինյանի ուղերձի այս հատվածը հայտնի ցեղասպանագետների՝ ժխտման տեսակների մեկնությամբ, ակներև է դառնում, որ ասվածը ոչ այլ ինչ է, քան ժխտում, քանզի Փաշինյանը նորանոր ցնցումների պատճառ է համարում ոչ թե թշնամի երկրների հայակոլ քաղաքականությունը, այլ այն, որ հայությունը ի զորու չի եղել հաղթահարելու Ցեղասպանության պատճառած հոգեցնցումը և աշխարհին այդ դիտանկյունից նայելու հետևանքով իր գլխին նոր արհավիրքներ բերելու պատճառ է դարձել:

Փաշինյանն իր ուղերձի բովանդակային հատվածի վերջնամասը եզրափակում է հայությանն ուղղված անհասկանալի կոչով՝ ***այլևս երբեք:***

«Այլևս երբեք: Մենք սա ուրիշներին չպետք է ասենք, այլ ինքներս մեզ: Եվ սա ամենևին էլ մեղադրանք չէ ինքներս մեր հասցեին, այլ դիտանկյուն, որտեղ մենք, միայն մենք ենք մեր ճակատագրի պատասխանատուն ու տնօրենը և պարտավոր ենք ունենալ բավարար միտք, կամք, խորք ու իմացություն՝ այդ պատասխանատվությունը մեր ինքնիշխան որոշումների ու ընկալումների տիրույթում կրելու»[15]:

Ցեղասպանությունների ուսումնասիրությամբ զբաղվող մարդիկ քաջատեղյակ են, որ այս արտահայտությունը երևան եկավ Հոլոքոստից հետո, որն ուղղված է արտաքին աշխարհին և նշանակում է, որ մարդկությունն այլևս երբեք չպետք է թույլ տա այդօրինակ ոճրագործությունների կրկնություն: Ի՞նչ է ակնարկում Փաշինյանը հայությանն ուղղված այս կոչով, թերևս միայն իրեն կամ իր ուղերձը գրած կամ խմբագրած անձին կամ անձանց է հայտնի: Ի՞նչ պետք է անի կամ չանի հայությունը. «***ինքնիշխան որոշումների և ընկալումների տիրույթում***», որ այլևս ցեղասպանվելու «դատավճռին» չարժանանա:

Փաշինյանի այս տարվա ապրիլքսանչորսյան ուղերձին անդրադարձան թե՛ ցեղասպանությունների և մարդու իրավունքների ուսումնասիրություններով զբաղվող տեղական և միջազգային կազմակերպություններ, թե՛ առանձին պատմաբաններ և ցեղասպանագետներ[16]: Բոլոր հրապարակումներում և ելույթներում ՀՀ վարչապետը մեղադրվում է Հայոց ցեղասպանության քողարկված ժխտման մեջ:

Փաշինյանի ուղերձին բավականին հանգամանալից և դիպուկ անդրադարձավ Լեմկինի ցեղասպանության կանխարգելման ինստիտուտը: Ինստիտուտի հայտարարության մեջ ասվում է հետևյալը. «Ապրիլի 24-ին՝ Հայոց ցեղասպանության հիշատակի օրը, Հայաստանի վարչապետը ոգեկոչման պաշտոնական հայտարարություն տարածեց, որում, թվում է, թե մեղավորությունը դնում էր զոհերի վրա՝ ցե-

ղասպանության համար Թուրքիայի ու Ադրբեջանի պատասխանատվությունը կասկածի տակ դնելու նպատակով»[17]:

Նույն կարծիքն արտահայտեց նաև ցեղասպանագետ, պատմական գիտությունների թեկնածու Սուրեն Մանուկյանը իր՝ TV 5 հեռուստաալիքին տված հարցազրույցի ընթացքում՝ նշելով, որ սա աննախադեպ երևույթ էր, քանզի եթե նախկինում եղել են մեղադրանքներ որևէ պաշտոնյայի ուղերձի վերաբերյալ, ապա դրանցում խոսվել է ոչ ուժեղ շեշտադրումներ անելու մասին, բայց ոչ երբեք քողարկված ժխտողական հայտարարություն անելու համար[18]: Պատմաբանը նշեց, որ ցանկացած իրադարձություն պետք է դիտարկել երկու տեսանկյունից՝ դինամիկան, այսինքն՝ որևէ երևույթի զարգացման ընթացքը, և կոնտեքստը, այսինքն՝ այն, թե ինչ համատեքստում է դա արվել: Խոսելով Փաշինյանի՝ 2019 թվականից ի վեր արված ապրիլքսանչորսյան ուղերձների մասին՝ Մանուկյանը նշեց, որ տարեցտարի այդ հոետորաբանությունը թուլանում է: Մանուկյանի դիտարկմամբ ևս՝ Փաշինայնի ուղերձում առկա էր մեղադրանք հայ քաղաքական էլիտային խոհեմ չլինելու և աշխարհի դրվածքը չհասկանալու մեջ. «...և մեր քայլերով մտանք աշխարհաքաղաքական խաղերի մեջ, որի հետևանքով տեղի ունեցավ ցեղասպանություն»[19]: Մանուկյանի գնահատմամբ՝ սա անընդունելի է, քանի որ. «...ցեղասպանությունը ծանրագույն հանցագործություն է մարդկության դեմ, և զոհը երբեք չի կարող մեղադրվել դրանում, ինչ էլ զոհն արած լինի: Եթե նույնիսկ մենք ապստամբած լինեինք, որը չի եղել, և ցավոք սրտի չի եղել: Ես որպես պատմաբան կնախընտրեի, որ գոնե ապստամբած լինեինք, մենք գուցե ավելի շատ մարդկանց կարողացած լինեինք փրկել...»[20]:

Փաշինյանի այս տարվա ուղերձում չկային նաև Ցեղասպանության պատասխանատուներ: Այնինչ ցեղասպանությունը մարդածին հանցագործություն է, որի համար կան հստակ պատասխանատուներ, և այս հարցը շրջանցելը ևս քողարկված ժխտողական քաղաքականության մաս է կազմում: ■

Հղումներ

1. Մանրամասն տե՛ս Դրօշակի 2024 թ. ապրիլ ամսվա համարում:
2. Helen Fein, “Denying Genocide from Armenia to Bosnia” a lecture delivered at the Department of Government at the London School of Economics and Political Science on 22 January, 2001, London, էջ 1:
3. Roger W. Smith, “Denial of the Armenian Genocide”, Charny, Israel W. (ed.), Genocide: A Critical Bibiliographic Review, Vol. 2. New York: Facts of File, 1988, էջ 64:
4. Մանրամասն տես՝ Մարի Հովհաննիսյան, Ուրացման քաղաքականության արմատները, նորօրյա դրսևորումները և դրանց հետևանքները, Երևան, Էդիթ Պրինտ հրատարակչություն, 2017, էջ 107-130:
5. https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2024/04/24/Nikol-Pashinyan-April-24/ (վերջին դիտում՝ 19 հուլիսի 2024 թ.)
6. Fatma M. Göçek, Denial of Violence: Ottoman Past, Turkish Present, and Collective Violence against Armenians, 1789-2009, Oxford, Oxford University Press, 2015, էջ 70:
7. Kamuran Gurun, The Armenian File: The Myth of Innocence Exposed, Istanbul Technical University Foundation, 2001, էջ 217:
8. https://1915.gov.tr/events-of-1915.html (վերջին դիտում՝ 19 հուլիսի 2024 թ.)
9. Vahakn N. Dadrian, The Key Elements in the Turkish Denial of the Armenian Genocide: A Case Study of Distortion and Falsification, The Zoryan Institute, 1999, էջ 16-17:
10. https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2024/04/24/Nikol-Pashinyan-April-24/ (վերջին դիտում՝ 19 հուլիսի 2024 թ.)
11. Stanley Cohen, State of Denial.Knowing about Atrocities and Suffering, London, Polity Press, 2001, էջ 7:
12. Նույն տեղում:
13. Նույն տեղում:
14. Israel W. Charny, Innocent Denials of Known Genocides: A Further Contribution to a Psychology of Denial of Genocide. Human Rights Review, Springer Netherlands, 2000, էջ 23:
15. https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2024/04/24/Nikol-Pashinyan-April-24/ (վերջին դիտում՝ 19 հուլիսի 2024 թ.)
16. https://armenianweekly.com/2024/06/04/armenias-leaders-need-to-uphold-the-historical-truth-in-the-face-of-intimidation/(վերջին դիտում՝ 19 հուլիսի 2024 թ.)
17. https://www.lemkininstitute.com/single-post/lemkin-institute-condemns-pashinyan-s-cryptic-engagement-with-genocide-denial (վերջին դիտում՝ 21 հուլիսի, 2024 թ.):
18. https://www.youtube.com/watch?v=5eEmFd6lCck (վերջին դիտում՝ 21 հուլիսի, 2024 թ.):
19. Նույն տեղում:
20. Նույն տեղում:

ՀՀ անկախության հռչակագիրը ՀՀ Սահմանադրության հիմնաքարն է

Արփի Աբրահամյան
Քաղաքագիտության և ազգային անվտանգության հարցերի մասնագետ

1995 թվականի հուլիսի 5-ին Հայաստանի Հանրապետությունն ընդունեց ՀՀ Սահմանադրությունը.

«Հայ ժողովուրդը, հիմք ընդունելով Հայաստանի անկախության մասին հռչակագրում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքները և համազգային նպատակները, իրականացրած ինքնիշխան պետության վերականգնման իր ազատասեր նախնիների սուրբ պատգամը, նվիրված հայրենիքի հզորացմանը և բարգավաճմանը, ապահովելու համար սերունդների ազատությունը, ընդհանուր բարեկեցությունը, քաղաքացիական համերաշխությունը, հավաստելով հավատարմությունը համամարդկային արժեքներին, ընդունում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը»[1]:

Ներկայումս ՀՀ ազգադավ իշխանությունը քայլ առ քայլ իրականացնում է հայոց պետականության իրավական հիմքերի կազմաքանդումը, հերթական անգամ իրագործում թուրք-ադրբեջանական դաշինքի պահանջները.

Ալիևի պահանջով ՀՀ իշխանությունը ցանկանում է ընդունել Հայաստանի նոր սահմանադրություն, որպես Բաքվի և Երևանի միջև «խաղաղության պայմանագրի» կնքման նախապայման:

Այսինքն՝ Հայաստանը պետք է ունենա թուրք-ադրբեջանական շահերը սպասարկող սահմանադրություն այնպիսի դրույթներով, որոնք ոչ միայն կապ չեն ունենա ՀՀ ներկայիս սահմանադրության հետ, այլև՝ տրամաբանորեն ընդհանրություն չեն ունենա ՀՀ Անկախության հռչակագրի հետ:

ՀՀ Անկախության հռչակագրի 12-րդ կետում ասվում է.

Սույն Հռչակագիրը հիմք է ծառայում ՀՀ Սահմանադրության մշակման, իսկ գործող սահմանադրության մեջ՝ փոփոխությունների և լրացումների կատարման, պետական մարմինների գործունեության, Հանրապետության նոր օրենսդրության մշակման համար (23 օգոստոսի 1990 թվականի, քաղ. Երևան հ.0072-1) [2]:

Հասկանալի է, որ թուրք-ադրբեջանական թիրախում ՀՀ Սահմանադրության հիմնաքարն է՝ ՀՀ Անկախության հռչակագիրը:

Չէ՞ որ ՀՀ Անկախության հռչակագիրը հիմնվում է 1989 թվականի դեկտեմբերի 1-ի «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ որոշման վրա, զարգացնում է 1918 թվականի մայիսի 28-ին ստեղծված անկախ Հայաստանի Հանրապետության ժողովրդավարական ավանդույթները:

Թուրք-ադրբեջանական դաշինքի նպատակը ոչ միայն ՀՀ նոր սահմանադրության ընդունումն ու ՀՀ խորհրդանիշների փոփոխումն է, այլև նոր սահմանադրությամբ ՀՀ Անկախության հռչակագրի իրավական ուժի չեղարկումը, իսկ դա նշանակում է դադարեցնել ՀՀ անկախ պետականության սուբյեկտայնությունը:

Անդրադառնանք ՀՀ Անկախության հռչակագրի[3] որոշ դրույթների, հասկանանք, թե ինչ իրավական ուժից են ցանկանում մեզ զրկել.

- Հայաստանի Հանրապետությունն ունի իր դրոշը, զինանշանը և հիմնը:
- Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան պետություն է՝ օժտված պետական իշխանության գերակայությամբ, անկախությամբ, լիիրավությամբ:
- ՀՀ ամբողջ տարածքում գործում են միայն ՀՀ Սահմանադրությունը և օրենքները:
- Հայոց պետականության կրողը ՀՀ ժողովուրդն է, որն իր իշխանությունն իրագործում է անմիջականորեն և ներկայացուցչական մարմինների միջոցով՝ ՀՀ Սահմանադրության և օրենքների հիման վրա:
- Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող բոլոր քաղաքացիների համար սահման-

վում է ՀՀ քաղաքացիություն: Արտերկրի հայությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիության իրավունք ունի: ՀՀ քաղաքացիները գտնվում են պետության պաշտպանության և աջակցության ներքո (Նոր սահմանադրությամբ, անկասկած, սփյուռքահայերի համար քաղաքացիություն ձեռք բերելու «նոր պայմաններ» կթելադրվեն, ներկայումս օտարազգիների արհեստական մեծաքանակ առկայությունը ՀՀ-ում հեռահար նպատակ է հետապնդում՝ հայի ինքնության, գենի ոչնչացման):

- Հայաստանի Հանրապետությունն իր անվտանգությունը և սահմանների անձեռնմխելիությունն ապահովելու նպատակով ստեղծում է Գերագույն խորհրդին ենթակա սեփական զինված ուժեր, ներքին զորքեր, պետական և հասարակական անվտանգության մարմիններ: Հայաստանի Հանրապետությունն ինքն է որոշում իր քաղաքացիների զինվորական ծառայության կարգը (նոր սահմանադրությամբ թուրք-ադրբեջանական դաշինքը կիրագործի իր հեռահար նպատակը, ինչպես Արցախում՝ զինաթափել Հայաստանը, ՀՀ զինված ուժերը):
- Այլ երկրների զորամիավորումները, նրանց ռազմական բազաները և շինությունները կարող են տեղաբաշխվել Հայաստանի Հանրապետության տարածքում միայն Գերագույն խորհրդի որոշմամբ (ՀՀ և ՌԴ միջև 1995 թ. մարտի 16-ին կնքվել է պայմանագիր ՀՀ տարածքում ռուսական ռազմակայանի տեղակայման մասին: Պայմանագրի ժամկետը մինչև 2044 թվականն է[4]: Նոր սահմանադրությամբ, անկասկած ռուսական 102-րդ ռազմաբազան դուրս կմղվի Հայաստանից: ՀՀ իշխանությունը գնում է ռազմաքաղաքական վեկտորի փոփոխության):
- Հայաստանի Հանրապետությունը, որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, վարում է անկախ արտաքին քաղաքականություն (նոր սահմանադրությամբ, անկասկած, Հայաստանը որպես սուբյեկտ կդադարի գոյություն ունենալուց):
- Հայաստանի Հանրապետության ազգային հարստությունը՝ հողը, ընդերքը, օդային տարածությունը, ջրային և այլ բնական պաշարները, տնտեսական, մտավոր, մշակութային կարողությունները, նրա ժողովրդի սեփականությունն է: Դրանց տիրապետման, օգտագործման և տնօրինման կարգը որոշվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով (ինչպես Արցախում է ներկա պահին տնօրինում թուրք-արդրբեջանական դաշինքը, նույնը սպասվում է Հայաստանին):
- Հայաստանի Հանրապետությունն ապահովում է հայերենի, որպես պետական լեզվի, գործառնությունը Հանրապետության կյանքի բոլոր ոլորտներում, ստեղծում կրթության, գիտության և մշակույթի սեփական համակարգ (նոր սահմանադրությամբ կշարունակվի, իրավական ուժ կունենա Հայոց պատմության աղավաղումը, ազգային մշակույթի, ազգային հիշողության ոչնչացումը):
- Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգնում 1915 թվականին Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործին (նախապայմանի ընդունումը նշանակում է չեղարկել ցեղասպանության միջազգային ճանաչումը, դատապարտումը, հետ կանգնել պահանջատիրությունից,

հայը իրավունք չի ունենա ցեղասպանության մասին նույնիսկ խոսել) և այլն:

ՀՀ Սահմանադրության մի շարք հոդվածներ նոր սահմանադրության ընդունման դեպքում գոյություն չեն ունենա՝ **հոդված 14. Զինված ուժերը և պաշտպանությունը, հոդված 15. Մշակույթի, կրթության, գիտության խթանումը, հայոց լեզվի և մշակութային ժառանգության պաշտպանությունը, հոդված 19. Հայկական Սփյուռքի հետ կապերը, հոդված 20. Հայաստանի Հանրապետության պետական լեզուն, հոդված 21. Հայաստանի Հանրապետության խորհրդանիշները և այլն:**

Անդրադառնանք ՀՀ Սահմանադրության հոդված 18-ի 1-ին կետին. Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում[5]:

Ինչպես նաև՝ 2007 թ. ազգային անվտանգության ռազմավարությունում[6] առանձնահատուկ ներկայացված է, որ Հայաստանի Հանրապետությունը կարևորում է աջակցությունը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգևոր, բարոյական, սոցիալական և մշակութային գործունեությանը:

ՀՀ ներկայիս իշխանությունը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու դերը նվազեցրել է. 2020-ի ազգային անվտանգության ռազմավարությունում Հայ ժողովրդի ազգային արժեքներ բաժնում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին դասվել է Հայ կաթողիկե եկեղեցու, Հայ ավետարանական եկեղեցու շարքում[7]:

2018-ից սկսվել են Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու դեմ հալածանքները: Եկեղեցու դերը նվազեցնելու նպատակով աղանդներին հավասարեցնում են Հայ առաքելական եկեղեցուն:

ՀՀ իշխանության հակահայ քաղաքականությունը, հայ հասարակության բարոյահոգեբանական և հայրենասիրական դաստիարակության թերի վիճակը հայ ազգին կանգնեցրին Հայոց պետականության գոյութենական պայքարի առջև:

Այս խոսքը Անկախության Սրբազան պայքարի կոչ է համայն հայությանը.

Հայ ազգով համախմբվենք ազգային ազատագրական պայքարի, քանդենք թշնամու հայադավ ծրագրերի շղթան, տեր կանգնենք Հայոց պետականությանը, Հայաստանի Հանրապետության Անկախության հռչակագրին: ■

Հղումներ

1 ՀՀ Սահմանադրություն, https://www.arlis.am/documentview.aspx?docid=102510

2 ՀՀ Անկախության հռչակագիր, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=1895

3 Տես նույն տեղում:

4 Ռազմավարական նշանակության Հայ-ռուսական պայմանագրեր և համաձայնագրեր, https://www.arfd.am/new/news/42972/

5 ՀՀ Սահմանադրություն, https://www.arlis.am/documentview.aspx?docid=102510

6 ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարություն, 2007, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=31189

7 ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն, հուլիս 2020, https://www.gov.am/am/National-Security-Strategy/

Հայաստանը և կոպենհագենյան չափանիշները

Արփի Աբրահամյան
Քաղաքագիտության և ազգային անվտանգության հարցերի մասնագետ

Կատարենք անդրադարձ. Ալիևի պահանջով ՀՀ իշխանությունը ցանկանում է ընդունել Հայաստանի նոր սահմանադրություն, որպես Բաքվի և Երևանի միջև «խաղաղության պայմանագրի» կնքման նախապայման:

Որպեսզի իրագործվի դավադիր պլանը, օրակարգ է նետվում Եվրամիությանը անդամակցության հարցը (հանրաքվեի միջոցով):

Հասկանանք, թե ինչ գործընթաց է Եվրամիությանը անդամակցությունը:

1993-ին Կոպենհագենում Եվրոպական միության խորհուրդն ամրագրել է Եվրամիությանը անդամակցության գործընթացի հիմքը՝ անդամակցության նախապայմանները հանդիսացող կոպենհագենյան հետևյալ չափանիշները (1995 -ին մադրիդյան գագաթնաժողովում այդ չափանիշները լրացվել են[1]):

1. Քաղաքական չափանիշներ՝ ժողովրդավարության, օրենքի գերակայության, մարդու իրավունքների և փոքրամասնությունների պաշտպանության երաշխավոր հաստատությունների կայունություն:
2. Տնտեսական չափանիշներ՝ շուկայական տնտեսության առկայություն, ինչպես նաև կարողություն՝ դիմակայելու մրցակցության ճնշմանը և շուկայի ուժերին՝ Միության ներսում:
3. Ընկերակցության «acquis»-ի ընդունում՝ անդամակցության պարտավորությունների ստանձնման կարողություն, ներառյալ քաղաքական, տնտեսական և արժութային միության նպատակների իրականացումը[2]:

Անդամակցության դիմումի ներկայացումը նշանակում է, որ այդ երկիրն արդեն իսկ սերտ երկկողմ հարաբերությունների մեջ է Եվրոպական միության հետ, համապատասխանում է անդամակցման դիմում ներկայացնելու համար պահանջվող չափանիշներին և պատրաստ է ձեռնարկելու անդամակցմանն ուղղված անհրաժեշտ բարեփոխումները:

Անդամակցության դիմումը ներկայացվում է Խորհրդին: Երբ Խորհուրդը միաձայն համաձայնում է սկսել բանակցային գործընթացը, այդ պահից թեկնածու երկրի և անդամ մյուս երկրների միջև բանակցությունները համարվում են պաշտոնապես սկսված:

Եվրոպական միությանն անդամակցելու համար դիմող երկրի կողմից պետք է իրականացվեն մի շարք գործողություններ՝ տնտեսության զարգացում, քաղաքական կայունության ապահովում, ժողովրդավարական սկզբունքներն ու օրենքի գերակայության սկզբունքը որպես առաջնայնություն սահմանում, երկրի անվտանգության և կայունության խթանում, մաքուր շրջակա միջավայրի ապահովում, վարչական և դատական կարողությունների բարելավում, կոռուպցիայի դեմ պայքար և «acquis»-ի իրականացում:

Եվրոպական միությունը դիմող երկրներին տրամադրում է նախաանդամակցային աջակցություն՝ անդամության համար պահանջվող բարեփոխումների իրականացման համար:

Անդամակցության ողջ գործընթացի առանցքային փուլերից մեկն անդամակցության շուրջ բանակցային գործընթացն է:

Եվրոպական խորհրդի որոշման համաձայն Եվրոպական միությունը յուրաքանչյուր թեկնածու երկրի համար սահմանում է բանակցային գործընթացների հատուկ ձև՝ հիմնվելով «acquis» հիմնական սկզբունքի վրա, որը քննարկման և փոփոխության ենթակա չէ:

Ֆրանսերեն «acquis» կամ երբեմն՝ «acquis communitaire» արտահայտությունը գործածվում է Եվրոպական միության օրենքում՝ որպես Եվրոպական միության օրենսդրության ընդհանուր շրջանակ:

Եվրոպական միության ընդլայնման գործընթացում «acquis»-ը բաժանվել է գլուխների[3]: Նշված գլուխներից են՝ ապրանքների, աշխատուժի, կապիտալի ազատ տեղաշարժը, ընկերությունների իրավունքը, մրցակցության քաղաքականությունը, տեղեկատվական հասարակությունը և լրատվամիջոցները, տնտեսական և արժութային քաղաքականությունը, հարկերը, արտաքին, անվտանգության և պաշտպանության քաղաքականությունը, սպառողների շահերի և առողջության պաշտպանությունը և այլն:

Նախքան որևէ ոլորտում բանակցություններ սկսելը, Եվրոպական հանձնաժողովը թեկնածու երկրի համար իրականացնում է յուրաքանչյուր գլխի մանրամասն քննություն:

Հանձնաժողովը թեկնածու երկրներում իրականացվող գործընթացի վերաբերյալ տեղեկացնում է Խորհրդին և Եվրոպական խորհրդարանին: Դա կատարվում է պարբերական հաշվետվությունների, ռազմավարության փաստաթղթերի և հետագա առաջընթացի վերաբերյալ պարզաբանումների միջոցով:

Վերահսկվում են ելակետային պահանջների կատարումը և Եվրոպական միության օրենսդրության կիրառման առաջընթացը:

Բանակցություններն ընթանում են յուրաքանչյուր թեկնածու երկրի հետ և կախված են այդ երկրում բարեփոխումների տեմպերից և Եվրոպական միության օրենքների հետ համապատասխանեցումից:

Յուրաքանչյուր գլխի բանակցային գործընթացը պայմանականորեն ավարտվում է այն ժամանակ, երբ բոլոր անդամ պետությունները բավարար են համարում թեկնածու երկրի առաջընթացը:

Բոլոր գլուխների վերաբերյալ բանակցությունների արդյունքները բավարար լինելու դեպքում անդամակցության պայմանագրի նախագծում նախատեսվում են ճշգրիտ ժամկետները և պայմանները:

Այդ նախագիծն անցումային միջոցառումների և ժամկետների, ինչպես նաև ֆինանսական միջոցառումների և երաշխիքային վերապահումների մանրամասն ցանկ է:

Եթե պայմանագիրը ստանում է Եվրոպական խորհրդի, Եվրոպական հանձնաժողովի և Եվրոպական խորհրդարանի հավանությունը, ստորագրվում է թեկնածու երկրի, բոլոր անդամ պետությունների ներկայացուցիչների կողմից, հետո ներկայացնում են անդամ պետություններին և թեկնածու երկրին՝ վավերացման համար՝ իրենց սահմանադրական կանոններին համապատասխան (խորհրդարանի կողմից կամ հանրաքվեով):

Անդամակցության պայմանագրի ստորագրումից հետո թեկնածու երկիրը դառնում է միացող պետություն և ձեռք է բերում իրավունք՝ մինչև անդամ պետություն դառնալը օգտվելու միջանկյալ արտոնություններից:

Նա կարող է մեկնաբանություններ ներկայացնել ԵՄ առաջարկությունների, հաղորդակցությունների, հանձնարարականների կամ նախաձեռնությունների նախագծերի վերաբերյալ և ԵՄ մարմիններում և գործակալություններում ձեռք բերել «ակտիվ դիտորդի» կարգավիճակ, որտեղ ունի խոսելու իրավունք, իսկ քվեարկելու՝ ոչ:

Վավերացման գործընթացի ավարտից հետո ծրագրված ժամկետում պայմանագիրը մտնում է ուժի մեջ, և ասոցացված պետությունը դառնում է անդամ պետություն[4]:

Եվրոպական միության անդամակցության թեկնածու երկրներն են՝ Թուրքիան (թեկնածու երկիր է դարձել 1999-ին), Հյուսիսային Մակեդոնիան (2005-ին), Մոնտենեգրոն (Չեռնոգորիա) (2010-ին), Սերբիան (2010-ին), Ալբանիան (2014-ին), Բոսնիան և Հերցեգովինան (2022-ին), Ուկրաինան (2022-ին), Վրաստանը (2023-ին), Մոլդովան (2022-ին): Հավանական թեկնածու է Կոսովոյի Հանրապետությունը, որը ԵՄ անդամակցության հայտ է ներկայացրել 2022-ի դեկտեմբերին[5]:

Շնորհիվ այս գործընթացի՝ անդամակցության թեկնածու երկրներն ազատ մուտք ունեն ԵՄ միասնական շուկա և օգտվում են բարեփոխումների նպատակով Եվրոպական միության տրամադրած ֆինանսական աջակցությունից:

Համաձայնագրերը ներառում են նաև տնտեսական, ֆինանսական և բյուջետային աջակցություն, փախստականներին և տեղահանվածներին աջակցություն, ազգային օրենսդրության համապատասխանեցում համայնքի օրենսդրությանը, արդարադատության և ներքին գործերի ոլորտներում համագործակցություն և քաղաքական երկխոսություն, ինչպես նաև տարածաշրջանի բոլոր երկրներին վերաբերող մարդու իրավունքների պաշտպանության, ժողովրդավարական սկզբունքների և օրենքի գերակայության հետ կապված դրույթներ: Այս բոլոր գործընթացները հնարավորություն են տալիս այդ երկրներին հետագայում անդամակցելու Եվրոպական միությանը:

Ինչպես հասկացանք, Եվրամիությանն անդամակցող երկիրը պետք է հնարավորություն ունենա իրականացնել վերոնշյալ գործընթացները:

Անդրադառնալով Հայաստանին՝ նշենք, որ ՀՀ-ԵՄ հարաբերությունները ներկայումս կարգավորվում են Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով[6]: 2021-ի մարտի 1-ից ուժի մեջ է մտել ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (ՀԸԳՀ) և վավերացվել է ՀՀ-ի, ԵՄ անդամ պետությունների և Եվրոպական խորհրդարանի կողմից[7]:

Թեև Հայաստանը չունի մրցունակ շուկա, զարգացած տնտեսություն, հնարավորությունները բավարար չեն ԵՄ-ին անդամակցելու, սակայն Հայաստանի համագործակցությունը Եվրամիության հետ լայն հնարավորություն է զարգանալու:

Նշենք նաև, որ Հայաստանի տնտեսական անվտանգությունը հիմնականում ապահովվում է ՌԴ էներգետիկ ռեսուրսներով (ՀՀ ներկրվող բնական գազի 80%-ը և միջուկային վառելիքի 100%-ը, վերամշակված նավթային արտադրանքը):

Հայաստանը ԵԱՏՄ անդամ է, որը ՀՀ-ի համար նաև հնարավորություն է առևտրատնտեսական հարաբերությունները սերտացնելու Իրանի հետ: Հայաստանը կամուրջ է ԵԱՏՄ-ի և Վրաստանի, և, որ ամենակարևորն է՝ԵԱՏՄ-ի ու ԵՄ-ի միջև:

ԵԱՏՄ երկրների համար Հայաստանը նաև Իրանի, Վրաստանի, ԵՄ-ի և մի շարք այլ պետությունների շուկա մուտք գործելու հնարավորության պատուհան է:

Կարծում եմ, համագործակցելով ԵՄ-ի հետ, մնալով ԵԱՏՄ անդամ, Հայաստանին լայն հնարավորություններ կընձեռվի տնտեսապես զարգանալու, քաղաքական, դիվանագիտական հարաբերությունները կարգավորելու:

Սակայն ՀՀ իշխանության անհավասարակշիռ քաղաքականությունը, խորացող հարաբերություններն

արևմուտքի հետ՝ զուգահեռաբար հակադրվելով ավանդական դաշնակիցների հետ Հայաստանը վերածում են քաղաքական գործոնի Ռուսաստանի և Իրանի դեմ:

ՀՀ իշխանությունն արտաքին քաղաքական վեկտորի փոփոխությամբ նպատակ է հետապնդում ՀՀ-ն դուրս բերել ԵԱՏՄ-ի, ՀԱՊԿ-ի անդամակցությունից, Հայաստանից հանել ՌԴ 102-րդ ռազմաբազան: Այսինքն՝ իրականությունից դասեր չքաղելով, գնում է այն կործանարար ճանապարհով, որով իրենից առաջ գնացել են Վրաստանը և Ուկրաինան: Ակնհայտ է, որ եվրոպական կառույցների հետ գործակցության հիմքում, մասնավորապես և Եվրամիությանն անդամակցելու հաճախ անորոշ ապագայի դիմաց, առանց անգամ այդ մասին հայտարարելու վերջիններս դնում են քաղաքական հստակ պահանջներ:

Նման ակնհայտ օրինակը Վրաստանն է, որի նախաձեռնած օտարերկրյա գործակալների մասին օրենքի ընդունման հարցը հանգեցրել է Արևմուտքի կտրուկ արձագանքին:

ԵՄ դիվանագիտության ղեկավար Ժոզեպ Բորելը հայտարարեց, որ Եվրամիությունը կփակի դռները Վրաստանի առջև, եթե իշխանությունները շարունակեն իրենց քաղաքական կուրսը[8]:

Եվրամիությունը կասեցրել է Վրաստանի անդամակցության գործընթացը, ինչպես նաև՝ Վրաստանի պաշտպանության նախարարությանը հատկացված 30 մլն եվրոյի տրամադրումը[9]: Ակնհայտ է, որ սեփական ինքնիշխանությունը պաշտպանելու և արտաքին թելադրանքի թուլացմանը տանող քայլերը Արևմուտքի համար ընդունելի չեն:

Ինչ վերաբերվում է ռուս-ուկրաինական պատերազմին, չնայած Արևմուտքի մշտական աջակցությանը, Ուկրաինայի ապագան խոստումնալից չէ:

Անդրադառնանք Եվրամիությանը Հայաստանի անդամակցության հարցին:

Նախ նշենք. Հայաստանի կրած հետպատերազմյան հետևանքները, ադրբեջանի հետ չավարտված պատերազմը, արցախահայության բռնի տեղահանության խնդիրները, երկրի տնտեսական դժվարությունները, զանգվածային արտագաղթի հավանականությունը ԵՄ-ի համար շահավետ չեն դարձնում նման հիմնահարցերով պետության ներառումը իր կազմում:

ԵՄ-ն, որպես հավաքական արևմուտքի բաղադրիչ, շարունակում է ամրապնդել իր ազդեցությունը Հարավային Կովկասում, հատկապես՝ Հայաստանում: ԵՄ կողմից իրականացվող աջակցության ծրագրերի ներքո ակտիվացել են արտաքին ծագում ունեցող հասարակական կազմակերպությունները, գործակալական ցանցերը: Իրատեսորեն գնահատելով, ասենք, որ Հայաստանում ձևավորվել է հասարակության զգալի արևմտամետ հատված, որը հենարան է համապատասխան հանրաքվեի համար:

ՀՀ իշխանության նպատակն է. ԵՄ-ին անդամակցման հանրաքվեի երջանիկ հեռանկարի շուքի ներքո նոր սահմանադրություն անցկացնել, իրականացնել թուրք-ադրբեջանական դաշինքի նպատակները, որոնք հետագա քայլերով կհանգեցնեն ՀՀ Անկախության Հռչակագրի չգոյությանը, Հայոց պետականության անկմանը:

Որպեսզի դիմակայենք ներկա մարտահրավերներին, Հայաստանին հարկավոր է անցնցում իշխանափոխություն, այնպիսի իշխանության ձևավորում, որը կհամախմբի հայ ազգին, կվարի կայուն անվտանգային քաղաքականություն, կլինի անկախ արտաքին թելադրանքներից և կառաջնորդվի միմիայն ՀՀ կենսական շահերով:

Հղումներ

1 Եվրոպագիտություն, Դասագիրք /խմբագրությամբ Նարեկ Գալստյանի, Երևան, ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոն, 2021, 297 էջ

2 Accession criteria, https://neighbourhood-enlargement.ec.europa.eu/enlargement-policy/glossary/accession-criteria_en

3 Եվրոպական միություն, ՀՀ կենտրոնական բանկ, Երևան, 2011, էջ 29:

4 Եվրոպական միություն, ՀՀ կենտրոնական բանկ, Երևան, 2011, էջ 31:

5 EU enlargement, https://european-union.europa.eu/principles-countries-history/eu-enlargement_en

6 Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր https://www.mfa.am/filemanager/eu/CEPA_ARM_1.pdf?fbclid=IwAR2673vUP91kFZ9fXcBrpElc86zV1oYiQVYm0h3ltTo2559P_zCus__GCl4

7 Փաստեր և թվեր ԵՄ- Հայաստան հարաբերությունների մասին. մարտ 2021 https://eeas.europa.eu/sites/default/files/eap_factsheet_armenia_ar_1.pdf

8 Եվրամիությանը Վրաստանի ինտեգրման գործընթացը սառեցվել է, https://www.youtube.com/watch?v=QQVkVfQS-fQ

9 ԵՄ-ն կասեցրել է Վրաստանի անդամակցության գործընթացը. ԵՄ դեսպան https://yerkir.am/hy/article/2024/07/09/33536:

Ինքնահարգանքը պետք է լինի հայի կենսափիլիսոփայությունը

Մանվել Մկրտչյան
Հրապարակախոս

Ինքնահարգանքի և արժանապատվության զգացումները մարդ էակի հիմնարար պահանջմունքներից են: Դրանցից են սկիզբ առնում շատ վարքային դրսևորումներ: Հնարավոր է՝ կողքից դա միանգամից չզգացվի, բայց խորքում այդ զգացումների առկայությունը կամ բացակայությունը կանխորոշում են տվյալ անձի և հասարակության հիմնական որակները: Չի գտնվի գեթ մի մարդ մոլորակի վրա, որը զուրկ լինի հարգված և կարևորված լինելու բնական մղումներից: Խոսքը հանրաճանաչ կամ փառքի տեր լինելու մասին չէ: Անկարելի բան է, որ իրեն չհարգող մարդը հարգալից լինի այլոց նկատմամբ: Սա շատ նման է սիրուն՝ մինչև մարդը ափեափ լցված չլինի սիրով, չի կարող սիրել ուրիշներին: Հարգանքը բարձրակարգ հոգևոր կատեգորիա է: Այն կայուն և դոմինանտ երևույթ չէ բոլորի համար և ունի էթնիկական լուրջ տարբերություններ՝ խարսխված մշակույթների և ավանդույթների վրա: Հայի ինքնահարգանքը զգալիորեն տարբերվում է գերմանացու կամ, ասենք, ճապոնացու նույնպիսի զգացումից: Օրինակ, գերմանացին իրեն չի հարգի, եթե անտեսի օրենքը, հրամանը կամ գործող կարգը: Նյուրնբերգի դատավարություններին կանչված մարդիկ հպարտորեն և խիստ ինքնահարգալից տեսքով հայտարարում էին՝ **«Բայց չէ՞որ մենք հրաման էինք կատարում, ինչպե՞ս կարող էր այլ կերպ լինել...»:** Ճապոնացու համար ինքնահարգանքի բարձրագույն դրսևորումը նվիրվածությունն է և ավանդույթին հավատարիմ լինելը: Պատմում են, որ միջնադարում մի զորավար, որը կայսեր սիրելի հրամանատարներից էր, շտապ կանչվում է նրա մոտ: Զորավարի հանգստյան օրն էր, և նա զվարճանում էր գինետանը: Էսպես, քեֆը մի քիչ լավ, նա ներկայանում է կայսեր պալատ: Գինովցած լինելու պատճառով զորապետը կայսերը ներկայանալու ծիսակարգի մի շարք բաներ չի անում, կամ լավ չի անում: Կայսրը դրանք նույնիսկ չի էլ նկատում, քանզի նա, իրոք, երկրին նվիրված սքանչելի զինվորական էր: Հաջորդ օրն արթնանալով, զորավարն ամոթից սարսում է, որ պալատում իրեն ըստ պատշաճի չի դրսևորել, իսկ դա աններելի էր իր մակարդակի հրամանատարի համար: Նա իրեն չի ներում և խարակիրի է անում: Իսկ դրանից հետո, խարակիրի կամ ինքնասպանություն են գործում զորապետին նվիրված 25 զինվորները, որովհետև, եթե իրենց ուսուցիչ-զորավարը սխալ է թույլ տվել, սխալ են նաև իրենք: Այսինքն՝ ճապոնացու համար ինքնահարգանքի պահպանումն ավելի կարևոր է, քան սեփական կյանքը: Կասեք՝ ծայրահեղություն է, գուցե, բայց դա Ճապոնիան է:



Այս առումով հետաքրքիր են նաև ռուսները: Նրանք հայտնի են իրենց խիստ բևեռացված էությամբ ու վարքագծով: Ռուս մեծ հոգեբան և փիլիսոփա Նիկոլայ Բերդյաևը գրում է՝ **«Ռուսական խառնվածքին բնորոշ է երկու բան՝ մեկը ուղղափառ խոնարհությունն է, մյուս՝ հեթանոս տարերքը: Ուղղափառ խոնարհությունը մեր ազգին պահում է շարունակական թմբիրի մեջ, բայց երբ արթնանում է հեթանոս տարերքը, սկսվում են ապստամբություններն ու արյունոտ հեղափոխությունները: Ոչինչ մեզ այդքան լավ չի համախմբում, որքան արտաքին թշնամին»:**

Ելցինյան Ռուսաստանն իր ինքնահարգանքն ու արժանապատվությունը գրեթե կորցրած երկիր էր, ու եթե չլինեին ՌԴ զինված ուժերի միջուկային մարտագլխիկները, ապա Արևմուտքը վաղուց նրան խժռած կլիներ: Պուտինյան Ռուսաստանը բեկում մտցրեց իրավիճակի մեջ և ամբողջ թափով ուժեղացրեց թե՛ իր տնտեսական հզորությունները, և թե ռազմական ներուժը ու հիմա ստիպում է ՆԱՏՕ-ին քորել ծոծրակը՝ որևէ լուրջ քայլ ձեռնարկելուց առաջ: Այսպիսով, ռուսական ինքնահարգանքը բարձր պահելու համար արտաքին թշնամի է պետք: Մեր դեպքում այլ է, մենք ունենք այդ մշտարթուն, այդպես էլ չմարդկայնացող թշնամուն, որի սուրն անգամ մեկ ակնթարթ չի դադարում ճոճվել մեր գլխավերևում: Ու

այդ ճոճվող սրի դեմ հայությունը ստեղծեց իր սուրը, իր լավ բանակը:

90-ականներին, երբ կազմավորվեց հայկական բանակը, և հրապարակով խրոխտ ընթացքով սկսեցին անցնել մեր զրահատեխնիկան ու արցախյան պատերազմի բովով անցած քաջարի զինվորներն ու սպաները, հայության սիրտը փառավորվեց ինքնահարգանքից: Ծնվել էր մեր արժանապատվության պահապանը՝ Հայոց բանակը: Հայի համար ինքնահարգանքն ունի նաև այլ բովանդակություն՝ նա պիտի լինի իրեն շրջապատող մարդկանց կողմից ընդունված՝ այլոց օգնության ձեռք մեկնող, սոցիալական ամուր դիրքերի տեր, բարոյական, պարկեշտ և, ամենակարևորը, մարդկային ու մարդասեր: Եվրոպացին իրեն բոլորովին վատ չի զգա, եթե անտարբեր անցնի օգնության կարիք ունեցող մարդու կողքով, ինչը որ խորթ է մեր հոգեկերտվածքին: Այս ճշմարտության ականատեսն ինքս եմ եղել. Խորհրդային տարիներին գնացքով Մոսկվա էի մեկնում: Մեր կուպեում մի երիտասարդ տղա կար, որը Կրասնոդար պիտի հասներ: Կիրովականում, փոքր երեխայի հետ, մի երիտասարդ կին գնացք բարձրացավ: Պարզվեց, այդ տղայի և կնոջ տեղերը նույնն են, հավանաբար նույն տեղի համար տոմսի կրկնակի վաճառք էր եղել: Փոքր վեճ եղավ, երկուսն էլ հավասարապես ճիշտ էին, բայց իր դիրքերը արագ հանձնեց երիտասարդ տղան: Երկար ժամանակ նա շփոթված դեգերում էր գնացքի միջանցքներում: Հետո նրան մոտեցավ մի տարեց մարդ, որը տեղյակ էր կատարվածից ու ասաց. **«Ապրե՛ս, տղաս, կարգին հայ տղան, իրեն հարգող հայ տղամարդն այլ կերպ չէր էլ կարող վարվել...»:** Շվեդի, ֆրանսիացու կամ անգլիացու համար սա կլիներ անընդունելի, նույնիսկ՝ վայրի արարք: Հայի ընկալումներում՝ եթե մի բան բարոյական չէ, մարդկային չէ, արդեն ճիշտ չէ: Հայի համար իրավունքը երկրորդական, բարոյականությանը ստորադասված բան է, և հայն ուժեղ է հատկապես իր մարդասիրությամբ: Սա հայկական գոյաձևի առանցքն է, կենսափիլիսոփայությունը: Հիմա սա լա՞վ է, թե՞ վատ, այլ հարց է, բայց դա մենք ենք ու մեր նկարագիրը: Մարդու ինքնագնահարգանքը տեսանելի և անտես թելերով կապված է ազգային «էգո»-ի, կամ հավաքական «մենքի» հետ: Որքան ուժեղ և կարծր է այդ էգոն, այնքան կազմակերպված է տվյալ ազգը: Գերմանական մեծամտությունը ծնեց ֆաշիզմ, այն աղետ բերեց մարդկության գլխին, բայց այդ նույն «էգոն» օգնեց նաև, որ Գերմանիան կարճ ժամանակ անց կրկին վեր հառնի փլատակներից, զարգանա ու դառնա Եվրոպայի տնտեսական հսկան: Այս ամենի հիմքում, առաջին հերթին, ինքնահարգանքն է, չհանձնվելու, դիմադրելու կարողությունը:

Ուինսթոն Չերչիլն այլևս վարչապետ չէր. նրան հրավիրել էին դասախոսություն կարդալու այն քոլեջում, որտեղ ինքն էր սովորել: Այդ ելույթի հանդեպ Անգլիայում հետաքրքրությունը շատ մեծ էր: Եվ երբ եկավ այդ օրը, բոլորը սպասում էին մի ծավալուն ճոխ ելույթի: Բայց Չերչիլը մոտեցավ ամբիոնին, երկար դադար տվեց, նայեց դահլիճին ու ասաց. **«Հարգեք ինքներդ ձեզ և երբեք, երբեք, երբեք մի՛ հանձնվեք...»:** Այսքանը:

Ինչո՞ւ են պետությունները այդքան մեծ փողեր ծախսում սպորտի վրա: Պարզ պատճառով՝ աշխարհի առաջնություններում նվաճված մեդալները փառավորում և վեհացնում են տվյալ ազգին, շեշտակիորեն մեծացնում ինքնահարգանքը: Օրինակ, ի՞նչ տեղի կունենա, եթե Հայաստանի ֆուտբոլի ազգային հավաքականը դառնա աշխարհի չեմպիոն: Այո՛, միանգամայն ճիշտ եք, Հայաստանը մի ակնթարթում կհայտնվի աշխարհի «քաղաքական քարտեզին»: Պատահական չի, որ «Արարատ-73»-ն այդպես դաջվել է հայության հիշողությունում:

Հիմա խոսենք այս օրերին մեզ համար ցավոտ մի հարցի մասին: Ի՞նչ է տեղի ունենում ինքնահարգանքի բացակայության դեպքում: Ըստ հոգեբանների՝ երբ մարդը մի վատ արարք է թույլ տալիս, ասենք, դավաճանություն, կաշառք է վերցնում, դիմում է հակահրավական քայլերի, դաժան կամ սրբապիղծ բան է անում, նա ընկնում է տվայտանքների մեջ: Սկսվում է անձի երկփեղկումը և ուզի-չուզի պիտի առերեսվի իր արարքի հետ: Սա ծանր բան է, սա նաև նշանակում է, որ վթարվել է մարդու ինքնահարգանքը: Եթե մարդը բնույթով ազնիվ է, ապա նա գիտակցում է թույլ տված սխալը, քննում է կատարվածը, ապաշխարում է, եթե մեկին ցավ է պատճառել՝ ներողություն է խնդրում և այլն: Այլ կերպ ասած՝ նրա հոգեբանության մեջ սկսվում են մաքրագործման, կատարսիսի գործընթացները: Այսպես լինում է, բայց ա՜վաղ, ոչ հաճախ: Տրամագծո-

րեն հակառակն է լինում, երբ մարդը չի ուզում, չի կարողանում, քաջություն չունի կամ չի էլ փորձում, այսպես ասած, «դարձի գալ»: Մարդկային այս տիպը, օրինակ, երբ սուտ է խոսում, հետո ստիպված հորինում է ևս երեք սուտ՝ առաջին սուտը փրկելու համար, այնուհետև՝ ևս հինգը՝ փրկելու համար վերջին երեքը: Սա արդեն նրան գլորում է կեղծիքի արատավոր շրջանի մեջ: Սա անձի այլասերման, ինքնահարգանքի փլուզման դասական պատկերն է, որի լավագույն նմուշօրինակը Նիկոլ անունով երևույթն է: Այստեղից սկիզբ է առնում մարդու ստոր արարքների շքերթը: Հիմա պատկերացրեք, թե ի՞նչ մասշտաբների աղետ է, երբ այս այլասերված անձը երկրի վարչապետն է: Ռուսերենում **«ЧМО հապավումը նշանակում է՝ человек морально обосранный, «բարոյապես այլասերված, ապականված մարդ»:** Իսկ ի՞նչ է անում ապականված, այլասերված և ինքնահարգանքից լիովին զուրկ անձը: Նա նախ՝ ինքնարդարացումներ է հորինում իր արարքների համար, հետո սկսում է տարբեր ձևերով այլասերել ու ապականել իր շրջապատի մարդկանց: Դա արդեն նրա պաշտպանության և ինքնարդարացման ամենակարճ ուղին է:

Հոգեբանների դիտարկումները ցույց են տվել, որ ինքնահարգանքից զրկված անձի գիտակցությունը պղտոր է, նրա խոսքը՝ իմպուլսիվ, շատ հարցերում՝ հիվանդագին և անտրամաբանական: Եթե մի պահ անտեսենք ադրբեջանաթուրքական պատվերների հանգամանքը, պարզորոշ կտեսնենք, որ Նիկոլի խոսքը և մտքերը շատ նման են զառանցանքի: Ներքին վախերն ու ջղաձգումները թույլ չեն տալիս, որ նա մնա բանականության գծի վրա: Այս վախերի պատճառով կառավարության անդամները, պատգամավորները, դատախազները, դատավորները, ոստիկանները և այլոք դարձել են «վարչապետի զրահաբաճկոնը»: Ի վերջո, երկրում միշտ էլ կգտնվեն որոշակի թվով վախկոտ, թուլամորթ ու ծախու արարածներ, ճորտեր ու պնակալեզներ: Սա դեռ փորձանքի կեսն է, մյուս կեսը, որը ոչ պակաս հրեշավոր է, այն է, որ իրականացվում է մի կեղտոտ քաղաքականություն, տարվում է քստմնելի քարոզչություն՝ որքան հնարավոր է շատ մարդկանց, սոցիալական խմբերի ինքնահագանքից ու արժանապատվությունից զրկելու, նրանց ամորձատելու ուղղությամբ: Դեռ հին հույներն էին ասում՝ «**Հավասարապես վտանգավոր է սուրը տալ խելագարի ձեռքը, կամ իշխանությունը հանձնել պատվազուրկին...»:** Եթե նկատի ունենանք, որ արժանապատվությունը կորցրած, պատվազուրկ սույն անձին իրենց թիրախում պահում են թուք-բրիտանական գաղտնի ծառայությունները և ուղղորդում ցանկալի հունով, ապա ամեն բան իր տեղը կընկնի: Ի դեպ, մի՞թե զարմանալի չէ, որ երկրի գլխին այսքան աղետ բերած մարդը դեռ իշխանության ղեկին է, իսկ ընդդիմադիր շարժումները չեն կարողանում սրան տապալել: Սա ինքնահարգանքի պակասի լուրջ ցուցիչ է, թեև կա մի բան ևս. բռնցքամարտում, օրինակ, մենամարտողները փորձում են հարվածը հասցնել հատկապես մրցակցի

գլխին, որովհետև գլուխն է կառավարում մարմնի կոորդինացիան: Ժողովուրդը որքան էլ ուզում էր դա անել, բան չէր ստացվում՝ Նիկոլի գլուխը Հայաստանում չի, այլ Անկարայում, հետևաբար հարվածները դիպչում են ամեն տեղ, բացի գլխից: Հենց Անկարայից էլ նրան «միացնում ու անջատում են...»: Թուրքերի ահից Նիկոլն ու իր ճորտերն այնքան են այլասերվել, որ արցախյան կռվի հերոսների անունը լսելիս ընկնում են ցնցումների մեջ: Ի՞նչ են զգում նրանք, երբ տեսնում են Աշոտ Ղուլյանի, Մոնթեի, Դուշման Վարդանի, Լեոնիդ Ազգալդյանի, Շահեն Մեղրյանի, Պետոյի, Կարոտի և մյուս քաջ հայորդիների նկարները, ի՞նչ է տեղի ունենում, երբ լսում են «Լիսբոնյան» պայծառ տղերքի ինքնազոհաբերության մասին: Օրինակ, ի՞նչ են զգում այս նիկոլաճորտերը և նրանց սազանդարներ տիգրանհակոբյանները, լևոնշիրինյանները, պետրոսղազարյանները և այլք, երբ անցնում են «**Արժանապատվության ասպետներ**» հուշահամալիրի կողքով: Ի՞նչ են մտածում՝ ո՞րն էր այս հերոսների սխրանքի և զոհաբերության իմաստը, նպատակը: Ի՞նչ պատասխաններ ունեն նրանք այս հարցերին: Թեև՝ ո՞վ է տեսել, որ ճորտերը հարցեր ու պատասխաններ ունենան: Ու եթե այդպես է, ապա ինչո՞ւ են նրանք մինչ օրս թրևում իշխանության միջանցքներում և խաղում ժողովրդի ճակատագրի հետ: Ժամանա՞կը չէ արդյոք կառավարման համակարգը հիմնովին մաքրել նրանցից՝ նրանց տիրապետող ներկայությունից մաքրել երկիրը, որպեսզի ինքնահարգանք և արժանապատվություն ունեցող մարդիկ ապրեն ու լիաթոք շնչեն իրենց հայրենիքում:

Ռուս-վրացական հարաբերություններն այցագրային և հաղորդակցության ոլորտներում

Այցագրային կարգը ռուս-վրացական հարաբերություններում (մաս 1)

Վահե Սարգսյան
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտաշխատող

ՌԴ նախագահի զույգ հրամանագրերը. շրջադարձ ռուս-վրացական քառորդդարյա հարաբերություններում

ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը Վրաստանի քաղաքացիների համար 2023 թ. մայիսի 15-ից չեղարկեց այցագրային կարգը: *«Սահմանել, որ «2023 թվականի մայիսի 15-ից Վրաստանի քաղաքացիները մուտք են գործում Ռուսաստանի Դաշնություն և հեռանում Ռուսաստանի Դաշնությունից՝ առանց անձը հաստատող վավեր փաստաթղթերի հիման վրա վիզա ձևակերպելու <…>, բացառությամբ Ռուսաստանի Դաշնությունում աշխատանքային գործունեություն իրականացնելու նպատակով կամ ավելի քան 90 օր ժամկետով Ռուսաստանի Դաշնությունում ժամանակավոր գտնվելու համար մուտք գործող քաղաքացիների, այդ թվում՝ կրթություն ստանալու նպատակով»,-* ասված է փաստաթղթում[1]:

Հրամանագրով սահմանված են նաև ՌԴ-ում Շվեյցարիայի դեսպանատան Վրաստանի շահերի բաժնի աշխատակիցների կարգավիճակով Ռուսաստան գործուղված Վրաստանի քաղաքացիների և նրանց ընտանիքների անդամների համար սահմանված կանոնները: Փաստաթղթի համաձայն՝ նրանց կտրամադրվեն միանվագ վիզաներ՝ երեք ամիս ժամկետով, իսկ ՌԴ ԱԳՆ-ի կողմից այդ աշխատակիցների հավատարմագրումից հետո նրանք և նրանց ընտանիքները հավատարմագրման ողջ ժամանակահատվածում կկարողանան ՌԴ այցելել առանց մուտքի արտոնագրի:

Հավելենք, որ ՌԴ նախագահի նույն օրվա մեկ այլ հրամանագրով վերացվել է Ռուսաստանի և Վրաստանի միջև ուղիղ չվերթների արգելքը[2]:

Ելնելով այն հանգամանքից, որ Վրաստանը Մ. Սաակաշվիլու իշխանության գալուց ի վեր համարվել և ընկալվել է իբրև արևմտյան (հակառուսական) ուղեծրում գտնվող երկիր, Վլ. Պուտինի այս հրամանագրերն անակնկալ շրջադարձ էին շատերի համար: Այդուհանդերձ, այն շրջանակները, ովքեր տիրապետում էին Վրաստանի ներկայիս իշխանության վարքագծում և վրաց-ռուսական հարաբերությունների «ստորջրյա» տարածության մեջ տեղի ունեցող փոփոխություններին, որևէ զարմանք չապրեցին: Այդ շրջանակները լավագույնս տեղյակ էին, որ Վրաստանի իշխանությունները, հակադրվելով Մ. Սաակաշվիլու ծայրահեղ արևմտաթուրքամետ ուղեգծին, վերջին շրջանում որդեգրել են հավասարակշռված արտաքին քաղաքական կողմնորոշում: Հայտարարելով, որ իրենց նպատակը ԵՄ թեկնածուի կարգավիճակ ստանալն ու եվրաինտեգրման ուղիով գնալն է[3], այդուհանդերձ, Վրաստանի իշխանությունները հաստատուն քայլերով դուրս են գալիս Արևմուտքի թելադրանքի դաշտից: Ռուսաստան-Ուկրաինա զինված գործողությունների մեկնարկից հետո (2022 թ. փետրվարի 24) Վրաստանը խոշոր հաշվով չմիացավ Արևմուտքի մի շարք գործողություններին, որոնք ուղղված էին Ռուսաստանի դեմ: Ի պատասխան այդ ամենի՝ Արևմուտքը, զորաշարժի ենթարկելով Վրաստանում իր ազդեցության տակ գտնվող ուժերին, կազմակերպություններին ու հասարակական շրջանակներին, 2023 թ. փետրվար-մարտին Վրաստանում հեղաշրջում իրականացնելու, Արևմուտքի խամաճիկ ուժերին իշխանության բերելու և Ռուսաստանի դեմ երկրորդ ճակատ բացելու փորձ կատարեց: Դրա համար իբրև առիթ օգտագործվեց օտարերկրյա ազդեցության գործակալների մասին հայտնի օրինագծերի ընդունման նախաձեռնությունը: Չնայած նշված օրինագծերը տվյալ փուլում հետ կանչվեցին, այդուհանդերձ, Վրաստանի իշխանություններն իրենց հաշվարկված քայլերի շնորհիվ ձախողեցին Արևմուտքի այս ծրագիրը[4]: Մոտավորապես նույնը տեղի ունեցավ մեկ տարի անց՝ 2024 թ., երբ նույն թվականի ապրիլին կրկին ասպարեզ բերվեց *«Արտաքին ազդեցության թափանցիկության մասին»* օրինագիծը: Այդուհանդերձ, Արևմուտքի

դրդմամբ կրկին բողոքի ալիք բարձրացրած հասարակական կազմակերպություններին ու ուժերին այս անգամ ևս չհաջողվեց առիթն օգտագործել և Վրաստանում իրականացնել գունավոր հեղափոխություն: Ավելին, Վրաստանի իշխանությունները կարողացան ոչ միայն կառավարել ծայրահեղ լարված իրավիճակն ու թույլ չտալ զանգվածային բախումներ, այլև շուրջ մեկ ամիս տևած խորհրդարանական քննարկումների արդյունքում ընդունեցին օրինագիծը: Եվ չնայած Վրաստանի նախագահի կիրառած վետոյին և Արևմուտքի շեշտակի ճնշումներին՝ օրենքը[5], այնուամենայնիվ, 2024 թ. հունիսի 3-ին ստորագրեց խորհրդարանի նախագահ Շալվա Պապուաշվիլին[6], և այն ուժի մեջ մտավ հաջորդ օրը՝ հունիսի 4-ին[7]:

Վլ. Պուտինի ստորագրած վերոնշյալ երկու հրամանագրերը, անկախ վերոնշալ իրողություններից, բացառիկ էին և շրջադարձային նշանակություն ունեցան վրաց-ռուսական հարաբերություններում: Իսկ եթե փաստենք, որ Վրաստանի հետ այցագրային կարգը Ռուսաստանի իշխանությունների որոշմամբ մտցվել է հեռավոր 2000 թ., ապա շուրջ քառորդ դար անց այդ որոշման չեղարկումը, իրավամբ, կարելի է անվանել դարակազմիկ իրադարձություն:

Այցագրային կարգի սահմանումը ռուս-վրացական հարաբերություններում

Ինչպես նշեցինք՝ 2000 թ. դեկտեմբերին Ռուսաստանի կառավարության որոշմամբ այցագրային նոր կարգ սահմանվեց Վրաստանի քաղաքացիների համար: Պատճառը 1999 թ. մեկնարկած երկրորդ չեչենական պատերազմն էր, երբ առաջացել էր չեչեն գրոհայինների մուտքը Վրաստանի տարածքից դեպի Ռուսաստան կանխելու անհրաժեշտություն[8]: Այնուհետև Վրաստանը այցագրային կարգ սահմանեց ՌԴ քաղաքացիների համար, որը 2004 թվականից գործում էր պարզեցված կարգով:

2003 թ. նոյեմբերին տեղի ունեցած իշխանափոխությունից հետո Մ. Սաակաշվիլին, ով 2004 թ. հունվարի 4-ին կայացած նախագահական ընտրությունների արդյունքում ընտրվել էր նախագահ, 2004 թ. փետրվարի 10-11-ը Ռուսաստանի Դաշնություն առաջին պաշտոնական այցի ժամանակ հայտարարեց, որ *«... կողմերը պետք է լուծեն հիմնախնդիրների մի ամբողջ շարք, <u>ներառյալ այցագրային ռեժիմը</u> (ընդգծումը - Վ.Ս.), տնտեսական համագործակցության հարցերը և վրացական ինքնավարությունների հիմնախնդիրները»*[9]: Այդուհանդերձ, արտաքին քաղաքականության բոլորովին այլ վեկտոր որդեգրած Մ. Սաակաշվիլու՝ ՌԴ բարձրագույն ղեկավարության հետ բազմաթիվ հարցերի շուրջ քննարկումներն առավել շատ դեկլարատիվ բնույթի էին, ձեռք բերված պայմանավորվածությունները և ստորագրված մի քանի երկկողմ փաստաթղթերը ևս ձևական էին, և կոնկրետ հարցերի շուրջ պայմանավորվածության բացակայության պայմաններում ռուսական կողմն այդ փուլում որևէ հիմք չստացավ սահմանված այցագրային կարգի չեղարկման համար: Նման հիմքեր առաջ

Վլ. Պուտին, Մ. Սաակաշվիլի, Մոսկվա, 11.02.2004 թ.

վել ևս չստեղծվեցին Մ. Սաակաշվիլու կառավարման հետագա տարիներին, երբ երկիրն արագորեն մտավ ծայրահեղ հակառուսական ուղեծիր:

2008 թվականի սեպտեմբերի 2-ին Վրաստանը խզեց դիվանագիտական հարաբերությունները ՌԴ-ի հետ[10]: Դիվանագիտական հարաբերությունների խզումից հետո Վրաստանը ինտեգրացիոն միավորումների մակարդակով դադարեցրեց համագործակցությունը Ռուսաստանի հետ. 2008 թ. օգոստոսի 18-ին Վրաստանի արտաքին գործերի նախարարությունը ԱՊՀ գործադիր կոմիտեին ծանուցում է ուղարկել Համագործակցությունից երկրի դուրս գալու մասին: ԱՊՀ կանոնադրության համաձայն՝ պետությունը հայտնում է այս մտադրության մասին դուրս գալուց 12 ամիս առաջ: Որպես հետևանք, ԱՊՀ արտաքին գործերի նախարարների խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 9-ի որոշման համաձայն՝ Վրաստանը ԱՊՀ անդամ չէ 2009 թվականի օգոստոսի 18-ից (անդամակցում էր 1993 թվականից)[11]: Երկրների միջև քաղաքական շփումները շարունակվել են ժնևյան միջազգային քննարկումների ձևաչափով, որոնք անցկացվում են ՄԱԿ-ի, ԵՄ-ի և ԵԱՀԿ-ի հովանու ներքո: 2008 թ. վրաց-օսական հնգօրյա պատերազմից հետո ստեղծված ժնևյան քննարկումների ձևաչափին մասնակցում են Վրաստանի, Աբխազիայի, Հարավային Օսիայի, Ռուսաստանի, ԱՄՆ-ի, ԵԱՀԿ-ի, ԵՄ-ի և ՄԱԿ-ի ներկայացուցիչները[12]:

Դիվանագիտական հարաբերությունների խզումից հետո երկու երկրների հյուպատոսական հարցերը լուծվում են Ռուսաստանում և Վրաստանում Շվեյցարիայի դեսպանատների շահերի բաժիններում. ՌԴ-ի, Վրաստանի և Շվեյցարիայի միջև համապատասխան նոտաների փոխանակման արդյունքների համաձայն՝ 2009 թ. մարտի 5-ին ՌԴ-ում Շվեյցարիայի դեսպանատան աջակցությամբ ՌԴ-ում Վրաստանի նախկին դեսպանատան շենքում բացվեց Վրաստանի շահերի բաժինը, միաժամանակ՝ Թբիլիսիում Շվեյցարիայի դեսպանատանը բացվեց ՌԴ շահերի բաժինը[13]:

ՀՀ ԱԺ. նախագահ Գ. Սահակյան, Վրաստանի վարչապետ Ի. Ղարիբաշվիլի, Թբիլիսի, 07. 10. 2014 թ.

Վրաստանի քայլերը

Վրաստանի նախագահի 2012 թվականի փետրվարի 28-ի հրամանագրով Վրաստանը վիզաների պահանջը ռուսների համար վերացրեց[14]: Ըստ օրենսդրական փոփոխության՝ Վրաստան մուտք գործելու և մինչև 90 օր մնալու համար ՌԴ քաղաքացիներից վիզա չէր պահանջվում:

2014 թ. մարտի 5-ին Վրաստանի խորհրդարանի կողմից ընդունվեց և նույն թվականի սեպտեմբերի 1-ին ուժի մեջ մտավ *«Օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց իրավական կարգավիճակի մասին»* Վրաստանի նոր օրենքը[15]: Նույն օրը՝ սեպտեմբերի 1-ին, հրապարակվեց Վրաստանի կառավարության որոշումը այն երկրների ցանկը հաստատելու մասին, որոնց քաղաքացիները կարող են մուտք գործել Վրաստան առանց վիզայի և երկրում մնալ 90 օրացույցային օր՝ ցանկացած 180 օրվա ընթացքում[16]: Վերջին այս որոշմամբ հաստատված երկրների ցանկում ՌԴ-ի հետ մեկտեղ նաև ՀՀ-ն էր, ինչը մեծ հուզումների տեղիք տվեց հատկապես Ջավախքում ապրող հայության շրջանում: Բանն այն է, որ Ջավախքում ապրող և ՀՀ քաղաքացիություն ունեցող բազմահազար հայությունը դրանով զրկվում էր ամբողջ տարին Վրաստանում ապրելու հնարավորությունից և ստիպված էր յուրաքանչյուր 180 օրվա կեսը (այսինքն՝ տարվա կեսը) հեռանալ սեփական տնից: Ողջ տարին Վրաստանում ապրելու համար պահանջվում էր կացության իրավունքի ձեռքբերում, ինչը տվյալ փուլում չափազանց դժվար, երբեմն՝ անհաղթահարելի խնդիր էր շատերի համար. բազմաթիվ էին դեպքերը, երբ մերժում էին մարդկանց կացության իրավունքի դիմումներն առանց պատճառի, զավեշտալի հիմնավորումներով, իսկ հաճախ՝ քաղաքական պատրվակներով[17]:

Խնդիրը բարձրաձայնվեց ՀՀ ԱԺ նախագահ Գալուստ Սահակյանի գլխավորած պատվիրակության՝ 2014 թ. հոկտեմբերի 6-8-ը պաշտոնական այցով Վրաստանում գտնվելու ժամանակ: Այցի առաջին օրը՝ հոկտեմբերի 6-ին, ջավախահայ մի խումբ մտավորականներ հանդես եկան Վրաստանում գտնվող ՀՀ խորհրդարանական պատվիրակությանն ուղղված հայտարարություն-կոչով՝ նշելով, որ բազմահազար ջավախահայեր դեպի ՌԴ արտագնա աշխատանքի մեկնելու համար հատկապես 2000-ական թթ. հետո հրաժարվել են Վրաստանի քաղաքացիությունից և ձեռք բերել ՀՀ կամ ՌԴ քաղաքացիություն: Մեծ թիվ են կազմում նաև այն ջավախահայերը, որոնք երկքաղաքացիության ինստիտուտի ի հայտ գալով՝ ՀՀ-ում ստացել են երկրորդ քաղաքացիություն, իրենց այդ երկրորդ անձնագիրն օգտագործել են ցամաքային ճանապարհով դեպի ՌԴ մեկնելու համար, դրանով, փաստորեն, բացահայտվել են Վրաստանի համապատասխան գերատեսչությունների կողմից և արագորեն զրկվել Վրաստանի քաղաքացիությունից: Որպես հետևանք՝ տասնյակ հազարավոր ջավախահայեր այժմ, կրելով այլ պետության անձնագիր, սեփական տանը հայտնվել են հյուրի կարգավիճակում: *«…Հայտնում ենք, որ վրացական իշխանությունների այն հավաստիացումները, թե այդպիսի կարգավիճակում գտնվող մարդիկ հեշտությամբ կստանան մշտական կացության իրավունք և կշարունակեն ապրել իրենց տներում, բոլորովին չի համապատասխանում իրականությանը, և հենց այստեղ է ողբերգությունը, որ բազմահազար ջավախահայեր, ստանալով կացության կարգավիճակի մասին դիմումի մերժում, հայտնվել են սեփական հարկի տակ ապրելու իրավունքից զրկվելու վտանգի առաջ»,-* նշված էր հայտարարության մեջ[18]: Ջավախահայ մտավորականները նաև փաստել են, որ ոչ մի ջավախահայ, սեփական քմահաճությունից ելնելով չէ, որ հրաժարվել է Վրաստանի քաղաքացիությունից: *«…Պատճառը պարզ է, և դա մեկն է. հանապազօրյա հացի խնդիրն է դա պարտադրել: Փոխարենը բազմահազար ջավախահայեր, այդ ճանապարհով աշխատելով արտերկրում, միլիոնավոր դոլարներ են բերել Վրաստան, որը խոշոր ներդրում է հանդիսացել տնտեսապես վատթար վիճակում գտնվող մեր երկրի համար: Այդպիսով՝ այլ երկրի անձնագիր ունեցող ջավախահայերը ոչ թե անվստահելի օտարերկրացիներ են (ինչպես դա ընկալում ենք մենք՝ ստանալով կացության կարգավիճակի մերժումներ), այլ Վրաստան պետության և երկրի տնտեսության իսկական նվիրյալ մարդիկ, որոնք այս պահին ևեթ պատրաստ են հետ վերականգնելու իրենց վրացական քաղաքացիությունը, եթե հնարավոր լինի առանց արտագնա աշխատանքի մեկնելու հայթայթել իրենց ապրուստը Վրաստանում»,-* ասված էր կոչի մեջ[19]: Ջավախքից պահանջ էր ներկայացված ՀՀ խորհրդարանական պատվիրակությանը՝ Վրաստանի իշխանությունների հետ բանակցություններում հասնել նրան, որ բոլոր ջավախահայերին անխտիր, անկախ իրենց քաղաքական հայացքներից, տարիքից կամ այլ առանձնահատկություններից, տրվի կացության իրավունքի փաստաթուղթ, որով վերջիններս կշարունակեն ապրել իրենց ընտանիքներում:

Արձագանքելով Վրաստանում ապրող հայության խնդրանքին՝ ՀՀ ԱԺ նախագահը պաշտոնական հանդիպման ժամանակ անդրադարձել է նաև Վրաստանի սահմանած այցագրային նոր կարգին: Դիմելով Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլուն՝ Գալուստ Սահակյանը նշել է հետևյալը. *«Ցանկանում եմ Ձեր ուշադրությունը հրավիրել եւ աջակցությունը խնդրել՝ դյուրացնելու մշտական կացության իրավունքի տրամադրումը հայազգի վրաստանաբնակ այն քաղաքացիներին, որոնք, մեկնելով արտագնա աշխատանքի, ստացել են այլ երկրների քաղաքացիություն: Վրաստանում օրենսդրական փոփոխությունների հետևանքով նրանք հայտնվել են դժվար կացության մեջ՝ հնարավորություն չունենալով մշտապես բնակվել իրենց ընտանիքների հետ»*[20]: Անդրադառնալով Վրաստանում այցագրային կարգին առնչվող օրենսդրական փոփոխություններին՝ Վրաստանի վարչապետը տեղեկացրել է. *«Ասոցացման համաձայնագրի ստորագրման կապակցությամբ մենք ստացել ենք աշխատանքային պլան: Դրանով են պայմանավորված այցագրային ռեժիմի նոր կարգավորումները, որոնցից ելնելով՝ հարկ եղավ օրենսդրությունը ենթարկել որոշակի փոփոխության: Պետությանն իրավունք է վերապահված որոշ երկրների կամ քաղաքացիների նկատմամբ արտոնություններ սահմանելու: Այդ հարցին անպայման լուծում կտրվի»*[21]:

ՀՀ ԱԺ նախագահի այցից հետո իրավիճակն է՛լ ավելի շիկացավ: 2014 թ. դեկտեմբերի 9-ին՝ ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանի՝ Վրաստան այցի նախօրեին, տարածվեց Ջավախքի մի խումբ մտավորականների բաց նամակն ուղղված ՀՀ վարչապետին՝ հայտնելով, որ բազմահազար ջավախահայեր ամեն օր ստանում են կացության իրավունքի թույլտվության մասին դիմումների մերժումներ, և ովքեր, կրկնելով այդ քայլը, արդեն ծախսել են միլիոնավոր լարիներ: Ավելին, Վրաստանի արդարադատության մինիստրությունը մերժել էր անգամ Երևան – Ջավախքի մի շարք շրջաններ ուղևորափոխադրումներ կատարող ՀՀ քաղաքացի վարորդներին, և վերջիններս ստիպված են եղել հետ վերադառնալ Երևան, շատերն էլ օրենքը խախտելու և մի քանի ժամ Վրաստանի տարածքում ավելի մնալու համար տուգանվել են 180 լարիի չափով: «….Օրեցօր աճում է այն ջավախքահայերի թվաքանակը, որոնք գործի բերումով գալով ՀՀ, հետ վերադարձին պարզել են, որ իրենց եռամսյա ժամկետն արդեն լրացել է և իրենք Ջավախք մուտքի իրավունք չունեն: Վերջիններիցս շատերն անգամ կեցության վայր ու միջոցներ չունեն, այնինչ պարտավոր են առնվազն երեք ամիս մնալ ՀՀ-ում: ՀՀ-ում Վրաստանի դեսպանատունն այցելուներին տեղեկացնում է ինչ-որ կայքի հասցե, որտեղ լրացնելով կարող են վիզա ստանալ և մտնել Վրաստան: Սա ևս հարցի լուծում չէ, քանի որ այնտեղ պահանջվող դրույթները անհաղթահարելի են (5.000 լարի հաշվեհամարային տեղեկանք, Ջավախքում հաշվառման վայրի սեփականության վկայական, որը Ջավախքի գյուղական վայրերում պարզապես գոյություն չունի,

ՀՀ և Վրաստանի վարչապետներ Հ. Աբրահամյան և Ի. Ղարիբաշվիլի, Թբիլիսի, 11.11.2014 թ.

և մեծ բարդություններ են ստեղծված այն ձեռք բերելու համար, համաձայնագրեր տան այն անդամների համար ովքեր լինում են արտերկրում և այլն): Միաժամանակ՝ վիզան պարզապես ապահովում է այս քաղաքացիների մուտքը Վրաստան, այն էլ առավելագույնը երեք ամսով, սակայն դրան պետք է հետևի կրկին կացության վկայականի ստացումը, որտեղ էլ դարձյալ երևում են Վրաստանի անվտանգության մարմինների գայլի ականջները, և քաղաքացիները կրկին բախվում են մերժման պատին: Լայն իմաստով այդ վիզան ավելորդ գլխացավանք է, եթե քաղաքացին չի ստանալու կացության իրավունք: Ավելին, եթե Վրաստանը վիզայի միջոցով թույլատրելու է այդ քաղաքացիների մուտքը երկիր և դրա հենքի վրա տալու է կացության իրավունք, ապա ինչո՞ւ է ամիսներ շարունակ, երբ վերջիններս դեռ Վրաստանում գտնվելու իրավունք ունեին, մերժել այդ մարդկանց տալու կացության իրավունքի վկայականներ: Ահա հարցերի մի շարան, որտեղ բացակայում է տարրական տրամաբանությունը»,- բաց նամակում նշել էին ջավախահայ մտավորականները և հավելել, որ մարդիկ արդեն ողջ գյուղերով մեկնում են Ջավախքի շրջկենտրոններ՝ ի նշան բողոքի[22]:

2014 թ. դեկտեմբերի 11-12-ը Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլիի հրավերով պաշտոնական այցով Վրաստան ժամանած ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանի գլխավորած կառավարական պատվիրակությունը, ի թիվս այլ հարցերի, քննարկումների և ձեռք բերված պայմանավորվածությունների[23], հայկական կողմը բարձրացրել է ՀՀ քաղաքացիների՝ 90 օրից ավելի Վրաստանի տարածքում գտնվելու հարցը: Տեղեկացնելով, որ Վրաստանի միգրացիոն քաղաքականության օրենսդրությունում կատարվել են համապատասխան փոփոխություններ, վրացական կողմը բանակցությունների ընթացքում խոստացել է, որ մինչև 2015 թ. առաջին եռամսյակի ավարտը բարձրացված բոլոր խնդիրներին լուծում կտրվի

Զուրաբ Աբաշիձե՝ Վրաստանի հատուկ բանագնաց և Գրիգորի Կարասին՝ ՌԴ փոխարտգործնախարար, Պրահա, դեկտեմբեր 2012 թ.

օտարերկրյա, այդ թվում նաև՝ ՀՀ քաղաքացիների համար[24]:

Ստեղծված լարվածությունը մեղմացավ, երբ Վրաստանի կառավարության 2015 թ. հունիսի 5-ի համապատասխան որոշմամբ չեղարկվեց 2014 թ. որոշումը, և ինչպես Ռուսաստանի Դաշնության, այնպես էլ ՀՀ քաղաքացիներին իրավունք տրվեց Վրաստան այցելել առանց վիզաների և մնալ երկրում մինչև մեկ տարի[25]:

Ռուսաստանի քայլերը

Ռուսաստանի կողմից Վրաստանի քաղաքացիների հանդեպ սահմանված այցագրային կարգի մեղմացման խնդիրն առավել ակտիվորեն քննարկվել է Վրաստանում 2012 թ. տեղի ունեցած իշխանափոխությունից հետո: Նույն թվականի դեկտեմբերին հանդիպելով Պրագայում՝ ՌԴ փոխարտգործնախարար Գրիգորի Կարասինի[26] ու ՌԴ-ի հետ հարաբերությունների կարգավորման հարցերով Վրաստանի վարչապետի հատուկ բանագնաց Զուրաբ Աբաշիձեն[27] ազդարարեցին կանոնավոր շփումների և տնտեսական ու հումանիտար հարցերի շուրջ ոչ պաշտոնական երկխոսությունների **(Պրահյան բանակցությունների)** մեկնարկի մասին: Պրահյան բանակցությունների առանցքային հարցերից մեկը մշտապես եղել է ՌԴ-ի կողմից Վրաստանի հանդեպ կիրառվող այցագրային ռեժիմի դյուրացման խնդիրը: Հենց առաջին շփումներից մեկում՝ 2013 թ. հունիսի հինգին, ռուսական կողմը տեղեկացրել է, որ մշակութային, մարզական, գիտական, կրոնական և այլ միջոցառումներին կողմերի ներկայացուցիչների միջև շփումների համար 2013 թ. առաջին վեց ամիսների ընթացքում 25 տոկոսով ավելի շատ մուտքի վիզա է տրվել Վրաստանի քաղաքացիների համար: Հանդիպմանը հայտարարվել է, որ վերացվում են նաև գործարար շրջանակների միջև շփումների ընդլայնման խոչընդոտները: Աշխատանքները շարունակվում են մասնավոր հրավերով ռուսական վիզաների տրամադրման հարցում առավել ճկուն մոտեցում ներդնելու ուղղությամբ, այդ թվում՝ ընտանեկան և ազգակցական կապերի պահպանման համար[28]: ՌԴ արտգործնախարարությունը համանման բովանդակությամբ հայտարարություն տարածեց նաև 2013 թ. սեպտեմբերի 19-ին[29] և նոյեմբերի 21-ին տեղի ունեցած պրահյան հանդիպումներից հետո: Նեյմբերի 21-ի հանդիպման ժամանակ փաստվել է նաև, որ մշակութային, մարզական, գիտական, կրոնական և այլ միջոցառումների մասնակցության համար տրամադրվող ռուսական մուտքի վիզաներից 2013 թ. հունվար-նոյեմբեր ամիսներին 40 տոկոսով ավելի է թողարկվել, քան նախորդ տարվա նույն ժամանակահատվածում[30], իսկ 2014 թ. ապրիլի 16-ի հանդիպմանը հայտարարվել է, որ 2013 թ. ընթացքում տրվել է նման շուրջ 25 հազար վիզա[31]:

Նշված քննարկումների արդյունքում՝ 2015 թ. դեկտեմբերի 23-ից Ռուսաստանը թեթևացրեց Վրաստանի քաղաքացիների համար վիզա ստանալու պայմանները. դեկտեմբերի 22-ին հրապարակվեց արտգործնախարարության պաշտոնական մեկնաբանությունը Վրաստանի քաղաքացիների համար վիզաների ազատականացման միջոցառումների վերաբերյալ: *«Ռուս-վրացական հարաբերությունների կարգավորման շարունակական գործընթացի համատեքստում և երկու երկրների միջև դրական միտումների խթանման շահերից ելնելով, 2015 թ. դեկտեմբերի 23-ից Վրաստանի քաղաքացիներին տրամադրվել են բազմակի բիզնես, աշխատանքային, ուսումնական և մարդասիրական վիզաներ, ինչպես նաև մասնավոր վիզաներ՝ անկախ հրավիրվողի և հրավիրողի փոխհարաբերություններից՝ Ռուսաստանի Դաշնային միգրացիոն ծառայության մարմինների կողմից սահմանված կարգով տրված վավեր հրավերներով: Ռուսական կողմը հաստատակամորեն հավատարիմ է շարունակելու քայլեր ձեռնարկել՝ ուղղված երկու երկրների քաղաքացիների միջև հաղորդակցության հեշտացմանը՝ չբացառելով փոխադարձության հիման վրա առանց այցագրի (վիզայի) ռեժիմի հետագա ներդրումը»,*- նշված էր ՌԴ արտգործնախարարության պաշտոնական հաղորդագրության մեջ[32]: Նույն օրը ՌԴ արտաքին գործերի փոխնախարար Գ. Կարասինի և Վրաստանի վարչապետի հատուկ ներկայացուցիչ Զ. Աբաշիձեի միջև տեղի է ունեցել նաև հեռախոսազրույց, որի ընթացքում Գ. Կարասինը բացատրել է Վրաստանի հետ այցագրային ռեժիմի ազատականացմանն ուղղված ռուսական կողմի միջոցառումները[33]: Պրահյան բանակցությունների հետագա հանդիպումներում կողմերը դրական են գնահատել 2015 թ. վերջին Ռուսաստանի կողմից Վրաստանի քաղաքացիների համար այցագրային ռեժիմի ազատականացմանն ուղղված միջոցառումները[34]:

Ռուս-վրացական հետագա բանակցություններում հայտարարվել է, որ Վրաստանում ռուսական վիզաների պահանջարկը մնում է հետևողականորեն բարձր, և Վրաստանի քաղաքացիների համար այցագրային ռեժիմի ազատականացման ուղղությամբ տարվող աշխատանքները շարունակվել են: Մասնավորապես, ՌԴ կառավարությունը քննարկել է վրացական ավիաընկերությունների անձնակազմերի համար այցագրային ռեժիմի պարզեցման հարցը[35]: 2017 թ. փետրվարին կողմերը փաստել են, որ Ռուսաստանի կողմից 2015 թ. դեկտեմբերի 23-ից Վրաստանի քաղաքացիների համար վիզաների ազատականացման շնորհիվ Թբիլիսիում Ռուսաստանի Դաշնության շահերի բաժնի կողմից թողարկված վիզաների թիվը կրկնապատկվել է: Գ. Կարասինը հաստատել է այցագրային ռեժիմի հետագա մեղմացման իր մտադրությունը՝ չբացառելով ապագայում դրա վերացումը[36]:

Արդեն 2024 թ. մարտին, ողջունելով Վրաստանի վարչապետի որոշումը, ըստ որի՝ Ջուրաբ Արաշիձեն կգբաղեցնի վարչապետի խորհրդականի պաշտոնը, իսկ նրա փոխարեն Ռուսաստանի հետ հարաբերությունների հարցերով վարչապետի հատուկ ներկայացուցչի պաշտոնը կգբաղեցնի Գիորգի Քաջայան, ով տարիներ շարունակ եղել է Շվեյցարիայի Համադաշնության դեսպանատան Վրաստանի շահերի բաժնի ղեկավարը, ՌԴ Դաշնային ժողովի Դաշնության խորհրդի Միջազգային հարցերի հանձնաժողովի նախագահ Գրիգորի Կարասինը հիշեցրել է, որ 2012 թ. ՌԴ ղեկավարությունն առանց վարանելու աջակցել է երկկողմ հարաբերությունների կարգավորման՝ վրացական իշխանությունների առաջարկած կուրսին, և ստեղծվել է երկխոսության ոչ պաշտոնական մեխանիզմ փոխգործակցության տարբեր ասպեկտների ապաքաղաքականացված քննարկման համար՝ շեշտը դնելով առևտրատնտեսական հարաբերությունների, տրանսպորտային կապերի, հումանիտար շփումների վրա: *«…Տեղի է ունեցել 26 հանդիպում՝ հիմնականում դեմ առ դեմ (համաճարակի ժամանակ՝ տեսակոնֆերանսի միջոցով), մշտական կապը պահպանվել է հեռակա կարգով»*,- նշել է Գ. Կարասինը[37]՝ հավելելով, որ հանդիպումների ընթացքում բազմիցս բարձրացվել են Ռուսաստանի և Վրաստանի բնակիչների միջև հաղորդակցության պայմանների դյուրացման հարցերը, հետևողական աշխատանք է տարվել Վրաստանի քաղաքացիների համար 2000 թվականին ներդրված վիզային ռեժիմի ազատականացման համար պայմաններ ստեղծելու ուղղությամբ: Համապատասխան մեղմացումներն իրականացվել են մի քանի փուլով: Ի վերջո, 2023 թ. մայիսին ՌԴ նախագահի հրամանագրով չեղարկվել են Վրաստանի քաղաքացիների՝ Ռուսաստան կարճաժամկետ ուղևորությունների այցագրերը (վիզաները): Միաժամանակ, վերսկսվել են ուղիղ չվերթները, որոնք ժամանակավորապես չեղարկվել էին չորս տարի առաջ:

Հավելենք, որ 2023 թ. ՌԴ-ի կողմից Վրաստանի քաղաքացիների համար սահմանված այցագրային ռեժիմի վերացումը ողջունել է Վրաստանի արտգործնախարար Իլյա Դարչիաշվիլին՝ նշելով հետևյալը. *«Ռուսաստանի Դաշնությունում ապրում են մեր ավելի քան մեկ միլիոն քաղաքացիները, ովքեր շատ սերտ կապեր ունեն մարդկանց՝ իրենց սիրելիների, Վրաստանում ապրող հարազատների հետ: Դիտելով հումանիտար տեսանկյունից՝ այս որոշումը ողջունելի է ցանկացած պատասխանատու կառավարության համար»*[38]: ՌԴ-ի նշված քայլը դրական առաջընթաց են գնահատել Վրաստանի խորհրդարանի պատգամավորներ ինչպես իշխող ուժից[39], այնպես էլ այլ խմբակցություններից[40], հասարակական տարբեր շրջանակների ներկայացուցիչներ և այլն:

Ամփոփենք: Սահմանված այցագրային կարգը վրաց-ռուսական հետխորհրդային հարաբերությունների բաղկացուցիչ մասն է, յուրօրինակ լակմուսի թուղթ, որը ցույց է տալիս, թե տվյալ փուլում ինչպիսի մակարդակի վրա են երկու երկրների հարաբերությունները: Հաստատվելով Էդ. Շևարդնաձեի օրոք՝ 2000 թ., ամրապնդվելով Մ. Սաակաշվիլու արևմտաթուրքամետ իշխանության տարիներին՝ սահմանված այցագրային կարգը մեծ վնաս հասցրեց թե՛ միջպետական հարաբերություններին, թե՛ առևտրատնտեսական կապերին, թե՛ հոգևոր–մշակութային, հումանիտար շփումներին՝ քաղաքացիների համար դժվարացնելով փոխադարձ այցերը, իսկ որոշ ժամանակահատվածներում ստեղծելով անհաղթահարելի խոչընդոտներ: Պայմանավորված լինելով արտաքին (արևմտյան) ազդեցությամբ՝ այցագրային կարգի առկայությունը շուրջ քառորդ դար բաժանարար գծեր էր ստեղծել ինչպես հոգևոր միևնույն՝ քրիստոնյա-ուղղափառ արժեհամակարգը կրող երկու ժողովուրդների՝ ռուսների (սլավոնական ժողովուրդների) և վրացիների (քարթվելական ժողովուրդների), այնպես էլ Ռուսաստանում և Վրաստանում ապրող կովկասյան միևնույն ազգությունների տարբեր հատվածների միջև (չեչեններ (քիստեր), ավարներ, աբխազներ, օսեր, և այլն): Մ. Սաակաշվիլու իշխանության հեռացումը ռուս-վրացական հարաբերությունների կարգավորման նոր դուռ բացեց: Շուրջ մեկ տասնամյակ (2013-2023 թթ.) տևած բանակցությունները և քննարկումներն, ի վերջո, տվեցին ցանկալի արդյունք. չեղարկվեց սահմանված այցագրային կարգը, ինչը լավագույն նախադրյալ ստեղծեց ՌԴ-Վրաստան դիվանագիտական հարաբերությունների հաստատման և արհեստական անջրպետի հաղթահարման համար:

Մոտ 2,5 տասնամյակ անց՝ Վրաստանի իշխանությունները կարողացան հաղթահարել արտաքին և ներքին ճնշումները, սկսեցին արագ տեմպերով դուրս գալ Արևմուտքի թելադրանքի դաշտից՝ դնելով իրապես անկախ, ազգային-բարոյական արժեքների վրա հիմնված պետության և ամուր պետականության հիմքերը: ■

Հղումներ

1 **Указ Президента Российской Федерации** от 10.05.2023 № 335 «О порядке въезда в Российскую Федерацию и выезда из Российской Федерации граждан Грузии», http://publication.pravo.gov.ru/Document/View/0001202305100004?index=1 (մուտք՝ 05.06.2023).

2 **Указ Президента Российской Федерации** от 10.05.2023 № 336 «О признании утратившим силу Указа Президента Российской Федерации от 21 июня 2019 г. № 287 «Об отдельных мерах по обеспечению национальной безопасности Российской Федерации и защите граждан Российской Федерации от преступных и иных противоправных действий», http://publication.pravo.gov.ru/Document/View/0001202305100003 (մուտք՝ 05.06.2023).

3 Վրաստան-ԵՄ ինտեգրացիոն գործընթացների առնչությամբ փաստենք, որ 2022 թ. հունիսին Եվրոպական խորհուրդը որոշել է ճանաչել Վրաստանի եվրոպական հեռանկարը և պատրաստակամություն հայտնել նրան տալու թեկնածու երկրի կարգավիճակ, հենց որ կատարվեն 12 հայտնի նախապայմանները, այդ թվում՝ բևեռացման վերացում, ապաօլիգարխացում, լրատվամիջոցների բարելավում, դատական իշխանության լիարժեք անկախության միջավայրի ապահովում և այլն [შარლ მიშელი - ევროკავშირის საბჭომ გადაწყვიტა , აღიაროს საქართველოს ევროპული პერსპექტივა, https://1t v .ge/news/sharl-misheli-evrokavshiris-sabchom-gadawyvita-agh i aros-saqartvelos-evropuli-perspeqtiva-da-mzadaa-statusi-mianichos-rogorc-ki-dasakhuli-prio-ritetebi-shesruldeba-saqartvelos-momavali-evrokavshir/ (մուտք՝ 05.06.2023)]:

4 **Ваэ Саркисян,** Изнанка скандалных законопроектов: выбор Грузии, Регион и мир, научно-аналитический журнал, том XIV, N 2, 2023, ст. 9-19:

5 **საქართველოს კანონი,** უცხოური გავლენის გამჭვირვალობის შესახებ, თბილისი, 28 მაისი 2024 წ., N4194-XIVმს-Xმპ, ვებგვერდი, 03/06/2024, https://matsne.gov.ge/ka/document/view/6171895?publication=0 (մուտք՝ 11.07.2024):

6 „გამჭვირვალობის შესახებ» კანონი: როდის დაიწყება ორგანიზაციების რეგისტრაცია, https://sputnik-georgia.com/20240603/rodis-daiwyeba-specialur-portalze-registracia-288238047.html (մուտք՝ 10.07.2024).

7 „უცხოური გავლენის გამჭვირვალობის შესახებ“ კანონი დღეს შევა ძალაში, https://1tv.ge/video/uckhouri-gavlenis-gamchvirvalobis-shesakheb-kanoni-dghes-sheva-dzalashi/ (մուտք՝ 10.07.2024).

8 ՌԴ-ում Վլ. Պուտինի իշխանության գալուց հետո ռուս-վրացական հարաբերությունների համեմատական ջերմությունը, որն առաջացել էր վրաց-աբխազական պատերազմի ավարտին Վրաստանի՝ ԱՊՀ մուտք գործելուց ի վեր, տեղափոխվեց ՌԴ-Աբխազիա և ՌԴ-Հարավային Օսեթիա հարաբերությունների դաշտ: Դա կապված էր երկրորդ չեչենական պատերազմի ընթացքում վրաց-չեչենական սերտ համագործակցության և Վրաստանի՝ ընդգծված հակառուսական քաղաքականության հետ: Արդյունքում, երբ 2000 թ. ՌԴ-ի և Վրաստանի միջև հաստատվեց այցագրային ռեժիմը, վերջինս չտարածվեց Աբխազիայի և Հարավային Օսեթիայի վրա [տե՛ս **Վահե Սարգսյան,** Սամցխե-Ջավախք-Թռեղքը հայ-վրացական հարաբերությունների հոլովույթում (1980-ական թթ. վերջ-1990-ական թթ.), Երևան, 2006, էջ 272]:

9 **Михаил Александров,** Битва за Кавказ: 2004-2008. Институт стран СНГ в борьбе за национальные интересы России на Южном Кавказе, Москва, 2010, Об итогах визита в Москву президента Грузии Михаила Саакашвили, ст. 131.

10 Грузия официально разорвала дипломатические отношения с Россией, https://rg.ru/2008/09/03/a257472.html (մուտք՝ 05.06.2023):

11 Исполнительный комитет Содружества Независимых Государств, Членство Грузии в СНГ прекращено, https://cis.minsk.by/page/14594/clenstvo-gruzii-v-sng-prekraseno (մուտք՝ 05.06.2023): Դեռևս 2006 թվականին՝ վրաց-ռուսական հարաբերությունների վատթարացման հերթական փուլի ժամանակ, Վրաստանը դուրս էր եկել ԱՊՀ երկրների Պաշտպանության նախարարների խորհրդից: ԱՊՀ-ից Վրաստանի դուրս գալու գործընթացի և թողած ազդեցությունների ու հետևանքների մասին առավել մանրամասն տե՛ս В.А. Захаров, А.Г. Арешев, Кавказ после 08.08.08: старые игроки в новой расстановке сил, Москва, 2010, с. 86-97.

12 Женевские дискуссии по Закавказью, https://mid.ru/ru/foreign_policy/vnesnepoliticeskoe-dos-e/problematika-prostranstva-sng/

Ջավախք, Ախալքալաք քաղաքի համայնապատկերը

situacia-vokrug-abhazii-i-uznoj-osetii-zenevskie-diskussii-po-zakavkaz-u/?PAGEN_1=1 (մուտք՝ 05.06.2023): 57-րդ հանդիպումը տեղի է ունեցել 2023 թ. ապրիլին [Press communiqué of the Co-Chairs of the Geneva International Discussions, GENEVA, 5 April 2023, https://www.osce.org/chairpersonship/540939 (մուտք՝ 05.06.2023)]:

13 Секция интересов Грузии Посольства Швейцарии в Москве, https://www.eda.admin.ch/countries/russia/ru/home/vertretungen/botschaft/aufgaben/georgian-interest-section.html (մուտք՝ 05.06.2023).

14 **Սաքարթվելոյի Պրեզիդենտի Յրամանագիր** №149, 2012 թվականի 28 օգոստոսի, ք. Թբիլիսի, „Վիզայի գաղթի, գաղթականության և մուտքի վերաբերյալ Սաքարթվելոյի Պրեզիդենտի 2006 թվականի 28 հունիսի №399 Յրամանագրում փոփոխությունների մասին, https://www.matsne.gov.ge/ka/document/view/1598958?publication=0 (մուտք՝ 05.06.2023).

15 **Սաքարթվելոյի Կանոն** Ազգաբնակչության և մարդաշատ անձանց տեղաբաշխման մասին, 2045-IIs, https://matsne.gov.ge/ka/document/view/2278806?publication=16 (մուտք՝ 05.06.2023).

16 **Սաքարթվելոյի Մեծագույն Դատարան** №522, 2014 թվականի 1 սեպտեմբերի, ք. Թբիլիսի, Ռուսաստանի Դաշնության քաղաքացիներին Սաքարթվելոյում վիզայի ազատ մուտքի մասին, https://matsne.gov.ge/ka/document/view/2483488?publication=0 (մուտք՝ 05.06.2023).

17 ՀՀ-ի հետ այցագրային ռեժիմը լարված իրավիճակ է ստեղծել ջավախահայության մոտ https://times.am/45384/ (մուտք՝ 01.02.2024):

18 Ջավախահայության կոչն՝ ուղղված Վրաստանում գտնվող ՀՀ խորհրդարանական պատվիրակությանը, https://hetq.am/hy/article/56710 (մուտք՝ 10.07.2024):

19 Նույն տեղում:

20 Շարունակվում է ՀՀ Ազգային ժողովի նախագահ Գալուստ Սահակյանի գլխավորած պատվիրակության պաշտոնական այցը Վրաստան, https://georgia.mfa.am/hy/news/2014/10/07/SAHAKYANGALUST/2376 (մուտք՝ 11.07.2024):

21 Նույն տեղում:

22 Ահազանգ Ջավախքից. օտարերկրյա անձնագրերի համար հայությունը չի կարող ապրել այնտեղ, https://168.am/2014/ 12/09/434868.html (մուտք՝ 11.07.2024):

23 Հայաստանի և Վրաստանի վարչապետները հանդես են եկել ԶԼՄ ներկայացուցիչների համար հայտարարությամբ, https://www.gov.am/am/news/item/11716/ (մուտք՝ 11.07.2024), Հայաստանի և Վրաստանի վարչապետները նախաստորագրել են «Բարեկամության» կամուրջի կառուցման համաձայնագիրը, https://www.gov.am/am/news/item/11719/ (մուտք՝ 11.07.2024):

24 Թբիլիսիում կայացել են Հայաստանի և Վրաստանի վարչապետների բարձր մակարդակի բանակցությունները, https://www.gov.am/am/news/item/11715/ (մուտք՝ 11.07.2024):

25 **Սաքարթվելոյի Մեծագույն Դատարան** №255, 2015 թվականի 5 հունիսի, ք. Թբիլիսի, Ռուսաստանի քաղաքացիներին Սաքարթվելոյում վիզայի ազատ մուտքի մասին, https://matsne.gov.ge/ka/document/view/2867361?publication=0 (մուտք՝ 05.06.2023).

26 2019 թ. սեպտեմբերի 12-ից Գրիգորի Կարասինը նշված ձևաչափով հանդիպում-բանակցություններին մասնակցում է իբրև ՌԴ Դաշնային ժողովի (խորհրդարանի) «վերին» պալատի՝ Դաշնության խորհրդի Միջազգային հարցերի հանձնաժողովի նախագահ [տե՛ս http://council.gov.ru/structure/persons/1472/ (մուտք՝ 03.07.2023 г.)]:

27 2024 թ. մարտի 11-ի կառավարության նիստում Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեն հայտնել է, որ Զուրաբ Աբաշիձեն կզբաղեցնի վարչապետի խորհրդականի պաշտոնը, իսկ նրա փոխարեն Ռուսաստանի հետ հարաբերությունների հարցերով վարչապետի հատուկ ներկայացուցչի պաշտոնը կզբաղեցնի Գիորգի Քաջայան, ով տարիներ շարունակ եղել է Շվեյցարիայի Համադաշնության դեսպանատան Վրաստանի շահերի բաժնի ղեկավարը: Շնորհակալություն հայտնելով վարչապետի խորհրդական նշանակված Զուրաբ Աբաշիձեին կատարած աշխատանքի համար՝ Վրաստանի վարչապետը կառավարության նիստում նշել է. *«Պարոն Զուրաբ Աբաշիձեն ինքն է կայացրել իր պաշտոնը լքելու որոշումը: Ինչպես գիտեք, նա տարիներ շարունակ եղել է ՌԴ-ի հետ հարաբերությունների գծով վարչապետի հատուկ ներկայացուցիչը, 10 տարուց ավելի մեծ հաջողությամբ ծառայել է այս գործին: Նրա ջանքերով, մասնակցությամբ ու ներգրավվածությամբ մենք շատ լուրջ ձեռքբերումներ ունեցանք տարբեր ուղղություններով»* [**Սաքարթվելոյի Մեծագույն Դատարան,** Վարչապետի գրասենյակ, https://www.gov.ge/index.php?lang_id=GEO&sec_id=596&info_id=87708 (մուտք՝ 16.07.2024)]:

28 О встрече статс-секретаря – заместителя Министра иностранных дел России Г.Б.Карасина со специальным представителем премьер-министра Грузии по вопросам отношений с Российской Федерацией З.Абашидзе, https://mid.ru/ru/maps/ge/1594833/ (մուտք՝ 01.04.2024).

29 О встрече статс-секретаря - заместителя Министра иностранных дел России Г.Б.Карасина со спецпредставителем Премьер-министра Грузии по вопросам отношений с Российской Федерацией З.Абашидзе, https://mid.ru/ru/maps/ge/1628035/ (մուտք՝ 01.04.2024).

30 О встрече статс-секретаря - заместителя Министра иностранных дел России Г.Б.Карасина со специальным представителем Премьер-министра Грузии по вопросам отношений с Россией З.Абашидзе, https://mid.ru/ru/maps/ge/1628035/ (մուտք՝ 01.04.2024).

31 О встрече статс-секретаря - заместителя Министра иностранных дел России Г.Б.Карасина со спецпредставителем Премьер-министра Грузии по вопросам отношений с Россией З.Абашидзе, https://mid.ru/ru/maps/ge/1727651/ (մուտք՝ 01.04.2024).

32 Комментарий МИД России о мерах по визовой либерализации для граждан Грузии, https://mid.ru/ru/maps/ge/1520466/ (մուտք՝ 05.06.2023). 2018 թվականի օգոստոսի 17-ին Թբիլիսիում բացվել է Ռուսաստանի վիզաների դիմումների կենտրոնը՝ վիզաների գործընթացն արագացնելու և պարզեցնելու նպատակով [տե՛ս История отношений России и Грузии, https://tass.ru/info/17714153?fbclid=IwAR1WNprIsJrhBHo7nwjqWyhm6vp-mHU5r0bnoC3hnaI_wEnyoE2q TTkzO_0 (մուտք՝ 05.06.2023)]:

33 О телефонном разговоре статс-секретаря – заместителя Министра иностранных дел России Г.Б.Карасина со спецпредставителем Премьер-министра Грузии по вопросам взаимоотношений с Российской Федерацией З.Абашидзе, https://mid.ru/ru/maps/ge/1520468/ (մուտք՝ 02.04.2024).

34 О встрече статс-секретаря – заместителя Министра иностранных дел России Г.Б.Карасина со специальным представителем Премьер-министра Грузии З.Абашидзе, https://mid.ru/ru/maps/ge/1524411/ (մուտք՝ 02.04.2024).

35 О встрече статс-секретаря – заместителя Министра иностранных дел России Г.Б.Карасина со спецпредставителем Премьер-министра Грузии З.Абашидзе, https://mid.ru/ru/maps/ge/1536621/ (մուտք՝ 02.04.2024).

36 О встрече статс-секретаря – заместителя Министра иностранных дел России Г.Б.Карасина со спецпредставителем Премьер-министра Грузии З.Абашидзе, https://mid.ru/ru/maps/ge/1541774/ (մուտք՝ 02.04.2024).

37 В СФ заявили, что наработки в неформальном диалоге с Грузией будут востребованы и далее, https://tass.ru/politika/20200001 (вход на сайт 16.07.2024 г.).

38 **Օլոա Դարչիաշվիլի:** Ռուսաստանի մերժումը զբաղեցնում է մեր ազգաբնակչությունը, **https://sputnik-georgia.com/20230510/darchiashvili-rusetis-mxridan-savizo-rejimis-gauqmeba-misasalmebelia-277551937.html** (մուտք՝ 05.06.2023).

39 Դեպուտատ Վիզաների հետ կապված Ռուսաստանի գաղթականության մասին: Սա մեզ ոչ մի բան չի տալիս, https://sputnik-georgia.com/20230510/-277557954.html (մուտք՝ 05.06.2023).

40 Ամենուրեք դատարան - Դեպուտատ Ռուսաստանի գաղթականության մասին, **https://sputnik-georgia.com/20230510/deputati-rusetis-mier-savizo-rejimis-gauqmebaze-277541886.html** (մուտք՝ 05.06.2023).

Իրանի Հարավկովկասյան քաղաքականության հնարավոր տեղաշարժերը

Արամ Շահնազարյան
«ԱԼԻՔ» օրաթերթի գլխավոր խմբագիր

Իրանի Իսլամական Հանրապետությունում տեղի ունեցած նախագահական արտահերթ 14-րդ ընտրություններում հաղթանակ տարավ բարեփոխական Մասուդ Փեզեշքիանը և դարձավ Իսլամական Հանրապետության պատմության 9-րդ նախագահը:

Հիշեցնենք, որ Իրանում հերթական նախագահական ընտրությունները նախատեսված էին 2025 թվականին, սակայն երկիրը ստիպված եղավ գնալու արտահերթ նախագահական ընտրությունների, քանի որ մայիսի 19-ին տեղի ունեցած ուղղաթիռի ողբերգական վթարի հետևանքով զոհվել էր երկրի նախագահ այաթոլլահ Սեյեդ Էբրահիմ Ռայիսին:

Ըստ Իրանի Իսլամական Հանրապետության Սահմանադրական օրենքի 131-րդ հոդվածի՝ եթե երկրի նախագահը մահանում կամ հրաժարական է տալիս, նրա պարտականություններն ստանձնում է առաջին փոխնախագահը, երկրի առաջին դեմքի՝ Գերագույն հոգևոր առաջնորդի հաստատմամբ, որից հետո նախագահի պարտականությունները ստանձնած անձի և օրենսդիր ու դատական իշխանությունների նախագահների մասնակցությամբ ձևավորվում է խորհուրդ, որը 50 օրվա ընթացքում կազմակերպում է նոր նախագահի ընտրություններ:

Փեզեշքիանի հաղթանակը տարատեսակ մեկնաբանությունների տեղիք է տվել հատկապես Հայաստանում, ուր հատուկ ընդգծվում է նրա թյուրքախոս լինելու հանգամանքը: Քիչ չեն այն փորձագետներն ու քաղաքական վերլուծաբանները, որոնք կարծում են, թե Փեզեշքիանի ընտրությունից արտաքին քաղաքական կուրսի էական փոփոխություն ակնկալել պետք չէ, քանի որ Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին քաղաքականության հիմնական սկզբունքները, առաջնահերթությունները, ուղղվածությունն ու կարմիր գծերը նախանշում է երկրի Գերագույն հոգևոր առաջնորդը՝ այաթոլլահ Սեյեդ Ալի Խամենեին, իսկ նախագահը և արտաքին քաղաքական գերատեսչությունը գործում են բացառապես նրա գծած շրջանակում:

Այդուամենայնիվ, քիչ չեն նաև այն փորձագետները, որոնք որոշ վերապահումով և մտահոգությամբ են խոսում Իրանի վերջին նախագահական ընտրություններին հաջորդող հնարավոր իրադարձությունների մասին, չբացառելով որոշակի ռիսկեր՝ Իրանի հարավկովկասյան տարածաշրջանային քաղաքականության հետ կապված՝ ընդհանրապես, իսկ Իրան-Հայաստան հարաբերությունների հարցում՝ հատկապես:

Խնդրին անդրադառնալուց առաջ, անհրաժեշտ է նախ ծանոթանալ Իրանի Իսլամական Հանրապետության պետական կառավարման համակարգին:

Իրանի գործող պետական կառավարման համակարգը ձևավորվել է 1979 թվականին տեղի ունեցած Իսլամական հեղափոխության արդյունքում: Դրա հիմքում ընկած է երկրի կուռ Սահմանադրական օրենքը, որն ընդունվել է 1980 թվականին, ու որոշակի փոփոխությունների և լրացումների է ենթարկվել 1989 թվականին:

Իրանի Սահմանադրական օրենքը ձևաւորվել և մշակվել է «Վելայաթ-է-ֆաղիհ» կրոնադավանական եւ իրավական տեսության հիմի վրա, որում առանցքային և որոշիչ դեր է վերապահված Գերագույն հոգևոր առաջնորդին:

Հոգևոր առաջնորդն ընտրվում է ցմահ՝ Բանիմացների խորհրդի կողմից, որն Իրանի պետական կառավարման համակարգի առանցքային կառույցներից է:

Սահմանադրության 110-րդ հոդվածի Ա կետի համաձայն՝ պետության ընդհանուր քաղաքականությունը որոշում է Գերագույն հոգևոր առաջնորդը:

Նա, լինելով լինելով երկրի ԶՈՒ գերագույն հրամանատարը, Համակարգի նպատակահարմարությունը բնորոշող ժողովի հետ խորհրդակցելուց հետո սահմանում և վերահսկում է Իրանի Իսլամական Հանրապետության ընդհանուր պետական քաղաքականությունը: Ի դեպ, այս ժողովի անդամներին հենց ինքն է նշանակում:

Գերագույն հոգևոր առաջնորդին է վերապահված նաև հանրաքվե անցկացնելու, պատերազմ հայտարարելու և զորահավաք կազմակերպելու իրավունքը:

Բացի այդ, դատական իշխանության ղեկավարը, ԶՈՒ ԳՇ պետը, Բանակի ընդհանուր հրամանատարը, ցամաքային, ռազմաօդային և ռազմածովային ուժերի հրամանատարները, Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի գլխավոր հրամանատարը, Ռադիո-հեռուստատեության կազմակերպության նախագահը նույնպես նշանակվում և ազատվում են նրա հրամանագրով:

Նախագահական ընտրությունների արդյունքում ընտրված նախագահի նշանակման վերաբերյալ հրամանագիրը նույնպես ստորագրվում է Գերագույն հոգևոր առաջնորդի կողմից (Սահմանադրության 110-րդ հոդվածի 9-րդ կետ):

Սա նշանակում է, որ երկրի ներքին ու արտաքին քաղաքականության գլխավոր ուղղությունները որոշում է Գերագույն հոգևոր առաջնորդը:

Իսկ ինչ վերաբերում է երկրի նախագահին, ապա նրա լիազորությունները և պարտականությունները սահմանված են Սահմանադրության 113-րդ հոդածով, համաձայն որի՝ Գերագույն հոգևոր առաջնորդից հետո նախագահը երկրի երկրորդ դեմքն է, պատասխանատու է Սահմանադրության գործադրման համար և երկրի ղեկավարն է, բացառությամբ այն հարցերի, որոնք ուղղակիորեն վերաբերում են Առաջնորդին:

Փորձագետների կարծիքով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ երկրի ներքին ու արտաքին քաղաքականության գլխավոր ուղղությունները նախանշվում են Գերագույն հոգևոր առաջնորդի կողմից, իսկ նախագահի լիազորությունները լավագույն դեպքում իշխանության գործառույթների 20-25 տոկոսն են կազմում, ուստի կարելի է նշել, որ նախագահը և կառավարությունն ընդամենը Առաջնորդի որոշած քաղաքականության գործադրողներն են, և չունեն հնարավորություն այդ որոշումների վրա ազդելու, դրանք փոփոխության կամ վերանայման ենթարկելու համար:

Հենց վերը նշված հանգամանքները հաշվի առնելով՝ կարելի է ենթադրել, որ նախագահի փոփոխությամբ կամ նախագահի դիրքորոշմամբ արտաքին քաղաքականության հայեցակարգում, հատկապես այն բոլոր հարցերում, որոնք ուղղակիորեն կապված են Գերագույն հոգևոր առաջնորդի կողմից սահմանված կարմիր գծերին, զգալի շեղումներ ու փոփոխություններ տեղի չեն ունենա:

Դա հիմնականում այդպես է, սակայն կա մի կարևոր նրբություն ևս. Փորձը ցույց է տվել, որ գործնականում նախանշված սկզբունքների և կարմիր գծերի կիրառման դրսևորումներն հաճախ պայմանավորված են նաև նախագահի քաղաքական հայացքներով ու նրա արտաքին քաղաքական թիմի դիրքորոշումներով ու նախապատվություններով: Հանգամանք, որը երբևիցե չպետք է անտեսել, և որի պատճառով երկրի արտաքին քաղաքականությունը երբեմն կտրուկ ու անգամ շրջադարձային փոփոխությունների է ենթարկվում (դրա մասին է վկայում բարեռոգչական-չափավորական նախագահ Ռոհանիի և պահպանողական նախագահ Ռայիսիի կառավարությունների վարած արտաքին քաղաքականության

համեմատությունը): Եվ հենց այս տրամաբանության շրջանակում է անհրաժեշտ դիտարկել Իրանի՝ հարավկովկասյան քաղաքականությունում հնարավոր տեղաշարժերը, վերադիրքավորումներն ու փոփոխությունները, ինչպես նաև ռիսկերը Փեզեշքիանի պաշտոնավարման ժամանակաշրջանում:

Առաջին հայացքից, տպավորությունն այն է, որ հաշվի առնելով հարավկովկասյան տարածաշրջանում ընթացող աշխարհաքաղաքական զարգացումները, որոնք Իրանի Իսլամական Հանրապետության համար անվտանգային բնույթի լուրջ մարտահրավերի են վերածվել, մենք Իրանի դիրքորոշումների, նախանշած առաջնահերթությունների և կարմիր գծերի փոփոխության ականատեսը չենք լինի: Փեզեշքիանը չի կարող մեծ ցանկության պարագայում անգամ Հարաւային Կովկասում Իրանի համար գործող կարմիր գծերը հատել:

44-օրյա պատերազմին հաջորդած իրադարձությունները, տարածաշրջանում ուժերի դասավորության ու հավասարության կտրուկ փոփոխությունը, արտատարածաշրջանային ուժերի, մասնավորապես Արևմուտքի և Իսրայելի՝ տարածաշրջանում դիրքավորվելու ակնհայտ փորձերը պաշտոնական Թեհրանի համար առավել քան երբևէ կարևորել են Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության և պետականության պահպանումը: Այս համատեքստում Սյունիքի մարզի ռազմավարական նշանակությունն ավելի է ընդգծվել, այնպես որ Իրանի համար Հայաստանի տարածքային ամբողջականություն ասվածն այլևս սոսկ Մեղրիի շրջանում հայ-իրանական սահմանագիծը չէ: Իրանի համար առաջնայինը Սյունիքի մարզն է, դրա ամբողջական պահպանումը Հայաստանի ինքնիշխանության սահմաններում:

Միջազգայնորեն ընդունված սահմանների փոփոխության բացառման, Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության պահպանման մասին ամենաբարձր մակարդակով Թեհրանից հղված կարևոր ազդակներն այդ մասին են վկայում: Այդուհանդերձ չի կարելի բացառել որոշակի ռիսկեր:

Իրականում, թե՛ ներքին, թե՛ արտաքին քաղաքականության ոլորտներում նախանշված և հստակեցված սկզբունքների և առաջնահերթությունների կիրառման դրսևորումները որոշակիորեն պայմա-

նավորված են նաև նախագահի և նրա քաղաքական թիմի հայացքներով ու դիրքորոշումներով: Հանգամանք, ինչի պատճառով երկրի գլոբալ քաղաքականությունը կարող է անգամ շրջադարձային փոփոխությունների ենթարկվել:

Այս հանգամանքն ավելի է ընդգծվում, երբ գործադիր իշխանությունը հայտնվում է բարենորոգչականի վերահսկողության ներքո: Որոշակիորեն Փեզեշքիանի պարագայում ռիսկերը կարող են առավել մտահոգիչ դառնալ, եթե հաշվի առնենք նրա՝ որպես քաղաքական գործչի կերպարը, քաղաքական հայացքները և նախընտրական պայքարի ընթացքում արած հայտարարությունները:

Փաստ է, որ Փեզեշքիանն էությամբ պոպուլիստ քաղաքական գործիչ է: Նա հիանալիորեն կարողանում է իր վրա ուշադրություն գրավել: Շատ մոտ է կանգնած հասարակության զարկերակին, կարողանում է հստակորեն առանձնացնել և անդրադառնալ այն խնդիրներին, որոնք հասարակության լայն շերտերի դժգոհության պատճառ են:

Նրա ելույթներն, ընդհանրապես, մակերեսային են, հիմնականում՝ զուրկ քաղաքական խորքային բովանդակությունից: Փոխարենը՝ խիստ հանրամատչելի են և հասու հատկապես հասարակության ներքևի շերտերին: Տարիների ընթացքում նրան հաջողվել է ամրացնել իր՝ «փոփոխություն բերողի» և «ժողովրդական թեկնածուի» կերպարը:

Միևնույն ժամանակ, նա բացահայտ և հմտորեն խաղարկում է էթնիկական գործոնը: Նա բազմիցս է հայտարարել, որ Իրանում չկա պանթյուրքիզմ, պանքուրդիզմ, պանարաբիզմ կամ պանբելուջիզմ, փոխարենը՝ կա էթնիկ անարդարություն, որը նման մոտեցումների դրսևորման պատճառ է դառնում:

Փեզեշքիանը, 2016 թվականին խորհրդարանում նախաձեռնեց թյուքախոս պատգամավորների ֆրակցիայի ստեղծումը, ինչը ժամանակին մեծ դժգոհության պատճառ դարձավ, և դիտվեց որպես երկրի միասնականությունը վտանգող քայլ ու անջատողականության դրսևորում: Թեև բարենորգչականներն ամեն գնով փորձում են կոծկել Փեզեշքիանի համաթյուրքական կողմնորոշման ընդգծված տարրերը և երկիրը դաշնային կարգերի որոշ չափորոշիչներով կառավարելու ձգտումը, այնուամենայնիվ, փաստ է, որ նրա նախընտրական ծրագրի ընդգծված բաժինը (7 կետեր) վերաբերում է հենց էթնիկ փոքրամասնություններին (որոնց համար նա օգտագործում է ***ազգություններ*** բառակապակցությունը), նահանգներին եւ շիիզմից բացի՝ կրոնական այլ դավանանքներին և ուղղություններին:

Իր նախընտրական ծրագրում, ինչպես նաև ելույթներում նա բազմիցս նշել է, որ իրեն մշտապես մտահոգել է այն հանգամանքը, որ իրանական տարբեր ***ազգությունների*** ներկայացուցիչները, էթնիկ պատկանելիության կամ կրոնական-դավանանքային տարբերության պատճառով «զրկվել և զրկվում են իրանցուն վայել իրենց տեղից ու դերից»:

Թեև կասկածից վեր է, որ Փեզեշքիանը և իր քաղաքական թիմը էթնիկ փոքրամասնությունների և կրոնա-դավանանքային հարցերը հիմնականում շահարկել են ընտրություններում հավելյալ քվեների ապահովելու համար, իսկ ընտրություններից հետո՝ ընտրազանգվածի մոտ նրա վարկանիշը պահպանելու համար, այդուհանդերձ, չի կարելի անտեսել փորձագետների մտահոգությունն առ այն, որ Փեզեշքիանն ու նրա թիմը խաղում են էթնիկ խզումների չափազանց վտանգավոր դաշտում, ինչը կարող է անկանխատեսելի հետևանքներ ունենալ: Բաւական է նշենք, որ ընտրությունների ավարտից հետո անգամ, անջատողականները շարունակում են իրենց ակտիվ գործունեությունը սոցիալական հարթակներում՝ անջատողականությունն իրենց բացարձակ իրավունքը համարելով: Իսկ ինչ վերաբերում է կոնկրետ պանթյուրքիստներին, ապա նրանց հետընտրական քարոզչությունը հիմնականում հիմնված է այն տեսության վրա, որ թրքախոս ընտրազանգվածի քվեն ուներ յստակ ***ազգայնական*** դրսևորում, և որ թրքախոս նահանգներում բարենորոգիչներ ու պահպանողականներ դիսկուրսն այլևս օրակարգային չէ, և գլխավորը՝ ***ազգայնական*** բնույթի պահանջներն են:

Այս համատեքստում, սակայն անհրաժեշտ է նշել, որ անջատողական շարժումները տեղ չունեն և ընդունված չեն իրանական ժողովրդի ճնշիչ մեծամասնության մոտ, և եթե նման դրսեւորումներ լինեն, դրանց կընդդիմանա ժողովուրդը, որը թույլ չի տա այդ տարրերին խաղալ Իրանի տարածքային ամբողջկանության և անվտանգության հետ:

Բացի այդ, չպետք է մոռանալ նաև Իրանի պետական կուռ համակարգի մասին, որի շնորհիվ 1979 թվականին տեղի ունեցած Իսլամական հեղափոխությունից հետո, երկրին հաջողվել է հաղթահարել իր առջև ծառացած ներքին և արտաքին այնպիսի լուրջ մարտահրավերներ, ինչպիսիք են՝ ընդդիմադիր խմբավորումների զինված ապստամբությունները, հեղաշրջան փորձերը, իրան-իրաքյան 8-ամյա պատերազմը, երկարատև միջազգային տնտեսական պատժամիջոցները, ռազմական հարձակման սպառնալիքը, վերջին տարիների հասարակական անկարգություններն ու խռովությունները և այլն:

Ավարտելով թեման, պետք է նշենք, որ Փեզեշքիանի կառավարությունը նման է պանդորայի արկղի: Դեռևս ոչ ոք չգիտի, թե արկղի բացվելուց հետո ինչ տեղի կունենա: Իսկ ինչ վերաբերում է հայ-իրանական հարաբերություններին, ապա անհրաժեշտ է ուշադիր հետևել իրադարձությունների զարգացումներին՝ հավաստանշելու հնարավոր մարտահրավերներն ու վտանգները, ինչպես նաև հնարավորությունների բաց պատուհանները, մասնավորապես Սյունիքում:

Սյունիքը վերածվել է հայ-իրանական հարաբերությունների առանցքի: Սյունիքում կան բազմաթիվ փոխկապակցված շահեր, որոնք անհրաժեշտ է հստակեցնել և, ամենակարևորը՝ իրացնել:

Սյունիքի վրա հիմնվելով՝ հայ-իրանական հարաբերությունները միանգամից կարող են բարձրանալ ռազմավարական նշանակության մակարդակի, ինչից հետո այլևս հայ-իրանական հարաբերությունների ամրությունն ու ընթացքը կդառնան անշրջելի՝ անկախ երկու երկրների իշխանությունների փոփոխությունից:

Ազրպէյճանի նկատմամբ Վրաստանում առկայ ընկալումները

Յովհաննէս Ղազարեան *Լատուշ Սիմոնեան* *Լիլիթ Եկմալեան*

ՀՅԴ Բիւրոյի Երիտասարդական Գրասենեակի նախաձեռնութեամբ, 2024 թ. իրականացուեցաւ «Հայ Ուսանողութիւնը Արցախի Համար» հետազօտութիւններու մրցանքը, որուն մասնակցեցան մի քանի տասնեակ ուսանողներ աշխարհի տարբեր երկիրներէ: Ծրագրին հիմնական նպատակն է մէկտեղել հայ ուսանողութեան կարողութիւնը՝ քաղաքական, տնտեսական, ընկերաբանական, իրաւագիտական, մշակոյթի եւ հետաքննողական լրագրութեան բնագաւառներու մէջ, հմուտ խորհրդատուներու հետ համագործակցիլ եւ արդիւնքները տրամադրելի դարձնել հայանպաստ գործունէութիւն ծաւալող ազդեցիկ հիմնարկներու՝ արդիւնաւէտ օգտագործման համար: Կը ներկայացնենք մրցանքին Առաջին կրթաթոշակին արժանացած ուսանողական խմբակը՝ ***Յովհաննէս Ղազարեան, Լատուշ Սիմոնեան եւ Լիլիթ Եկմալեան (ՀՀ) հետազօտութեան ամփոփագիրը, նիւթ՝*** **«Ազրպէյճանի Յարաբերութիւնները Վրաստանի հետ»**, *Խորհրդատու՝ Աբրահամ Գասպարեան, ՃԷՆԷսիս Արմինիա կեդրոնի հիմնադիր տնօրէն, ՀՀ:*

Յովհաննէս Ղազարեան 2016–2022 թթ. սովորել է Երեւանի պետական համալսարանի միջազգային յարաբերութիւնների ֆակուլտետի բակալաւրիատում, որակաւորումը՝ միջազգային յարաբերութիւնների մասնագետ: Աւարտական աշխատանքի թեման է՝ «ԻԻՀ դիրքորոշումը արցախեան հիմնախնդրում»: 2022-2024 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի միջազգային յարաբերութիւնների ֆակուլտետի մագիստրատուրայում: Մագիստրոսական թեզի թեման է՝ «Հարաւկովկասեան երկրների հետ տրանսպորտային հաղորդակցութիւնների հիմնախնդիրը ԻԻՀ արտաքին քաղաքականութեան համատեքստում»:

Գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ Հայաստանի Հանրապետութեան արտաքին քաղաքականութիւնը, ՀՀ-ԵՄ փոխգործակցութիւնը, միջազգային և տարածաշրջանային անվտանգութեան խնդիրները, միջազգային հակամարտութիւնների կարգաւորումը, ՀՀ–ԻԻՀ յարաբերութիւնները, Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը և շահագրգիռ երկրների դիրքորոշումը և հարաւկովկասեան տարածաշրջանի համար կարևոր նշանակութիւն ունեցող միջազգային տրանսպորտային միջանցքները:

Լատուշ Սիմոնեան - Սովորել է Երեւանի պետական համալսարանի միջազգային յարաբերութիւններ բաժնում: Ունի միջազգային յարաբերութիւնների գծով բակալաւրի և մագիստրոսի աստիճան: Զբաղւում է ամերիկագիտութեան, միջազգային յարաբերութիւնների, հարաւկովկասեան տարածաշրջանի հարցերով: Հետաքրքրութիւնների շրջանակն ընդգրկում է ԱՄՆ ներքին և արտաքին քաղաքականութիւնը, ԱՄՆ քաղաքականութիւնը Հարաւային Կովկասում, ԱՄՆ-ՌԴ յարաբերութիւնները:

Լիլիթ Եկմալեան - 2017-2021 թթ. սովորել է Երեւանի պետական համալսարանի պատմութեան ֆակուլտետի պատմութեան բաժնում: 2023 թուականի յուլիսին աւարտել է նոյն ֆակուլտետի Համաշխարհային պատմութեան ամբիոնի մագիստրատուրան:

Այժմ աշխատում է դպրոցում, որպէս պատմութեան ուսուցիչ:

Հարաւային Կովկասում աշխարհաքաղաքական յարաբերութիւնների խճճուած բնոյթն ըմբռնելու համար անհրաժեշտ է նախեւառաջ քննութեան առնել Վրաստանի եւ Ազրպէյճանի միջեւ յարաբերութիւնների խնդիրը: Սոյն յօդուածում քննարկւում են Վրաստանում Ազրպէյճանի նկատմամբ առկայ բազմակողմանի ընկալումները, բացայայտւում են որոշակի բարդ շերտեր, որոնք որոշում են կամ ապագայում դեռ կարող են որոշել երկու երկրների յարաբերութիւնները:

Վրաստանը, չնայած, 1990 թուականից անցնելով բազմակուսակցական համակարգի, այժմ մնում է առաւելապէս «երկկուսակցական ժողովրդավարութիւն»՝ իշխող «Վրացական երազանք-Ժողովրդավարական Վրաստան» (ՎԷ) եւ ընդդիմադիր «Միացեալ ազգային շարժում» (ՄԱՇ) կուսակցութիւններով: Վրաստանի իշխանութիւնները, Իրակլի Ղարիբաշուիլիի՝ երկրորդ անգամ վարչապետ դառնալուց յետոյ, որդեգրել են Հայաստանի եւ Ազրպէյճանի նկատմամբ չէզոքութիւն պահպանելու կարգավիճակ եւ հանդէս են գալիս միջնորդական ջանքերով: Խօսքը «Խաղաղ հարեւանութեան նախաձեռնութեան» մասին է, որի մեկնարկը Վրաստանը ազդարարել է 2021 թ. Սեպտեմբերի 24-ին՝ որպէս Հարաւային Կովկասի տարածաշրջանում կայունութեան խթանմանն ուղղուած նախաձեռնութիւն: 2023 թ. Նոյեմբերի 10-ին մասնակցելով Փարիզի խաղաղութեան 6-րդ *կոնֆերանսին* եւ ելոյթ ունենալով «Համագործակցութեան գաղափարները մրցակցութեան աշխարհում. խաղաղութեան հաստատում եւ աւելի անվտանգ աշխարհի կառուցում՝ Կովկասի օրինակով» քննարկմանը՝ Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշուիլին նշել էր, որ Լեռնային Ղարաբաղի շուրջ Ազրպէյճանի եւ Հայաստանի միջեւ ձգձգուած հակամարտութիւնը Թբիլիսիի «մտահոգութեան առարկան է», եւ աւելացրել, որ երկու երկրների ղեկավարների հետ իր շփումն ու կարծիքների փոխանակումը հիմնուած է ամուր վստահութեան վրայ: Սա, ըստ վրացական իշխանութիւնների, իրենց միջնորդութեան մրցակցային առաւելութիւնն է, քանզի իրենք եղբայրական յարաբերութիւններ ունեն եւ Հայաստանի, եւ Ազրպէյճանի հետ:

Վրաստանում ընդդիմադիր ուժերի շարքում առաւելապէս յայտնի է «Միացեալ ազգային շարժում» (ՄԱՇ) կուսակցութիւնը: Վերջինս, վարդերի յեղափոխութեան արդիւնքում, 2004-2012 թթ. կազմում էր երկրի իշխանութիւնը: ՄԱՇ-ի դիրքորոշումները Ազրպէյճանի նկատմամբ էական փոփոխութիւններ չեն կրել իշխանութիւնից ընդդիմութիւն անցման արդիւնքում: Կուսակցութեան նախկին առաջնորդ եւ նախկին նախագահ Միխէիլ Սաակաշուիլին, ով այժմ Վրաստանի գլխաւոր ընդդիմադիր գործիչն է համարւում (անգամ գտնուելով անազատութեան մէջ), միշտ ունեցել է ընդգծուած ազրպէյճանամէտ կեցուածք, որն արտայայտուել է նրա յայտարարութիւններում, քայլերում եւ պետական քաղաքականութեան մէջ:

«The Business Year» ամսագրի՝ Ազրպէյճանին նուիրուած յատուկ համարում հրապարակուած հարցազրոյցում Վրաստանի նախկին առաջնորդը երկու երկրների յարաբերութիւնները բնութագրել է որպէս ռազմավարական գործընկերութիւն՝ նշելով, որ «ով հակադրւում է Ազրպէյճանին, նա Վրաստանի թշնամին է»:

Վրաստանում Ազրպէյճանի վերաբերեալ ընկալումները վառ կերպով արտայայտուել են Վրաստանի ազգային անվտանգութեան ռազմավարութիւններում: Մինչ այժմ ընդունուել է ազգային անվտանգութեան 2 ռազմավարութիւն 2005 եւ 2011 թուականներին՝ երկուսն էլ Մ. Սաակաշուիլիի իշխանութեան ընթացքում: Երկու ռազմավարութիւնների մէջ էլ Ազրպէյճանը նշւում է որպէս Վրաստանի ռազմավարական գործընկեր: Նշւում է, որ երկու երկրները ակտիւ համագործակցում են *էներգետիկ, տրանսպորտային* հաղորդակցութիւնների նախագծերի, ինչպէս նաեւ քաղաքականութեան, անվտանգութեան եւ *եւրատլանտեան ինտեգրման* ուղղութեամբ:

Կարեւոր է հաշուի առնել, որ պետութեան հասարակական կարծիքը չի արտայայտում պետական քաղաքականութիւնը: Այսպէս, հիմնուելով 2009 թ. հաւաքուած Caucasus Barometer-ի տուեալների վրայ (աւելի ուշ հաւաքուած տուեալներն այլեւս չեն ներառում այս հարցը), վրացիների 80%-ը հաւանութիւն է տալիս ազրպէյճանցիների հետ բարեկամութեանը: Հարցին, թէ ով է Վրաստանի հիմնական բարեկամ երկիրը, Ազրպէյճանը նշել են 2012 թ., 2019 թ. եւ 2021 թ. համապատասխանաբար 6%-ը,7%-ը, 8%-ը: Այսինքն՝ հասարակութեան մէջ Ազրպէյճանի նկատմամբ դրա-

կան վերաբերմունքը կայուն աճում է: Իսկ հարցին, թէ որ երկիրն է Վրաստանի հիմնական թշնամին, հարցուածներից 1%-ից էլ քիչն է Ազրպէյճանը նշել որպէս թշնամի պետութիւն:

Ազրպէյճանը զգալի աշխատանք է կատարում Վրաստանում ազդեցութիւնը տարածելու ուղղութեամբ, ինչը միտուած է ընդգծելու Վրաստանի՝ որպէս իրենց համար կարեւոր նշանակութիւն ունեցող պետութեան դերակատարումը:

Ազրպէյճանը, որին այդ հարցում հովանաւորում էր Թուրքիան, կարողացաւ օգտագործել առաջին արցախեան պատերազմից յետոյ տարածաշրջանում հաստատուած *ստատուս-քվօն*, երբ Հայաստանի Հանրապետութեան հետ չկար որեւէ երկխօսութիւն, եւ, օգտագործելով Վրաստանի հետ լաւ յարաբերութիւնները, այդ ամէնին տրուեց ռազմավարական նշանակութիւն՝ իրականացնելով այնպիսի նախագծեր, ինչպիսիք են՝ «Պաքու-Թբիլիսի-Կարս» երկաթգիծը, «Պաքու-Թբիլիսի-Էրզրում» գազամուղը եւ «Պաքու-Թբիլիսի-Ջէյհան» նաւթամուղը: Ազրպէյճանական կողմի արձագանգը 2008 թ. ռուս-վրացական պատերազմին նոյնպէս կարեւոր քայլ էր իր կողմից վրաց հասարակութեան մէջ Ազրպէյճանի վերաբերեալ նոր կարծիք, պատկերացում ձեւաւորելու համար: Պատերազմի ժամանակ Ազրպէյճանի ԱԳՆ խօսնակ Խազար Իպրահիմը յայտարարել է, որ Ազրպէյճանը ճանաչում է Վրաստանի տարածքային ամբողջականութիւնը, եւ հակամարտութիւնը պէտք է կարգաւորուի հէնց այդ սկզբունքի հիման վրայ: Նրա խօսքով միջազգային իրաւունքի համաձայն Վրաստանն իրաւունք ունի վերականգնելու իր տարածքային ամբողջականութիւնը, եւ ՄԱԿ-ի կանոնադրութիւնը դրա ապացոյցն է: «Վրաստանի գործողութիւնները համապատասխանում են միջազգային իրաւունքին», - նշել է նա:

Ազրպէյճանական «SOCAR» ընկերութիւնը լուրջ աշխատանքներ է իրականացնում: Նրանք 2015 թուականից ֆինանսաւորում են Վրաստանում գտնուող ուղղափառ եկեղեցիների, այդ թւում՝ հայկական եկեղեցիների ձմեռային ջեռուցման ծախսերը: «SOCAR»-ը լուրջ աշխատանքներ է իրականացնում նաեւ սոցիալական ոլորտում, յատկապէս՝ կրթութեան բնագաւառում: Այդուհանդերձ, այս գործընթացն ինքնանպատակ չէ, նման մեխանիզմներով Ազրպէյճանը փորձում է իր «ներկայութիւնը» հաստատել Վրաստանի ներքաղաքական կեանքում՝ աջակցելով Վրաստանում բնակուող իր հայրենակիցներին՝ պաշտօններ զբաղեցնել տարբեր պետական, յատկապէս՝ տեղական ինքնակառավարման մարմիններում, որտեղ մուսուլմանական համայնքը զգալի թիւ է կազմում: Վրացական կողմը բազմիցս բարձրաձայնել է, որ Ազրպէյճանը միջամտում է իրենց ՏԻՄ ընտրութիւններին, դրանով՝ միջամտելով իրենց ներքին գործերին: «SOCAR»-ը նաեւ բազմիցս փորձել է միջամտել «Արցախի հետ միջազգային համերաշխութեան նախաձեռնութեան» աշխատանքներին: Վաշինկթոնի Բազմակողմանի դիւանագիտութեան ինստիտուտի Հարաւային Կովկասի գրասենեակի համակարգող Իրակլի Կակաբաձէն նշում է, որ «SOCAR»-ի ներկայացուցիչները զանգահարել են իրեն եւ իր գործընկերներին՝ սպառնալով «իրենց սոված թողնել», եթէ իրենք չհրաժարուեն միջոցառումից: «SOCAR-ն այստեղ մի քանի հազար «կեղծ գործարաններ» ունի: «Մենք գիտենք, թէ որտեղ են նրանք գտնուում եւ ինչ գործունէութիւն են իրականացնում: Նրանք դրանով զբաղուել են փրոֆեսիոնալ կերպով՝ ծախսելով միլիառներ»: Կակաբաձէն նաեւ մտավախութիւն է յայտնել, որ «Ազրպէյճանը Թուրքիայի հետ միասին աւելի ու աւելի է ընդլայնում իր ազդեցութիւնը Վրաստանի ներքին եւ արտաքին քաղաքականութեան մէջ»:

Ազրպէյճանական կողմը լուրջ աշխատանքներ է իրականացնում նաեւ փորձագիտական դաշտում. Վրաստանում գործող ուղեղային կենտրոններում ընդգրկում է ազրպէյճանցի փորձագէտներ, եւ այդ ճանապարհով Վրաստանի փորձագիտական դաշտում առաջ են քաշում *նարատիւներ*, որոնք նպատակ ունեն հիմնաւորել Ազրպէյճանի պաշտօնական տեսակէտը Վրաստանում՝ կապուած տարածաշրջանային կարեւոր հիմնահարցերի հետ: «Georgian Foundation for Strategic and International Studies» ուղեղային կենտրոնում Ազրպէյճանցի փորձագէտ Ֆարիդ Շաֆիեւը հրապարակել է փորձագիտական զեկոյց, որում առաջ է քաշում այնպիսի *նարատիւներ*, որոնցից մէկի համաձայն հայկական կողմը 1987-88 թթ. շրջանում աջակցութիւն է ստացել Արեւմուտքի եւ Ռուսաստանի *լիբերալների* կողմից, որի համար հիմք է եղել Հայաստանի քրիստոնեայ երկիր լինելը:

Ազրպէյճանի նկատմամբ Վրաստանի մօտեցումները գնահատելու տեսանկիւնից կարեւորւում է Վրաստանում ապրող ազրպէյճանցիների գործօնը: Ազրպէյճանցիները Վրաստանում ամենամեծ էթնիկ փոքրամասնութիւնն են եւ իրենց տեղն ունեն վրաց-ազրպէյճանական յարաբերութիւնների օրակարգում: Ազրպէյճանցիները, համաձայն

2014 թ. մարդահամարի, կազմում են Վրաստանի բնակչութեան 6.3%-ը (մօտ 233.000), եւ ամենամեծ թուով ազրպէյճանցիներով բնակեցուած Վրաստանի շրջանը Քուեմօ Քարթլին է (տեղի բնակչութեան 41.75%): Իսկ քաղաքային մակարդակով ամենախոշոր ազրպէյճանաբնակ տարածքը Մառնէուլն է (83.77%):

Ուշագրաւ է Ազրպէյճանի ակտիւ աշխատանքը Վրաստանի Ազրպէյճանական համայնքի հետ, որը կասկածներ է առաջացնում Վրաստանի ներսում տարբեր քաղաքական ուժերի մօտ: Յատկապէս, աւելի տարածուած է այն մօտեցումը, որ ազրպէյճանական փոքրամասնութիւնը կամ չի մասնակցում ընտրութիւններին կամ քուէարկում է իշխանութեան օգտին: Այդ տեսանկիւնից յատկանշական էին 2019 թ. ՏԻՄ ընտրութիւնները, որից մի քանի օր առաջ Մառնէուլ էր ժամանել Վրաստանում Ազրպէյճանի դեսպանը, ով իր աջակցութիւնն էր յայտնել իշխող «Վրացական Երազանք» կուսակցութեան թեկնածուին: Այս քայլն ընդդիմադիր ուժերի կողմից որակուել էր որպէս Ազրպէյճանի կողմից Վրաստանի ներքին գործերին միջամտելու փորձ:

Ազրպէյճանի վերաբերեալ վրացական ընկալումների տեսանկիւնից կարեւորւում է նաեւ Վրաստանի քաղաքական ասպարէզում ազդեցիկ անհատների (*ինֆլիւենսր*) կարծիքների ուսումնասիրութիւնը: Վրացական քաղաքական «*ինֆլիւենսրների*» մօտեցումները հասկանալու եւ վերլուծելու համար հարկաւոր է որոշ գաղափարական (պահպանողական եւ ազատական) բաժանումներ մտցնել: Պահպանողական վրացիները հիմնականում դրական վերաբերմունք ունեն Ազրպէյճանի նկատմամբ եւ ձգտում են դրական կարծիք յայտնել ալիեւեան ռեժիմի նկատմամբ, որը, իրենց կարծիքով ուժի կիրառմամբ հասաւ իր «տարածքային ամբողջականութեան վերականգնմանը»: Պահպանողականները Ազրպէյճանի հետ գլխաւոր խնդիրը համարում են «Դաւիթ Գարեջիի» շուրջ ծագած իրավիճակը, որը ըստ իրենց, պէտք է լուծել բանակցութիւնների միջոցով: Ազատական վրացիները նոյնպէս դրական մօտեցում ունեն Ազրպէյճան պետութեան եւ ազրպէյճանական հասարակութեան նկատմամբ , սակայն բաւականին խնդրահարոյց են համարում Ալիեւի *աւտօրիտար* ռեժիմի գործելաոճը եւ գործունէութիւնը: Շատերը՝ լինելով ընդդիմադիր, Վրաստանի ներկայիս իշխանութեանը թիրախաւորելու համար փորձում են վերջինիս վարչակարգը համեմատել Ազրպէյճանի ներկայիս վարչակարգի հետ:

Եզրակացութիւններ

Վրաստանը շատ լաւ գիտակցում է, որ Հարաւային Կովկասում ստեղծուած իրադրութիւնը, երբ Հայաստանը չունի յարաբերութիւններ իր հարեւան երկու պետութիւնների հետ եւ դուրս է մնացել տարածաշրջանային հաղորդակցութիւններից, Վրաստանի դերը մեծանում է, քանի որ Վրաստանի տարածքը դարձել է առանցքային միջազգային շուկաներ դուրս գալու, *տրանսպորտային*, *էներգետիկ* նախագծեր իրականացնելու տեսանկիւնից: Եւ, չնայած, Ազրպէյճանի կողմից *ռացիոնալ* հաշուարկների վրայ հիմնուած քաղաքականութեանը, որը բխում է իր շահերից, այսօր այդ յարաբերութիւնները զարգանում են եւ առկա են ընդհանուր շահեր:

Վրաստանի երկու խոշորագոյն քաղաքական կուսակցութիւնները դրական վերաբերմունք ունեն Ազրպէյճանի եւ ազրպէյճանցիների նկատմամբ: Որոշ պայմաններում Վրացական երազանք կուսակցութիւնը աւելի չէզոք մօտեցում է ցուցաբերում: Տուեալ կուսակցութիւնները կարեւորում են Վրաստանում ազրպէյճանցիների դերը ներվրաստանեան ներքաղաքական համատեքստում: Այս համատեքստում երկու կուսակցութիւներն էլ ձգտում են համագործակցել Վրաստանում ապրող ազրպէյճանցիների եւ Ազրպէյճանի իշխանութիւնների հետ:

Վրաստանում, ընդհանուր առմամբ ձեւաւորուել է հասարակական դրական վերաբերմունք Ազրպէյճանի եւ տեղի ազրպէյճանական համայնքի վերաբերեալ: Կարեւոր է նշել, որ Վրաստանում, այսօր, առաւել դրական վերաբերմունք ունեն Վրաստանի ազրպէյճանցիների նկատմամբ, քան՝ Ազրպէյճանի: Նրանք Ազրպէյճանին դիտարկում են որպէս բարեկամական երկիր, որի հետ պէտք է զարգացնել բազմակողմ յարաբերութիւններ: Բայց վրացիները շատ լուրջ են վերաբերւում իրենց ազգային խնդիրներին եւ դէմ են յօգուտ Ազրպէյճանի միակողմանի զիջումներին, երբ, յատկապէս, խօսքը վերաբերում է Դաւիթ Գարեջիին:

Ազրպէյճանն իր ազդեցութիւնը Վրաստանում տարածելու եւ այնտեղ ձեւաւորուող ընկալումները ուղղորդելու համար կիրառում է տնտեսական, քաղաքական, մշակութային, սոցիալական գործիքակազմ: Նրանք հիմնականում շեշտը դնում են այն խնդիրների վրայ, որոնցում Վրաստանը աջակցութեան կարիք ունի: Կարող ենք ասել, որ ամենայն հաւանականութեամբ, այդ քայլերը արդիւնք տալիս են: Վրաստանը գիտակցում է, որ Ազրպէյճանը ոչ ժողովրդավարական, *աւտօրիտար* ռեժիմ ունեցող պետութիւն է, բայց Ազրպէյճանից եկող տնտեսական օգուտները, փոխշահաւէտ քաղաքական յարաբերութիւնները «ստիպում են» նրան խորացնել այդ յարաբերութիւնները:

Վրաստանի համար տարածաշրջանում կայունութիւնը առաջնային նշանակութիւն ունի, Վրաստանը միշտ ցանկացել է հասնել տարածաշրջանում գոյութիւն ունեցող հակասութիւնների յաղթահարմանը եւ ապագայի վերաբերեալ միասնական ընդհանուր տեսլականի ձեւաւորմանը: Սրանով է պայմանաւորուած Հայաստանի եւ Ազրպէյճանի Հանրապետութիւնների միջեւ միջնորդական առաքելութեամբ հանդէս գալու եւ խաղաղութեանն ուղղուած ջանքերում բանակցութիւնների հարթակ տրամադրելու հանգամանքը: ■

Խաւիարային դիւանագիտութիւն. Ազրպէյճանի ազդեցութիւնը Եւրոպայի մէջ

Նարօտ Նորամանեան

Կը ներկայացնենք մրցանքին Երկրորդ կրթաթոշակին արժանացած ուսանող՝ ***Նարօտ Նորամանեանի (Հոլանտա) հեւրազօրութեան ամփոփագիրը,*** **նիւթ՝ «Ազրպէյճանի Խաւիարային դիւանագիտութիւնը (caviar diplomacy) Եւրոպայի մէջ»**, Խորհրդատու՝ *Հեղինէ Էվինեան, ՀՅԴ Հայ Դատի Եւրոպայի Գրասենեակի տնօրէնուհի, Պելճիքա:*

Նարօտը ծնած է Պէյրութ, Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան Ճեմարանի շրջանաւարտ է: Միջազգային հարաբերութիւններու պաքալաւրի վկայականը ստացած է Երեւանի պետական համալսարանէն իսկ conflict and development studies մագիստրոսի վկայականը Պելճիքայի Կանտ համալսարանէն: Այժմ կ՚աշխատի International Bar Association միջազգային կազմակերպութեան Հաակայի (Հոլլանտա) մասնաճիւղին մէջ»:

Ազրպէյճան նշանակալի համբաւ ձեռք բերած է իր առատ ուժանիւթային աղբիւրներու շնորհիւ, արժանանալով «վստահելի գործընկերոջ» կոչումին այնպիսի ազդեցիկ կազմակերպութիւններու կողմէ, ինչպիսիք են Եւրոպական Միութիւնը, Իսրայէլը եւ դրացի երկիրները՝ Վրաստանը, Ռուսիան եւ Թուրքիան: Թէեւ Ազրպէյճան բաւական յաջող եղած է միջազգային հանրութեան հետ գործընկերային յարաբերութիւններ հաստատելու հարցին մէջ, նոյնը կարելի չէ մեկնաբանել, երբ խօսքը կը վերաբերի անոր ներքին քաղաքականութեան, յատկապէս նկատի առնելով տարիներու ընթացքին մարդկային իրաւունքներու բազմաթիւ խախտումները: Իր երկրին մէջ խօսքի եւ արտայայտուելու ազատութեան բացակայութեան, կանանց եւ աղջիկներու իրաւունքներու ոտնահարումին, հաւաքներու եւ միաւորներու ազատութեան բացակայութեան զուգահեռ, Ալիեւի վարչակազմը խախտած է մարդասիրական միջազգային շարք մը օրէնքներ նաեւ Լեռնային Ղարաբաղի մէջ:

Երեք տարի անընդմէջ Amnesty International-ը հրապարակած է զեկոյցներ, որոնք կը դատապարտեն Ազրպէյճանի վայրագութիւնները խաղաղ բնակչութեան դէմ՝ ինչպես Լեռնային Ղարաբաղի, այնպէս ալ Ազրպէյճանի մէջ: Սակայն միջազգային ընտանիքի հզօր ներկայացուցիչներէն ոչ ոք Ազրպէյճանը պատասխանատուութեան ենթարկած է այդ յանցանքներուն համար: Ազրպէյճանի գործողութիւնները գրեթէ ամբողջական լռութեամբ ընդունած են ազգային խորհրդարաններ, կառավարութիւններ եւ քաղաքական կուսակցութիւններ: Միջազգային իրաւապաշտպան կազմակերպութիւնները առաջնահերթութիւն չեն նկատած երկրին մէջ իրաւապաշտպան կառոյցներու փտածութիւնը: Միայն քիչերը զարմացած են Ազրպէյճանի նկատմամբ գերիշխող անտարբերութենէն եւ պատասխանատուութեան բացակայութենէն: Ոմանք այս երեւոյթը անուանած են «խաւիարային դիւանագիտութեան» ազդեցութիւն:

Այս եզրը նոյնիսկ օգտագործած է ESI-ի (Եւրոպական կայունութեան նախաձեռնութիւն) «Խաւիարային դիւանագիտութիւն. Ինչպէս Ազրպէյճան լռեցուց Եւրոպայի խորհուրդը» յօդուածին մէջ, որ հրապարակուած է 2012 թուականին: Խօսքը կը վերաբերի Ազրպէյճանի լոպիական ռազմավարութեան՝ արժէքաւոր նուէրներ ընել կարեւորագոյն կազմակերպութիւններուն եւ որոշումներ տուողներուն, որպէսզի սպիտակեցնեն Ազրպէյճանի ապօրինի վարքը՝ ինչպէս իր միջազգային, այնպէս ալ ներքին քաղաքականութեան մէջ: Նուէրները կը տարբերէին գորգերէ մինչեւ թանկարժէք ժամացոյցներ եւ զարդեր, կանխավճարով ճամբորդութիւններ դէպի Ազրպէյճան եւ երբեմն նոյնիսկ խոշոր դրամական փոխանցումներ: Կը նշուի, որ նուէրներ տալով, Ազրպէյճան յաջողութեամբ ընդունած է Եւրոպայի մէջ ուժանիւթ մատակարարողի իր դերը: Բազմաթիւ մասնագէտներ կը կարծեն, թէ Եւրոպայէն եկող լռութիւնը արդիւնքն է Ազրպէյճանի տարիներու խոր, արմատացած խաւիարային դիւանագիտութեան:

Այս ուսումնասիրութեան առաջնահերթ նպատակն է վերլուծել Ազրպէյճանի խաւիարային դիւանագիտութեան տարբերակիչ բնութագրերը, յատուկ շեշտադրելով ժամանակի ընթացքին անոր զարգա-

ցող բնոյթը: Ուսումնասիրութիւնը նպատակ ունի պարզաբանել խաւիարային դիւանագիտութեան ազդեցութիւնը եւրոպական նշանաւոր կառոյցներու, մասնաւորաբար՝ Եւրոպական խորհուրդին եւ Եւրոպական խորհրդարանին վրայ: Այս ուսումնասիրութիւնը կառուցուած է երկու հիմնական բաղադրիչի վրայ: Սկզբնական բաժինին նպատակն է բացայայտել խաւիարային դիւանագիտութեան պատմական հիմքերը: Այս կը ներառէ խաւիարային դիւանագիտութեան մէջ Ազրպէյճանի գործուն ներգրաւուածութիւնը խթանող հիմնական քաղաքական դրդապատճառներու համապարփակ ուսումնասիրութիւն: Ուսումնասիրութիւնը կը փորձէ ճշդել այս դիւանագիտական ռազմավարութեան առաջնահերթ թիրախները, լուսարձակի տակ առնելով Ազրպէյճանի խաւիարային դիւանագիտութեան ենթակայ հիմնական անձերը, հաստատութիւնները եւ կազմակերպութիւնները: Նոյնպէս կ'ուսումնասիրէ Ազրպէյճանի կիրարկող խաւիարային դիւանագիտական նախաձեռնութիւններու իրականացման զանազան ուղիներն ու կառուցակազմերը: Ուսումնասիրութեան յաջորդ բաժինը խաւիարային դիւանագիտութեան աւելի խոր վերլուծումն է տարիներու ընթացքին: Այս կ'ենթադրէ խաւիարային դիւանագիտութեան գործադրութեան մէջ նկատուող յստակ փոփոխութիւններու եւ տեղաշարժերու մանրակրկիտ ուսումնասիրութիւն:

Իւրայատուկ ուշադրութիւն պիտի յատկացուի Լեռնային Ղարաբաղի 44-օրեայ պատերազմի ազդեցութեան, առանցքային իրադարձութիւն մը, որ ենթադրաբար վերակազմաւորեց Ազրպէյճանի դիւանագիտական ռազմավարութեան շրջագիծերը: Աւելին, ուսումնասիրութիւնը մանրամասն կ'ուսումնասիրէ եւ կ'ընդգծէ խաւիարային դիւանագիտութեան էական ազդեցութիւնները կամ հետեւանքները, որոնք վաւերագրուած կամ զեկուցուած են տարբեր ծիրերու մէջ: Խաւիարային դիւանագիտութեան բազմաչափ ազդեցութիւնը ակներեւ է շարք մը առումներով: Այն էական դեր կը խաղայ վերաբերմունքի ձեւաւորման գործին մէջ, յատկապէս հզօր հիմնարկներու մէջ, ուր Ազրպէյճան յաճախ կը խուսափի պատիժէն, պատերազմական յանցագործութիւններու համար, որուն մասին կը վկայէ անոր ներգրաւուածութիւնը 2020-2023 թուականներու ընթացքին Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան եւ շրջափակման մէջ:

Ինչպէս որոշ պարագաներու մէջ կը նկատուի, խաւիարային դիւանագիտութեան «դրական» ազդեցութիւնը կ'ընդգծէ, թէ այդ որքան լաւ կ'ազդէ տեսակէտներու վրայ եւ կը նուազեցնէ այլ երկիրներու ուշադրութիւնը: Այս ցոյց կու տայ, որ քաղաքական բնաբանները եւ աւելի լայն աշխարհաքաղաքական շրջանակը, որուն մէջ կը գործէ Ազրպէյճան, ինչպէս կը միանան բարդ ձեւերով: Այս կ'առաջարկէ մանրամասն հետաքննութիւն իրականացնել, նման պարագաներու մէջ խաւիարային դիւանագիտութեան ազդեցութեան շրջանակը պարզելու: Այս ոլորտին մէջ համապարփակ հետաքննութիւնը թոյլ կու տայ աւելի խոր հասկնալ, թէ արդեօք Ազրպէյճանի դիւանագիտական գործողութիւնները, յատկապէս խաւիարային դիվանագիտութեան հետ կապուած, իրականութեան մէջ զգալի ազդեցութիւն ունեցած են համաշխարհային արձագանգներու վրայ եւ օգնած են խուսափելու խախտումներու համար պատժամիջոցներէ:

Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան բեկումնային կէտը կնքուեցաւ վերջերս, երբ 10-ամսեայ շրջափակումէն ետք, 19 սեպտեմբերին, Ազրպէյճան սկսաւ իր յարձակումը, անօդաչու սարքեր եւ հրթիռներ արձակելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան մայրաքաղաք Ստեփանակերտի ուղղութեամբ: Այս նշեց երրորդ պատերազմի սկիզբը, որ մղուած էր երկար տասնամեակներ ետք, շրջանի վերահսկողութեան համար: Ի վերջոյ, միայն քանի մը օր ետք, ազրպէյճանական բանակը յաջողեցաւ մտնել տարածք, զուգահեռաբար աւերելով իր ճամբուն վրայ գտնուող գիւղեր եւ բնակավայրեր: Հինգ օր ետք, Լեռնային Ղարաբաղի բնիկ հայերը ստիպուած սկսան ինքնաշարժային հսկայ գաղթ դէպի Հայաստան: Վերոնշեալ իրադարձութիւններէն ետք,

Եւրոպական Միութեան (ԵՄ) խորհրդարանը դատապարտած է Ազրպէյճանը Լեռնային Ղարաբաղի խաղաղ բնակչութեան վրայ անոր անհիմն յարձակումին համար, այդ անուանելով ««մարդկային իրաւունքներու եւ միջազգային իրաւունքի կոպիտ խախտում» եւ «չհիմնաւորուած ռազմական յարձակում»: Նոյն յայտարարութեան մէջ ԵՄ-ի խորհրդարանը նաեւ կոչ ըրած է «նպատակային պատժամիջոցներ սահմանելու Ազրպէյճանի կառավարութեան այն անձերուն դէմ, որոնք պատասխանատու են Լեռնային Ղարաբաղի մէջ զինադադարի եւ մարդկային իրաւունքներու բազմաթիւ խախտումներու համար: ԵՄ-ն կոչ կ'ընէ հետաքննելու ազրպէյճանական ուժերու իրականացուցած բռնարարքները, որոնք կրնան ռազմական յանցագործութիւն նկատուիլ»: Եւրոպական խորհրդարանի համարձակ քայլը իսկապէս դրական զարգացում էր, սակայն այդ կ'ընկերանար Ազրպէյճանի դէմ պատժամիջոցներու զգալի բացակայութեամբ: Ոմանք կը պնդեն, որ այս թերացումը կրնայ վերագրուիլ ազրպէյճանական կազէն ԵՄ-ի ռազմավարական կախուածութեանը: Կատարուած կարեւոր այլ քայլ մըն էր ԵԽԽՎ-ի՝ «Ազրպէյճանի համար ուշ չէ իրավիճակը շտկելու եւ իր բարի կամքը ապացուցելու» արտայայտութիւնը, ընդունելով Ազրպէյճանի պարտաւորութիւնները՝ պաշտպանելու հայ բնակիչներու իրաւունքները եւ ազատութիւնները եւ ընդգծելով իր իսկ մտադրութիւնները հայ բնակիչներու վերաբնակեցման հետ կապուած: Կայ հեռանկար, որ կը յուշէ, թէ ԵՄ-ը կրնայ զգուշ ըլլալ իր ուժանիթի աղբիւրը վտանգի ենթարկելու հարցին մէջ: Բայց եւ այնպէս, ոմանք կը պնդեն, թէ այդ ցոյց կու տայ ԵՄ-ի կողմէ իր աջակցած արժէքներուն յանձնառութեան բացակայութիւնը, որ կ'ենթադրէ, թէ Ազրպէյճանի հետ իր գործակցութեան ընթացքին, ԵՄ-ն կրնայ անտեսել որոշ հիմնական սկզբունքներ: Այս բանաձեւը կ'ընդգծէ բարդութիւնը եւ բազմակողմանի նկատառումները, որոնք ի յայտ կու գան աշխարհաքաղաքականութեան, տնտեսական շահերու եւ մարդկային իրաւունքներու խախտումներու խաչմերուկին մէջ կողմնորոշուելու ատեն: Մտահոգութիւններ արտայայտուած են եւրոպական սկզբունքներուն Ազրպէյճանի յանձնառութեան առնչութեամբ, յատկապէս մարդկային իրաւունքներու եւ միջազգային կանոններու կապուած՝ Լեռնային Ղարաբաղի, նաեւ Ազրպէյճանի մէջ անոր գործողութիւններուն հետեւանքով: Յստակ չէ, թէ Ազրպէյճան որքան հեռու պիտի մղէ եւրոպական հանդուրժողականութեան սահմանները, ինչ որ յուսախաբ ըրած է Եւրոպական խորհրդարանը իր ակներեւ անհնազանդութեամբ, կոչ ընելով այդ կառոյցին «համապարփակ վերատեսութեան ենթարկելու Պաքուի հետ իր յարաբերութիւնները»: Այս երեւոյթի եւ երկրի միջազգային եւ ներքին ներուժի վրայ անոր երկարատեւ ազդեցութիւններու մանրակրկիտ վերլուծումը կրնայ լուսաւոր պատկերացումներ տալ: Խաւիարային դիւանագիտութեան ազդեցութեան ուսումնասիրութիւնը Ազրպէյճանի յարաբերութիւններուն վրայ, ինչպէս անոր սահմաններէն ներս, այնպէս ալ միջազգային հարթակի վրայ, կրնայ լոյս սփռել տնտեսական շահերու, դիւանագիտական ռազմավարութիւններու եւ աշխարհաքաղաքական դիրքաւորման բարդ փոխադարձ ազդեցութեան վրայ: Այսպիսի ուսումնասիրութիւն մը կրնայ էապես նպաստել Ազրպէյճանի եւ ԵՄ-ի միջեւ զարգացող ներուժը հասկնալուն, տրամադրելով այս դիւանագիտական մօտեցումին երկարատեւ հետեւանքներու նրբերանգ վերլուծումը բոլոր ներգրաւուած կողմերու ընկալումներու եւ քաղաքականութեան վրայ: ■

Սոցիալական անարդարության և տնտեսական անվտանգության խորացող ռիսկերը

Թադևոս Ավետիսյան
Տնտեսագետ, Աժ պատգամավոր, ՀՅԴ գերագույն մարմնի անդամ

Սիրելի՛ բարեկամներ, ես պարբերաբար անդրադարձել եմ այս իշխանության կողմից տնտեսական իրավիճակի և խորացող խնդիրների վերաբերյալ խեղաթյուրումներին: Ցավոք սրտի, նախկինում արտահայտած լուրջ մտահոգությունները հետևողականորեն դառնում են իրողություն: Հերթականությամբ ներկայացնեմ կարևոր որոշ փաստեր ու գնահատականներ:

2024 թվականի հունվար-մայիսին տնտեսական ակտիվության ցուցանիշն իներցիայով դեռևս բարձր է՝ 11,1 տոկոս: Այս իրավիճակը պայմանավորող հիմնական գործոնները մնում են նույնը. դրանք պայմանավորված են արտաքին, պատահական և ժամանակավոր գործոններով:

Աճը պայմանավորող գործոնները թուլանում են՝ հանգեցնելով տնտեսական ակտիվության տեմպերի նվազմանը և կայուն զարգացման նոր ռիսկերի խորացմանը: Մասնավորապես, այս տարվա առաջին եռամսյակում, տնտեսական բարձր ակտիվության խորապատկերին արդեն ունենք պետական բյուջեի հարկային ծրագրված եկամուտների էական նվազում: Ճշտված պլանի համեմատ հարկային եկամուտների փաստացի հավաքագրումը պակաս է եղել 7 տոկոսով կամ շուրջ 105 մլն ԱՄՆ դոլարի չափով:

Հարց. եթե ասում են, որ տնտեսական ստվերը կրճատվում է, ապա տնտեսական ակտիվության 14,3 տոկոս աճի պարագայում ինչպե՞ս են բացատրում հարկային փաստացի մուտքերի 7 տոկոս թերակատարումը:

Ուրեմն՝ իրականում և՛ ստվերն է աճում, և՛ տնտեսական ներուժն է թուլանում:

Հաջորդը. տնտեսական անվտանգության խորացող սպառնալիքներն ուղղակիորեն արձանագրում են նաև տնտեսական անդառնալի հետևանքներ:

2024 թվականի առաջին եռամսյակում արձանագրվել է կապիտալի արտահոսք մեր երկրից՝ օտարերկրյա ներդրումների զուտ ներհոսքերի ծավալը դարձել է բացասական: Մասնավորապես, օտարերկրյա ընդհանուր ներդրումների զուտ ներհոսքը՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է շուրջ 235 մլն ԱՄՆ դոլարով, իսկ օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ ներհոսքը՝ շուրջ 185 մլն ԱՄՆ դոլարով:

Հաջորդը. ապաշնորհ պետական կառավարման հետևանքով գյուղատնտեսության աճը շարունակում է մոտենալ զրոյին, արտաքին պատահական գործոնի թուլացման և հարկային բեռի հետևողական ավելացման հետևանքով գրեթե զրոյացել է ծառայությունների ոլորտի նախորդ երկու տարիների

թռիչքաձև աճը, ազգային արժույթի գերարժևորման և պետական անհամարժեք աջակցության հետևանքով տեղեկատվական բարձր տեխնոլոգիաների ոլորտում գրանցվել է 9 տոկոս անկում, անհեռատես քաղաքականության և աշխարհաքաղաքական բախումների մեջ մեր երկիրը ներքաշելու հետևանքով փակման իրական ռիսկերի առջև է հայտնվել էժան էլեկտրաէներգիայի հիմնական աղբյուրը՝ ատոմային էլեկտրակայանը:

Հաջորդը. ամեն անգամ պետական բյուջեի նախագիծը ներկայացնելիս թղթի վրա գրում և հայտարարում են, թե թռիչքաձև ավելացնելու են երկարաժամկետ զարգացմանն ուղղված կապիտալ ծախսերը: Եվ սա անում են աղքատության նպաստների, կենսաթոշակների, նվազագույն աշխատավարձի բարձրացման չկատարվող խոստումները քողարկելու համար:

Դրա հետևանքով է, որ նույնիսկ բարձր տնտեսական աճի պայմաններում աղքատության մակարդակը գրեթե չի նվազել, ավելին, 2023 թվականին գյուղական բնակավայրերում աճել է ծայրահեղ աղքատության մակարդակը: Աճում է աշխատող աղքատների թիվը, քանի որ նվազագույն աշխատավարձը ցածր է նույնիսկ մեկ անձի հաշվով նվազագույն կենսապահովման զամբյուղի արժեքից:

Կապիտալ ծախսերը չունեն անհատական հասցեատեր, ինչպես օրինակ՝ թոշակներն ու նպաստներն են: Հետևաբար, կարելի է անվերջ խոստանալ, հետո էլ չկատարել: Ավելին՝ օր-օրի առավել ակնհայտ են դառնում ծախսարդյունավետության և որակի խնդիրները, այս ոլորտում մեկ անձից գնումների և յուրայինների մասնակցության թռիչքաձև աճը, անօ-

րինական գերշահույթներն ու հանրային միջոցների մսխումները:

Մշտապես անդրադարձել եմ պետական բյուջեի կապիտալ ծախսերի խայտառակ թերակատարումներին: Հիմա էլ բերեմ 2024 թվականի առաջին եռամսյակի վերջին պաշտոնական տվյալները.

1. պետական բյուջեով նախատեսված 526 մլրդ դրամի ընդհանուր ծախսերի 18 տոկոսը չի կատարվել, որը կազմում է 290 մլն ԱՄՆ դոլար,

2. նախատեսված 95 մլրդ դրամի ընդհանուր կապիտալ ծախսերի 25 տոկոսը չի կատարվել, որը կազմում է շուրջ 65 մլն ԱՄՆ դոլար,

3. արտաքին աղբյուրներից վերցված միջոցներով կապիտալ ծախսերի թերակատարումը կազմել է 40 տոկոս, այսինքն՝ վերցրել են արտաքին պարտքը, հանրային միջոցներից վճարում են տոկոսներ, սակայն այդ միջոցների գրեթե կեսը չի ծառայել իր նպատակին,

4. բացի պաշտպանության նախարարության ծրագրերից, կապիտալ մնացած ծախսերի թերակատարումը կազմել է 83 տոկոս:

Հաջորդը. 2024 թվականի մարտի տվյալներով պետական պարտքը կազմել է 12,163 մլրդ ԱՄՆ դոլար, ինչը տարվա սկզբի համեմատ աճել է 320 միլիոն ԱՄՆ դոլարով կամ ամսական գրեթե 110 միլիոն ԱՄՆ դոլարով:

Այս իշխանության կառավարման նախորդ վեց տարիներին պետական պարտքն աճել է շուրջ 5,5 միլիարդ ԱՄՆ դոլարով կամ 80 տոկոսով: Տնտեսական աճի միջին տարեկան ցուցանիշը կազմել է 5,5 տոկոս, իսկ պետական պարտքի տարեկան միջին աճը՝ դրանից շուրջ 2,5 անգամ ավելի:

2023 թվականին միայն կառավարության պարտքի տոկոսների վճարները կազմել են տվյալ տարվա պետական բյուջեի հարկային եկամուտների շուրջ 11 տոկոսը, ընդհանուր ծախսերի՝ շուրջ 10 տոկոսը, իսկ սոցիալական նպաստներին և կենսաթոշակներին հատկացված ընդհանուր ծախսերի՝ 36 տոկոսը:

2023 թվականին կառավարության պարտքի գծով վճարված տոկոսավճարները կազմել են շուրջ 660 մլն ԱՄՆ դոլար, ինչը նախորդ տարվա համեմատ ավելի է շուրջ 28 տոկոսով:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ 2024 թվականի առաջին եռամսյակում ևս 5 տոկոսով ավելացել են պետական պարտքի գծով տոկոսավճարները՝ կազմելով 90 մլն ԱՄՆ դոլար:

Այսինքն՝ այս տարվա սկզբից վերցրել են 320 մլն ԱՄՆ դոլարի չափով նոր պարտք, որ կարողանան հնի տոկոսները վճարել, քանի որ պլանավորված հարկային մուտքերը չեն կարողացել ապահովել:

Իրականում պարտքային ճգնաժամից մեզ ժամանակավորապես հետ է պահում մեր երկրի ազգային արժույթի գերարժևորման վտանգավոր քաղաքականությունը, որի հետևանքով պետական պարտք-ՀՆԱ հարաբերակցությունը, թվացյալ, դեռևս մնում է կառավարելի տիրույթում:

Բնականաբար, սա չի կարող երկարաժամկետ

արդյունք ապահովել: Ազգային արժույթի փոխարժեքի վրա ազդող երկարաժամկետ գործոններն ունեն արժեզրկման էական ճնշումներ: Եվ մեծ է ռիսկը, որ մոտ ապագայում փաստացի կունենանք նաև ազգային արժույթի էական արժեզրկում: Սա էլ իր հերթին մեր երկիրն օրերի ընթացքում կտեղափոխի պարտքային ճգնաժամի անկառավարելի տիրույթ:

Ամփոփելով. բազմիցս հիմնավորել ենք, որ այս իշխանությունները երկիրը պարտքով են պահում՝ մսխելով նաև մեր երկրի երկարաժամկետ զարգացման ապագայի ներուժը՝ թռիչքաձև աճող պարտքի բեռը թողնելով սերունդների ուսերին:

Օրվա սոցիալական խնդիրները լուծելու փոխարեն, կապիտալ ծախսերի անվան տակ, ավելացնում են պետական մեկ անձից գնումները, ինչն ուղեկցվում է կոռուպցիոն ռիսկերի, իրենց շրջանակի հին ու նոր օլիգարխների գերշահույթների և պետական բյուջեից փոշիացվող միջոցների թռիչքաձև աճով:

Զուգահեռաբար՝ խորանում են մեր երկրի տնտեսության իրական հատվածում (գյուղատնտեսություն, արդյունաբերություն, շինարարություն և այլն) դրսևորվող բացասական միտումները, անհնարին է դառնում պլանավորված հարկային մուտքերի հավաքագրումը, ավելանում են պարտքային ճգնաժամի դրսևորման հնարավորությունները, տնտեսական անվտանգության անկառավարելի ռիսկերը հանգեցնում են մեր երկրից օտարերկրյա կապիտալի փախուստի:

Մյուս կողմից. իշխանությունները որդեգրել են համատարած հարկային տեռորի քաղաքականություն, փոքր և միջին բիզնեսի հարկային բեռի էական բարձրացում և այս ոլորտի հարկային արտոնությունների վերացում:

Ամենալավը իրենք գիտեն, որ իրենց առաջնորդությամբ մեր երկրի ապագան շարունակելու է ամեն օր էլ ավելի դժգույն և դժբախտ դառնալ՝ նահանջով, կորուստներով և անորոշություններով լի: Այդ պատճառով էլ տարածում են ապագա բարեկեցիկ կյանքի միֆն ու իրական վիճակի խեղաթյուրումները, իրենց հերթական սուտ խոստումներն ու կեղծիքը:

(Որպես ելույթ ներկայացվել է Երևանի Սուրբ Անանա եկեղեցու բակում՝ սույն թվականի հուլիսի 8-ին)

Հայաստանի հոշոտված անտառները և պետության մարդկային կապիտալը

Արմեն Վարդանյան
Լրագրող

Կլիմայական գլոբալ փոփոխություններն արդեն իրենց դրսևորումներ են ունենում Երկիր մոլորակի տարբեր անկյուններում՝ հիմնականում բնական աղետների տեսքով: Երկրագնդի մի հատվածը ջերմաստիճանի բարձրացման պատճառով զրկվում է ջրային ռեսուրսից, մյուս հատվածում էլ մեծանում է տեղումների քանակը՝ պատճառ դառնալով ավերիչ և կործանարար ջրհեղեղների: Ընթացիկ տարվա մայիսի 26-ին չորս մարդու կյանք խլած Լոռու մարզի ջրհեղեղը նախազգուշացումն էր այն մեծ աղետների, որոնց առաջ կարող է կանգնել նաև Հայաստանը կլիմայական փոփոխությունների հետևանքով:

Մարդն անկարող է ազդել գլոբալ կլիմայական փոփոխությունների վրա, դրանք երկրագնդի միլիոնավոր տարիների զարգացման շրջափուլային ընթացքի հետևանք են: Սակայն ժամանակի կարճ հատվածում մարդը կարող է դիմակայել դրանց: Մեր երկիրը երկրագնդի այն հատվածն է, որտեղ առաջիկա տասնամյակներում և հարյուրամյակներում ջերմաստիճանը բարձրանալու է: Գիտական կանխատեսումների համաձայն կլիմայական փոփոխությունների հետևանքով Հայաստանի տարածքում մինչև 2030 թվականը միջին ջերմաստիճանը կաճի 1.7 աստիճանով, մինչև 2070 թվականը՝ 2.9 աստիճանով, իսկ մինչև 2100 թվականը՝ 4.4 աստիճանով:

Հայաստանը կլիմայական առումով ամենախոցելի երկրներից է Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում: Հանրապետությունն արդեն առերեսվում է կլիմայի փոփոխությամբ պայմանավորված ռիսկերի հետ, հաճախակիացել են անախադեպ եղանակային երևույթները և դրանց հետևանքները՝ երաշտներ, վարարումներ, սողանքներ և անտառային հրդեհներ: Վերջիններս աղետաբեր ազդեցություն կունենան Հայաստանի բնաշխարհի վրա: Կանխատեսվում է, որ մեր երկրի տարածքում տեղումների քանակը կկրճատվի 7-10 %-ով և մեր հարուստ ու ինքնատիպ լանդշաֆտներում կարձանագրվի հողերի դեգրադացիա, կվտանգվի էնդեմիկ բուսական և կենդանական աշխարհը:

Կլիմայի այս փոփոխությունը կհարվածի հանրապետության գյուղատնտեսության ոլորտին, և ագրարային մեծ ներուժ ունեցող պետությունը կկանգնի պարենային անվտանգության խնդրի առջև: Սա այն դեպքում, երբ արդեն իսկ պարենի անբավարարության խնդիրը հավակնում է առաջիկայում դասվել համամարդկային հիմնահարցերի շարքին:

Աշխարհի հետ միասին, Հայաստանն էլ չի կարող կասեցնել կլիմայական փոփոխությունների ընթացքը, բայց կարող է հարմարվել դրան՝ մեղմելով կամ

չեզոքացնելով բացասական հետևանքները: Երկրագնդի գլոբալ տաքացմանը դիմակայելու համար աշխարհի այլ երկրների հետ միասին մեր երկիրն էլ ստանձնել է պարտավորություններ, առաջին հերթին՝ ջերմոցային գազերի, մասնավորապես ածխաթթու գազի արտանետումները կրճատելու ուղղությամբ, որի շրջանակներում, մինչև 2030 թվականը Հայաստանը մտադիր է 40 %-ով կրճատել մթնոլորտ վնասակար արտանետումների քանակը: Այդ նպատակով կատարվելիք համապատասխան գործողությունների շարքում նախատեսվում է Հայաստանում ավելացնել անտառածածկ տարածքների չափաբաժինը:

Հայաստանի հոշոտված անտառները

Հայաստանի անտառային պետական ֆոնդը կազմում է երկրի տարածքի 11.7%-ը՝ մոտ 407 հազար հեկտար, որից 11.2% -ը կամ 334.1 հազար հեկտարն է անտառածածկ տարածք: Անտառային ֆոնդի մոտ 50 հազար հեկտարն արհեստական անտառներն են: Մեր երկրի անտառներն իրենց ծառատեսակներով ու բուսածածկույթով պատկանում են Կովկասյան և Հայկական-իրանական տարածաշրջաններին: Մեր անտառներում գերակշռում են հաճարենի, բոխի, թխկի, կաղնի ծառերի շատ տեսակները, խնձորենի,

լորենի, կեռասենի, դժնիկ, թեղի, հացենի և այլ ծառատեսակներ:

Մասնագետների հաշվարկներով կլիմայի փոփոխությանը դիմակայելու տեսանկյունից Հայաստանի համար օպտիմալ անտառածածկը 20.1 %-ն է: Որպեսզի ապահովվի այդ տոկոսը, լրացուցիչ պետք է տնկվի շուրջ 270 հազար հեկտար անտառ: Իրականում Հայաստանի համար նախընտրելի է մոտ 600 հազար հեկտար անտառ ունենալը: Համեմատության համար նշենք, որ Բելառուսի համար օպտիմալ անտառածածկի մակերեսը հաշվարկվել է 35%-ը, Վրաստանի համար՝ 40%: Արցախի տարածքի շուրջ 35%-ն է ծածկված անտառներով, իսկ Ադրբեջանում անտառածածկը ներկայումս 12 % է, որը, բնականաբար, հեռու է պահանջված ծավալներից:

Հայաստանում, անկախացումից ի վեր, մեծ ծավալներ են կազմել ապօրինի անտառահատումները: Երկար տարիներ՝ սկսած էներգետիկ ճգնաժամի ժամանակահատվածից, անխնա անտառահատումները շարունակվում են մինչև այսօր: Անտառների զգալի հատվածներ այնքան են նոսրացել ապօրինի ծառահատումների պատճառով, որ դժվար է այդ հատվածները, էկոհամակարգային առումով, անտառ համարելը, թեև այդ տարածքները հաշվարկվում են 11.2% անտառածածկ տարածքների շրջանակում: Ապօրինի ծառահատումներն արձանագրվում են Հայաստանի գրեթե բոլոր մարզերի անտառային տարածքներում:

Ծառահատումների քանակը տարբեր տարիներին էականորեն տարբեր ցուցանիշներ է գրանցել: Օրինակ՝ 2000 թվականին արձանագրվել է 61 219 ծառի ապօրինի հատման դեպք, իսկ արդեն 2008 թվականին մոտ՝ 2150, 2009 թվականին՝ 2287: Անհամեմատ մեծ են եղել մինչ այդ արձանագրված ապօրինության

դեպքերի թվերը: Այսպես՝ 2003 թվականին անտառային տարածքներում հայտնաբերվել են 42.236, 2004-ին՝ 32.766, իսկ 2005-ին՝ 21.703 ապօրինի հատված ծառեր: 2006 թվականին «Հայանտառի» անտառային տարածքներում արձանագրված ապօրինի ծառահատումները կտրուկ նվազեցին՝ հասնելով 5784-ի, 2008-2010 թվականներին հայտնաբերվել է մոտ 2000-2500 ապօրինի հատված ծառի կոճղ:

2016 թվականից հետո ռեկորդային քանակի ապօրինի ծառահատում է բացահայտվել, 2017 թվականին՝ 30,720 հատ, իսկ հաջորդ տարիներին դրանց թիվը նվազել է: Արդյունքում 2018 և 2020 թվականներին Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինն արձանագրել է մոտ 13.000 ծառի հատում, իսկ 2019 թվականին՝ 7.228:



Թվերի նման տատանումը բացատրվում է միայն բացահայտումների գործոնով. այն տարիներին, երբ ապօրինի ծառահատումների թիվը քիչ է արձանագրվել, նշանակում է քիչ է բացահայտվել, իսկ այն տարիներին, երբ արձանագրվել է մեծ թիվ, պատճառն այն է, որ հայտնաբերվել են նաև նախորդ տարիների ապօրինի հատված ծառերի կոճղերը, հետևաբար, կարելի է ասել, որ տարեկան միջինը Հայաստանում ապօրինի հատվել է 15.000-20.000 ծառ: Եթե սրան գումարենք նաև «Հայանտառ» ՊՈԱԿ-ի իրականացրած օրինական սանիտարական հատումները, որոնց արդյունքում տարեկան հատվում է մոտ 17-20 հազար խորանարդ մետր փայտանյութ, ապա այդ թիվը շատ մեծ կդառնա:

15-20 տարի առաջ «Հայանտառ» ՊՈԱԿ-ում օրինական թույլատրելի հատումները կազմում էին 35-50 հազար խորանարդ մետր: Ըստ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ վերջին 5 տարում փայտանյութի ամենամեծ քանակի մթերումները կատարվել են 2018 և 2020 թվականներին՝ հասնելով, համապատասխանաբար, գրեթե 43 հազար և 48 հազար խորանարդ մետրի: 1 հեկտար անտառը տարբեր մասնագիտական հաշվարկներով, ընդհանուր առմամբ, տալիս է 969 դոլարի տնտեսական արժեք, որի մեջ ներառված է նաև կլիմայի կարգավորիչ դերը: 1 տոննա ածխածնի կլանման դեպքում էլ գնահատվում է 20 եվրոյի տնտեսական արժեքը:

Ստացվում է, որ կենսական անհրաժեշտության բնական ռեսուրսը վերածվել է բավականին շահութաբեր բիզնեսի, որը նաև շրջանցում է պետական բյուջեն: Տարբեր փորձագիտական գնահատականներով ապօրինի ծառահատումները տարեկան 500 հազար խորհանարդ մետրից մինչև 1 մլն խորանարդ մետրի են հասնում: Խոսքը շուրջ 35-45 մլն դոլարի շրջանառության մասին է: Հետևանքը՝ Հայաստանի անտառային տարածքների 70 %-ը դեգրադացված է, իսկ անտառածածկ տարածքներն աստիճանաբար վերածվում են խոտհարքների:

Անտառների վերականգնումը՝ կենսական պահանջ

Անտառների պահպանման և դրանց տարածքների ընդլայնման ուղղությամբ՝ հիմնականում միջազգային բնապահպանական և դոնոր կազմակերպությունների միջոցով, բազմաթիվ ծրագրեր են իրականացվել և իրականացվում, որոնց շնորհիվ հնարավոր է եղել մեղմել ապօրինի ծառահատումների հետևանքները, գոնե պահպանել եղած անտառածածկ տարածքները՝ թեկուզ խաթարված էկոհամակարգով:

Խնդրի կարևորությունը գիտակցելով՝ հիմնականում սփյուռքի մեր հայրենակիցների միջոցներով և ջանքերով Հայաստանում նույնիսկ ստեղծվել են ծառատնկմամբ, անտառվերականգնմամբ զբաղվող հասարակական կազմակերպություններ, հիմնադրամներ: Հայաստանում և Արցախում գրեթե 30 տարի գործել է «Էյ Թի Փի» (Armenia Tree Project) հասարակական կազմակերպությունը, որի միջոցներով 1994 թվականից ի վեր տնկվել է ավելի քան 8 միլիոն ծառ: Տնկարկների թվով «Էյ Թի Փի»-ն Հայաստանի ամենախոշոր հասարակական կազմակերպություններից մեկն է, այն անցկացնում է նաև էկոկրթական ծրագրեր, որոնց այս տարիներին մասնակցել են 57 000 ուսանող և ուսուցիչ: Կազմակերպությունը Արցախում նույնպես ակտիվ գործունեություն էր ծավալում:

2019 թվականին Հայաստանում հիմնադրվեց «My Forest Armenia» հասարակական կազմակերպությունը, որը, չնայած գործունեության կարճ ժամանակահատվածին, հասցրել է 650 հեկտարի վրա տնկել 2 միլիոնից ավելի ծառ: Անտառի պահպանման առաքելությամբ ստեղծվել և գործում են այլ ՀԿ-ներ, օրինակ՝ «Հայաստանի անտառներ»-ը և այլն:

Իր գործառույթի շրջանակներում անտառի պահպանման մշտական աշխատանքներ է տանում նաև Շրջակա միջավայրի նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ը: Վերջինս պետական բյուջեի միջոցներով իրականացնում են ոչ միայն ծառատնկման այլև անտառվերականգնման աշխատանքներ, որոնք ենթադրում են նաև հատված ծառերի կոճղաշիվային վերականգնման աշխատանքներ: Այդ կառույցի իրականացրած աշխատանքների ծավալները, սակայն, պետության կողմից բավարար միջոցներ չտրամադրելու պատճառով շատ փոքր են:

Կլիմայի փոփոխությանը դիմակայելու տարբեր միջազգային ծրագրերի շրջանակում, ինչպես նաև Գլոբալ կլիմայական հիմնադրամի միջոցներով Հայաստանում նոր փուլ են թևակոխել անտառվերականգնման և ծառատնկման աշխատանքները: Հայաստանի՝ կլիմայի մասով ստանձնած պարտավորությունների, մասնավորապես՝ Փարիզի համաձայնագրի շրջանակներում ազգային մակարդակով որոշվող մասնակցության (NDC) համատեքստում մեծ ուշադրություն է դարձվում անտառտնկմանը:

Հայաստանի նորացված 2021-2030 թվականների NDC–ի շրջանակներում ջերմոցային գազերը 1990 թվականի մակարդակի համեմատ 40%-ով նվազեցնելու համար խնդրադրվել է նաև անտառային տնտեսության ավելի լավ կառավարման հարցը, որի առաջին փուլով նախատեսվում էր մինչև 2023 թվականը անտառային ծածկույթը հասցնել մինչև 12.9%-ի, ինչպես նաև ազգային լանդշաֆտի վերականգնման ռազմավարություն մշակել, որում ներառված կլինեն նաև մասնավոր հատվածի ներգրավումը անտառածածկ տարածքների ընդլայնման գործում: Անտառային լանդշաֆտի վերականգնման գնահատականները հիմք են հանդիսանալու և կարևոր գործոն են լինելու առաջիկայում նախատեսվող «Կանաչ Հայաստան» հարթակի համար, որը ստեղծվելու է միջազգային դոնորների, մասնավորապես՝ Համաշխարհային բանկի հետ համատեղ, աջակցելու և խթանելու է Հայաստանի «կանաչ» վերականգնումը:

Քանի որ անտառները համարվում են նաև ջրային ռեսուրսների աղբյուր և պաշար ապահովող, նոր անտառածածկերը նախատեսվում է ստեղծել հենց գետերի ջրհավաք ավազաններում: Ոլորտի փորձագետների գնահատմամբ այդ հատվածներում նախատեսվում է անտառի ծածկույթը հասցնել 25%-ի, բնակավայրերի կանաչապատ տարածքները, մեկ շնչի հաշվով պետք է հասցվեն 50 քառակուսի մետրի, իսկ քաղաքամերձ տարածքներում պետք է ապահովվի 300 քառակուսի մետր կանաչ տարածք, դաշտապաշտպան և հողապաշտպան անտառաշերտեր:

Անպառը՝ մարդկային կապիտալ

Հայաստանի գործող կառավարության օրոք պետական մակարդակով նախաձեռնվեց 10 մլն ծառի տնկման ծրագիր, որը պետք է խորհրդանշեր աշխարհով մեկ սփռված 10 մլն հային, սակայն, ինչպես հանրապետության կենսագործունեության մյուս ոլորտներում, այնպես էլ այստեղ ձախողում գրանցվեց: Հիմնավորումը համավարակն ու պատերազմն էր, սակայն ծրագիրը մինչ այդ էլ արդեն սպասվելիք տեմպերով չէր ընթանում:

Հետպատերազմյան Հայաստանում և Արցախում ստեղծված իրավիճակը, սակայն, չպետք է հետին պլան մղի բնապահպանական այս հիմնարար խնդրի լուծումը: Հանրապետության անվտանգային համա-



կարգն այսօր խաթարված է բոլոր ոլորտներում, իսկ իրավիճակի շտկումը հնարավոր է միայն խնդիրների համալիր լուծմամբ: Հնարավոր չէ միայն սպառազինվելով երկրի անվտանգություն ապահովել, վերջինս ունի մի շարք անքակտելի բաղադրիչներ: Դրանց թվում առաջնայիններից է մարդկային կապիտալը, որը շրջակա միջավայրի աղտոտվածության գերխնդրի պայմաններում, ռիսկային գործոնների ազդեցության տակ է հայտնվել: Առողջական խնդիրները, որոնք հիմնականում շրջակա միջավայրի աղտոտվածության հետևանք են, մեր օրերում առաջին պլան են մղվում:

Վիճակագրական տվյալները փաստում են, որ որոշ մահաբեր հիվանդությունների շատ ցածր մակարդակ գոյություն ունի անտառամերձ հատվածներում կամ անտառապատ տարածքներում գտնվող բնակավայրերում, բայց դրանց թիվը մեծ է անտառազուրկ տարածքներում, հատկապես խոշոր քաղաքներում, որտեղ կանաչ տարածքները ծայրահեղ քիչ են: Երևան քաղաքում, վերջին 15 տարվա ընթացքում 60%-ով աճել են չարորակ նորագոյացությունների հայտնաբերման դեպքերը, իսկ տարեկան մահացությունն ավելացել է 67%-ով, որի մեջ ինսուլտներից և ինֆարկտներից մահացածները 25% են, թոքի քաղցկեղից՝ 40%, թոքի այլ հիվանդություններից՝ 30 %-ից ավելի:

Կանաչ տարածքների ծայրահեղ պակասը բերում է մարդկային կապիտալի որակի և քանակի խնդրի՝ պետության անբավարար ռեսուրսների զգալի հատվածն ուղղելով առողջապահության ոլորտին: Հետևաբար, առողջ հասարակություն ունենալու համար անհրաժեշտ է կանաչ ու մաքուր շրջակա միջավայր, ասել է թե՝ «Կանաչ մեծ տուն», որի կառուցումը յուրաքանչյուրիս գործն է: Այն միշտ էլ գիտակցված է եղել մեր ժողովրդի կողմից և լիովին օրինաչափ է, որ ծառ տնկելու մշակույթը դարերի խորքից և ավանդաբար է եկել-հասել մեր օրեր:

«Զաքար Եոլեան «ԱՆՑԵԱԼԻ ՅՈՒՇԵՐ»» ԳԻՐՔԸ

Անի Բաբայեան
NAASR Հայկական հետազոտութիւնների ազգային ընկերակցութեան Մարտիկեանի անուան գրադարանի տնօրէն, արուեստաբան, անկախ հետազօտող. ԱՄՆ, Մասաչուսեթս

Այս գիրքը կազմել են Աղասի Ազիզեանը եւ Աշոտ Սիմոնեանը: Գիրքը գրախօսել է՝ պատմական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր Արարատ Յակոբեանը: Թերթելով գրքի առաջին մեկ-երկու էջերը նաեւ իմանում ենք, որ վերջինիս հրատարակութեան հովանաւորներն են Էլսիկ եւ Աղասի Ազիզեանները: «Լուսակն» հրատարակչութեան կողմից գիրքը լոյս է տեսել Երեւանում՝ 2023 թականի վերջերին:

Գրքում տեղ են գտել ՀՅԴ անդամ, հայ ազգային-ազատագրական պայքարի եւ Հայաստանի Առաջին Հանրապետութեան ազգային-պետական գործիչ Զաքար Եոլեանի (1882-1975) կենսագրութիւնը, նրա հրատարակած յօդուածներն ու թղթակցութիւնները, որոնք ժամանակին տպագրել են ՀՅԴ մամուլում:

Զաքար Եոլեանը ծնուել է Գորիսում, նահապետական ընտանիքում: Երիտասարդ տարիքից նա աշխատել է Բաքւի արդիւնաբերական ոլորտում, որտեղ գործուն մասնակցութիւն է ունեցել բանւորական կեանքում: Ռուսաստանի յեղափոխութեան օրերին Բաքւում գործող կուսակցութիւնների եւ խմբակցութիւնների մասնակցութեամբ կազմւում է Բանւորական Խորհուրդ: Դաշնակցութիւնը մասնակից կուսակցութիւններից մէկն էր, որի գլխաւոր ներկայացուցիչներից էր Եոլեանը: Նա իր պատասխանատու դիրքի բերումով սերտ կապեր է ունեցել ոչ միայն Բաքւի ու Զանգեզուրի ՀՅԴ ղեկավար գործիչների, այլեւ բոլշեւիկ եւ այլ հոսանքների ղեկավարների հետ:

Հայ-թաթարական ընդհարումների ժամանակ Եոլեանը ակտիւօրէն մասնակցել է Բաքւի նաւթաշրջանի Զինւորական մարմնի աշխատանքներին: Այս մարմինն է կազմակերպել նաւթաշրջանից հայ բանւորութեան ապահով հեռանալը: Հայաստանի Առաջին Հանրապետութեան շրջանում Զաքար Եոլեանը ընտրւում է խորհրդարանի պատգամաւոր եւ գործուղւում Գորիս: Հայաստանի խորհրդայնացման ժամանակ Եոլեանը Երեւանում էր, 1921 թ. Փետրուարեան ապստամբութեան պարտութիւնից յետոյ նա եւս պարտադրւած հեռանում է Հայաստանից, հաստատւելով Իրանում, նախ՝ Թաւրիզում, որից յետոյ՝ Թեհրանում, մինչեւ իր մահը:

Եոլեանն աշխատակցել է ժամանակի հայկական մամուլին: Գրքում ներառւել են նրա գրւածքները հրատարակւած հետեւեալ պարբերականներում՝ «Արեւ» (Բաքու), «Ալիք» (Թեհրան), «Գրոհ» (Բաքու), «Ժամանակ» (Թիֆլիս), «Հայրենիք» (Բոստոն), «Սիւնիք» (Գորիս), ՀՅԴ օրգան «Դրօշակ» եւ «Յեղափոխական Ալբոմ» (Բէյրութ):

Գրքում ներառւել են արխիւային նիւթեր եւ անտիպ յօդուածներ Հայաստանի Ազգային Արխիւից, Եոլեանի ընտանիքի եւ Եղիշէ Իշխանեանի ընտանեկան արխիւներից:

Նա իր գրութիւնները ստորագրել է հետեւեալ ծածկանուններով՝ *Զ.Ե.*, *Զ. Եոլեանց*, *Զ. Աշիապունի*, *Ալ. Աշիապունի*, *Ա. Աշ*-նի, *Բագուեցի*, իսկ մեծ մասամբ՝ *Ա. Աշիապունի*:

Գիրքը բաղկացած է հինգ մասից: **Առաջին մասն** ընդգրկում է ՀՅԴ ականաւոր գործիչ Աբրահամ Գիւլխանդանեանի (1875-1946) վկայութիւնը Եոլեանի մասին, գրքի կազմողներ Աղասի Ազիզյանի՝ *Երկու խօսքը*, Աշոտ Սիմոնեանի՝ *Նախաբանը* եւ Զաքար Եոլեանի համառօտ կենսագրութիւնը՝ իր տղայի Աշոտ Եոլեանի գրչով:

Երկրորդ մասի առաջին բաժինն ընդգրկում է Եոլեանի 1907-1919 թականներին լոյս տեսած յօդուածները Թիֆլիսի, Բաքւի եւ Գորիսի հայկական թերթերում: Երկրորդ բաժինը, «*Անցած Օրերի Յուշեր*» խորագրով՝ 1960-ականներին լոյս տեսած թւով քսանմէկ թղթակցութիւններն են, որոնցից մէկը՝ «***ՅՈՒՇԱՊԱՏՈՒՄ ԲԱՔԻ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ***»-ը առաջին անգամ է լոյս տեսնում: *Անցած օրերի Յուշերի* շարանը յետադարձ հայեացքով պարզ լեզւով եւ մանրամասնութեամբ ականատեսի անունից վերապատմում է իրադարձութիւնները:

Երրորդ մասը՝ «ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՕՐՕՔ», որտեղ

հետաքրքիր տեղեկութիւններ է ներկայացնում Հայաստանի Առաջին Հանրապետութեան շրջանի իրադարձութիւնների վերաբերեալ, ինչպէս՝ համաճարակը, ազատութեան համար պայքարը, Զանգեզուրի, Նախիջեւանի եւ Փետրուարի 18ի իրադարձութիւնները:

Չորրորդ մասը՝ «ՅՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ», ընդգրկում է աւելի քան քառասունհինգ կենսագրութիւններ, որոնց մեծ մասը գրի է առել նրանց մահուան առիթով: Այս բաժինը կարեւոր է այն առումով, որ Եօլեանը յայտնի կամ խոնարհ եւ մոռացած ազգային գործիչներին ներկայացնում է իր հետ ունեցած աշխատանքային յարաբերութեան փորձառութիւնից ելնելով, նկարագրելով նաեւ ժամանակի պատմական նշանակութիւն ունեցող դէպքերը:

«ՅԱՒԵԼՒԱԾՆԵՐ» խորագրով գրքի հինգերորդ մասում ներկայացուած է Զաքար Եօլեանի գրած, կամ իր մասին պաշտօնական գրութիւնները, որոնք լոյս են տեսել հայկական հրատարակութիւններում:

Գիրքը նախատեսուած է եղել աւարտել իր ընտանիքի մասին տեղեկութիւններով, սակայն գիրքը կազմողները գրքի հիմնական մասը տպագրելուց յետոյ, յայտնաբերել են «*Իրերի Դրութիւնը Զանգեզուրում*» թղթակցութիւնը Երեւանում լոյս տեսնող «Յառաջ» օրաթերթի 1919 թ. հոկտեմբերի 4-ի համարում, ուստի խախտել են գրքի նիւթերի դասաւորութիւնը եւ այս յօդուածով էլ աւարտել են գիրքը:

Գիրքն ունի անձնանունների եւ տեղանունների առանձին ցանկեր, որոնք մեծապէս դիւրացնում են գրքի ընկալումը:

Զաքար Եօլեանն իր ժամանակի դէմքերն ու դէպքերը մատուցում է պարզ լեզուով, իսկ գրքի հարուստ ծանօթագրութիւնների (շուրջ 350) շնորհիւ այն դառնում է առաւել ընդգրկուն, եւ հասկանալի:

Եօլեանի պարզ թղթակցութիւնները կարեւոր աղբիւր են 1900-ականների Բաքուի հայկական համայնքի կեանքի մասին, ինչպէս՝ տեղեկութիւնները նաւթային ընկերութիւնում աշխատողների աշխատավարձերի աւելացման, մշակութային ձեռնարկների, հասարակական կազմակերպութիւնների մասին եւ այլն:

Յատկանշական են այն թղթակցութիւնները, որոնցում նկարագրւում են Ռուսական մեծ յեղափոխութեան արդիւնքը, Կովկասում հայ-թաթարական ընդհարումները, եւ Կովկասի հայկական շրջանակների հայալքումը այդ տարիներին: «**Բաքուի Գաղթականութիւնը Պարսկաստանում**» յօդուածում մանրամասնութեամբ նկարագրւում է Բաքուի գրաւումը 1918-ի սեպտեմբերի 15-ին, հայերի նահանջը դէպի Պարսկաստանի Էնզելի նաւահանգիստը եւ ՀՅԴ-ի դերակատարութիւնը գաղթականներին սովից փրկելու գործում: Հետաքրքիր դրւագ է ներկայացնում ՀՅԴ եւ Մ. Քիւչիւք Խանի հանդիպման մասին: Այստեղ նկարագրում է նաեւ ՀՅԴ հիմնադիր Ռոստոմի մարդկային նուիրուած նկարագիրը եւ ներկայութիւնը այդ օրերի իրադարձությունների շրջագծում:

Ինչպէս Ա. Ազիզեանն ընդգծում է «ԵՐԿՈՒ ԽՕՍՔ-ում», Եօլեանը լինելով ժամանակի կարեւոր քաղաքա-

կան անցուդարձերի ականատեսը, երրորդ դէմքով հաւաստիութեամբ է նկարագրում իրադարձութիւնները: Այս ոճն արտացոլում է Եօլեանի նուիրուած եւ համեստ նկարագիրը:

Այս աշխատութիւնը նոր լոյս է սփռում Բաքուի, Գորիսի եւ ընդհանրապէս Սիւնիքի 1900-1919 թթ. դէպքերի անյայտ կամ մոռացութեան մատնուած իրադարձութիւնների եւ դէմքերի վրայ: Եօլեանը լինելով ՀՅԴ գործիչ, բոլոր ճակատագրական դէպքերի ընթացքում ստանձնել է պատասխանատու պարտականութիւններ: Որպէս ականատես անաչառօրէն նկարագրում, պարզաբանում եւ հասկանալի է դարձնում իր ժամանակի իրադարձութիւնները: Նա կարեւոր տեղեկութիւններ է հաղորդում Բաքուի հայ համայնքի մասին: Ուշագրաւ են նրա վկայութիւնները Ստեփան Շահումեանի գլխաւորութեամբ բոլշեւիկների ազգադաւ գործունէութեան վերաբերեալ: Պատմաբանների համար սա կարելի է համարել եզակի գրականութիւն վերարժեւորելու համար Խորհրդային պատմաբանների կողմից խեղաթիւրած եւ պատւէրով գրուած պատմութեան էջերը:

Դրանով հանդերձ, որ գիրքը ներկայացնում է 1907-1920-ականները, բայց արդիական է այն առումով, որ այն լոյս է տեսել պատմական այնպիսի ժամանակահատուածում, երբ ականատես ենք քառասունչորսօրեայ պատերազմի հետեւանքներին, Արցախի հայաթափման եւ Սիւնիքի լինել-չլինելու ճակատագրական իրադարձութիւններին:

Զաքար Եօլեանը, պարտադրուած լինելով իր կեանքի մեծ մասը անցկացնել հայրենիքից հեռու, տարագրութեան մէջ, շարունակեց իր պայքարը՝ պատմութեանը յանձնելով պատմագրական կարեւոր էջեր:

Ողջունելի է *«Զաքար Եօլեան ԱՆՑԵԱԼԻ ՅՈՒՇԵՐ»* գրքի լոյս ընծայումը, որը նոր հաւաստի աղբիւրագիտական հիմք է պատմաբանների համար, ինչպէս եւ հետաքրքրութեամբ կընթերցի պարզ ընթերցողի կողմից: ■

Պատկանելութիւնը՝ հիմքը երջանկութեան

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ
Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»-ի ու «Հորիզոն գրական»-ի աւագ խմբագիր

Երջանկութեան մասին մտածողներ իրարմէ յաճախ շատ տարբեր մօտեցումներ արտայայտած են: Վերջերս կարդացած գիրքերէս մէկուն մէջ հանդիպեցայ այն գաղափարին, թէ բոլոր առարկայական ազդակներէն անդին, այսինքն՝ նիւթական հարստութենէն, կեանքի հանգիստ պայմաններէն, ընտանեկան բարօր կեցութենէն եւ ամեն տեսակի այլ յարմարութիւններէն ալ աւելի պատկանելութեան զգացո՛ւմն է, որ երջանկութիւն կը պատճառէ:

Եւ մտածեցի, թէ որքա՛ն ճշմարիտ է այդ նաեւ իմ պարագային եւ ոչ միայն ի՛մ պարագային: Պատկանելութիւնը, ի հարկէ, կրնայ ըլլալ տարբեր մակարդակներու վրայ եւ տարբեր շրջանակներու առնչուած:

Ամենէն ստորին ու ամենէն ամուր պատկանելութիւնը անկասկած անմիջական ընտանիքին կը վերաբերի, անկէ ետք կու գայ գերդաստանը, ապա՝ համայնքը, շրջապատը, ասպարէզը եւ այսպէս մինչեւ երկիրը (կամ ազգը) եւ մարդկութիւնը: Անկասկած ասոնք գիտցուած իրողութիւններ են, եւ նպատակս չէ այս բոլորին մասին խօսիլ ու զանոնք վերլուծել:

Բայց կայ պատկանելութեան բոլորովին ուրիշ տեսակ մը, որ աւելի վերացական է եւ որ կրնայ հանդիսանալ ամենէն աւելի գոհութիւն, գոհունակութիւն, բաւարարութիւն պատճառել, ուստի եւ ամենէն աւելի երջանկացնել մարդը: Այդ պատկանելութիւնն է կրօնքի մը, հաւատամքի մը թէ գաղափարապաշտութեան մը: Այսինքն՝ գաղափարի մը պատկանելութիւնը, գաղափարակա՛ն պատկանելութիւնը:

Ա՛յդ է, որ իմաստ մը կու տայ մարդու կեանքին, աւելի վե՛հ իմաստ մը՝ քան պարզապէս առօրեայ կեանքը հանգիստ վայելելու ձգտումը:

Ինծի եւ ինծի նման շատերու համար այդ գաղափարականը Դաշնակցութեան գաղափարաբանութիւնն է՝ դաշնակցականութիւնը, որ իմ ժառանգած մեծագոյն հարստութիւնն է: Այո, բառացիօրէն ժառանգած, քանի որ ան ինծի փոխանցուած է առաջին հերթին մեծծնողներէս, ապա ծնողներէս: Մեր տունէն, տան պատերէ՛ն իսկ, ուր տեւական ներկայութիւն էին ՀՅԴ զինանշանն ու դրօշակը, հերոսներու նկարները: Եւ անպայման՝ Եռագոյնը: Կարելի՞ է, նման պայմաններու մէջ ծնունդ առնել ու հասակ նետել առանց ազդուելու, առանց նոյնիսկ անգիտակցաբար ներծծելէ այդ գաղափարաբանութիւնը: Այո, կրնայի այլ տան մը մէջ ծնած ըլլալ, գուցէ այլ գաղափարական ազդեցութիւն մը կրած ըլլալ մանկութեանս, կամ որեւէ ազդեցութիւն ստացած չըլլալ, բայց եւ այնպէս դաշնակցական դարձած ըլլալ: Ուրիշ ճամբով՝ միայն սեփական ճիգերով հոն հասած ըլլալ: Կամ որեւէ այլ կուսակցութեան պատկանիլ, կամ ոչ մէկ կուսակցութեան պատկանիլ: Ատոնք այլ հնարաւորութիւններ են, որոնք կրնան այլոց կեցուածքները բացատրել: Իմս այդպէս չէ՛ եղած:

Գուցէ ա՛յդ է պատճառը, որ մարդիկ կրնան զիս մոլեռանդ կամ կոյր կուսակցական նկատել: Անկասկած կը սխալին չարաչար, քանի որ ընտանեկան այդ ազդեցութենէն անդին ստացած կրթութիւնս (ազգային, բայց ոչ կուսակցական դպրոցի մը մէջ), հասարակական կեանքին մասնակցութիւնս ու երիտասարդական փորձառութիւնս, մանաւանդ ընթերցումներս ամրակայած են իմ մէջ համոզումներս ու առաջնորդած զիս դէպի կուսակցութեան շարքերը:

Թէ այդ շարքերը կրնան անթերի չըլլալ եւ ե՛ն, թէ բազմաթիւ պակասներ, թերացումներ հոն կրնան առկայ ըլլալ եւ ե՛ն, թէ յաճախ մեզի կը պակսին անհրաժեշտ մարդկային ու նիւթական ուժերը, թէ երբեմն կամ յաճախ սխալ որոշումներ կրնան տրուիլ ու կը տրուին, թէ մեր ճիգերը կրնան արդիւնաւէտ չըլլալ եւ միշտ չէ, որ են, եւ թէ այսպիսի մտահոգութիւններ, մեղադրանքներ կամ ամբաստանութիւններ կրնանք լսել ներսէն եւ դուրսէն՝ շարքերէն թէ հանրութենէն, Սփիւռքէն թէ հայրենիքէն, եւ թէ այդ ըսուածներ իրականութեան համապատասխանեն կամ ոչ, իրթա մը չեն խախտեր հաւատքս մեր գաղափարականին նկատմամբ: Այդ գաղափարականով առաջնորդուած եմ ամբողջ կեանքս՝ սեփական թէ հաւաքական մակարդակի վրայ, եւ ամբողջ հասարակական գործունէութիւնս, որքան ալ համեստ եղած ըլլայ ան, իր բոլոր երեսներով՝ հրապարակագրական, կազմակերպական, կրթական-մշակութային թէ այլ, մեկնած է այդ գաղափարականէն: Սա ոչ մոլեռանդութիւն թող նկատուի, ոչ ալ կուրութիւն: Չեմ ժխտեր այլոց իրաւունքներն ու մօտեցումներն իրենց կեանքը դասաւորելու տեսակէտէն, հաւաքականութեան ծառայելու կամ չծառայելու տեսակէտէն, Դաշնակցութեան կամ որեւէ այլ կազմակերպութեան գործունէութիւնը ընդունելու կամ մերժելու տեսակէտէն: Այլեւ՝ իբր դաշնակցական իմ կատարածն ու չկատարածը գնահատելու կամ քննադատելու կապակցաբար, մանաւանդ քննադատելու:

Ինծի համար, սակայն, դաշնակցականութիւնն է, որ զիս կը կապէ ազգիս անցեալին, լեզուիս, մշակոյթիս ու Դատիս պաշտպանութեան Գործին, կ՚առնչէ Հայրենիքիս ներկային ու մանաւանդ ապագային եւ ի վերջոյ մարդկութեա՛ն ապագային: Եւ, հետեւաբար, ես երջանիկ եմ դաշնակցական ըլլալով: Եւ վստահ եմ՝ ո՛չ միայն ես:

Երջանկութիւնս Դաշնակցութեան պատկանելուս մէջ կը տեսնեմ: ■



Գարեգին Նժդեհ

ԱՄԵՐԻԿԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ
ՅԵՂԸ ԵՒ ԻՐ ՏԱԿԱՆՔԸ
(հատուածներ)

...Պայքա՛ր, որի մէջ պարզուեց որ մեր ժողովրդի մէջ դեռ կան օտարահակ տարրեր, որոնք մեզ հետ չէին երէկ, երբ ազգայնական հայութիւնը աստուածային խոյանքով ոչինչէն Հայաստան ստեղծեց. Մեզ հետ չեն այսօր, մեզ հետ չեն լինի և՛ վաղը: Եւ որ վաղը, երբ արտաքին վտանգը Հայաստանի դռները զարկեց, այդ անդրօշակ տարրերը մեծապէս պիտի վտանգեն մեր քաղաքա-հոգեբանական թիկունքը:

Մե՛զ, ապա ուրեմն, մեզ կը մնայ կրկնապատկել մեր արթնութիւնը ամենավճռական դիրքաւորմամբ:

Ինչո՞վ կը վերջանայ այդ պայքարը, որն այլևս վերածուած է կատարեալ դրօշամարտի: Ո՞վ կը զարնուի այս պայքարի մէջ և ո՞վ կը յաղթանակի: Անտեղի՛ հարց. Հակադաշնակցական դիրտից զատ ո՞վ չգիտէ, որ երբ կռիւը դրօշակի շուրջն է, յաջողութեան աստվածուհին միշտ էլ պսակադրում է դրօշակակիրի ճակատը:

Դրօշամարտում մի՛շտ էլ դրօշակիրն է յաղթում:

Վախի քարոզչութիւն

Դրօշապաշտ հայութեան բոլոր ոգորումները հակադաշնակցականին թւում են արկածախնդրութիւն: Թուրքի հետ չափուելու միտքը նա համարում է յիմարութիւն, այսինքն՝ ի յառաջագունէ ընդունում է որ հայն անխուսափելիօրէն պիտի պարտուի: Անարի է նա. Իսկ նմանի ամբողջ իմաստութիւնը խտանում է մի՛ բառի մէջ – Վա՛խ: Իր հասկացած հայութեան ինքնապաշտպանութեան միակ միջոցը նա համարում է վախի քարոզչութիւնը, առանց գիտակցելու թէ դրանով հայութիւնը նախապատրաստում է նորանոր պարտութիւնների համար:

Քաղաքական անբարոյականութիւն

Ամէն վախկոտ կենսաբանօրէն անբարոյական է: Նմանի համար քաղաքական անբարոյականութիւնը բնական օրէնք է: Հակադաշնակցականը գիտէ թէ՝ եռագոյնը նաև նահատակ Հայաստանի ուրուականն է, որից թուրքը չի կարող չանհանգստանալ: Վերջինին, սակայն, այս մղձաւանջից ազատելու համար՝ ռամկավարը ոչ միայն Եռագոյնի խորհուրդն է ծաղրում, այլ և ճգնում է մոռացութեան տալ Հայաստանի նահատակութեան յիշողութիւնը՝ փորձելով յաչս մարդկութեան արդարացնել թուրքը:

Դավաճանութիւն

Անհայրենիք դարձած մի ժողովրդի համար չկա՛յ աւելի բարձր և նուիրական նպատակ, քան իր հայրենիքի՝ իր յավիտենական սեփականութեան վերստացումը: Ուրանալով Եռագոյնի խորհուրդը, հակադաշնակցականը բնականօրէն հոգեկցում է բոլոր այն տարրերին, որոնք դէմ են Հայաստանի վերականգնումի իդեալին, այսինքն՝ բաժանում է թշնամու տեսակէտը մեր ցեղի ճակատագրի նկատմամբ: Իսկ ընդհանուր տեսակէտ ունենալ արտաքին թշնամու հետ՝ նշանակում է ներքին հակասութեան մէջ գտնուել իր ցեղի հետ: Այս հակասութիւնն է ահա ակնաղբիւրը բարոյական այն սոսկալի անկումի, որ կոչւում է դավաճանութիւն: Այո՛, ինչպէս տեսնում ՝ էք չի կարելի հակադաշնակցական լինել առանց դավաճան լինելու:

ՍՈՖԻԱ 1935

1897 թ. հուլիսի 25-27-ին տեղի ունեցավ
Խանասորի հաղթական արշավանքը

ԴՐՕՇԱԿ